



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԵՐԳԱՐԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Հրատարակու թիւն
ՀԱՅ ԳԱՂԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ



ՆԻՒ ԵՈՐԲ
1917

243
Ե. 77

(S.K. Sr.)

Վ
կ 990

243
կ-99

891 99-192

784.55
[2] 9.10
COP

2013

ՏԷՐ, ՈՂՈՐՄԵԱ



2011

ՏԷՐ, ողորմեա, եւայլն:
Արի՛, Աստուած հարցն մերոց.
Որ ապաւէնդ եւ նեղելոց.
Հա՛ս յօգնութիւն ծառայից քոց,
Լե՛ր պահապան ազգիս Հայոց:
ՏԷ՛ր, ողորմեա
ՏԷ՛ր, ողորմեա
Յիսուս Քրիստոս
Մեզ ողորմեա՛:

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Եւ հիւանդաց բժշկութիւն,
Ազգիս Հայոց ազատութիւն:
ՏԷ՛ր, ողորմեա, եւայլն:

132371

ԱՂՈԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն
քո. եկեացէ արքայութիւն քո. եղիցի կամք քո որ-
պէս յերկինս եւ յերկրի: Զից մեր համապագորդ՝
սուր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս
եւ մեք թողունք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տա-
միր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ:
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յա-
րիտեանս. Ամեն:

ՍՈՒՐԵ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

370



ԵՐԳԱՐԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ


ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԿԱՂԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐԲ

1917

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Աս երգարանը կը հրատարակենք այն հաւատ-
քով թէ Հայ ժողովուրդին կրօնական կեանքին մէջ
կարեւոր պէտք մը պիտի լեցնէ ան:

Փափաքելի է որ մեր երիտասարդները երգը սի-
րեն եւ երգել սորվին, քանզի երգը հոգիին կը խօսի,
եւ երգելը սրտին կազդուցը կուտայ:

Մասնաւոր ջանք մը ըրած ենք աս երգարանին
միջոցով ծանօթացնել Հայ երիտասարդներու Անգ-
լիերէն այն ոգեւորիչ երգերը որ առհասարակ կ'եր-
գուին Ամերիկեան երիտասարդաց քրիստոնէական
ընկերութեան եւ այդ կարգի ժողովներուն մէջ:

Ասոր հետ մէկտեղ կարեւոր սեպեցինք Հայ ե-
կեղեցւոյ շարահաններէն եւ հոգեւոր երգերէն բա-
ւական թուով դնել սոյն երգարանին մէջ որպէսզի
ժողովուրդին մէջ ընդհանրանայ անոնց երգեցողու-
թիւնը, որով մեր հայրերուն հոգին պիտի ապրի նոր
սերունդին մէջ:

Տեղ տուած ենք նաեւ ազգային հատընտիր եր-
գերու, վասնզի մեր համոզումն է թէ կրօնական
կեանքը անուցանելու հետ մէկտեղ պէտք է մշակել
նաեւ մեր երիտասարդներուն մէջ ազգային ոգին,
որպէսզի կարելի ըլլայ պատրաստուիլ ազգին համար
ճշմարիտ քրիստոնէաց եւ ճշմարտապէս հայրենասէր
Հայ երիտասարդներ:



563-2011

ՕՐՀՆԵՐԳ

1. ԱՌԱՒՈՏ ԼՈՒՍՈՅ

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛ւ:
Բղխուծն ՚ի Հօրէ,
Բղխեա՛ ՚ի Հոգւոյս,
Բան քեզ ՚ի Հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գլտող զիս արա:
Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բա՛ց,
Դասեցո՛ վերնոցն:

Երբեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա՛ւ:
Զարթի՛ր Տէր, չօգնել
Զարթո՛ զթճրեալս,
Զուարթնոց նմանիլ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա՛ւ,
Սիրտ իմ քարեղէն:
Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերստին կեցո՛ւ:

Յօղ արեան քո, Տէր,
Յօղեա ի Հոգիս,
Յնձասցէ անձն իմ:
Իւժեալքս մեղօք,
Իլիժեալ աղաչեմ
Իլուսել ինձ բարիս:

Փըրկիչ բոլորից,
Փութա զիս փըրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ չանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս,
Քեզ երգել ըզիսուս:

2. ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Փա՛ռք 'ի բարձունս Աստուծոյ. եւ չերկիր խա-
ղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն:

Եւ օրհնութի՛ւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես
Տէր Աստուած մեր. օրհնե՛մք զքեզ եւ դովեմք զքեզ:
Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիրսդադանեմք
քեզ. փառաւորեմք զքեզ. դոհանամք Տէ՛ր զքէն, վա-
սըն մեծի փառաց քոց:

Տէ՛ր թագաւոր Սուրբդ երկնային, Աստուած
եւ Հայր ամենակալ:

Տէր եւ Որդի Հօր Միածին Յիսուս Քրիստոս եւ
Սուրբ Որդի:

Տէր Աստուած Գառն Աստուծոյ եւ Որդի Հօր.
որ առեր զմարմինս՛ի Կուսէն:

Ողորմեցար, բարձեր զմեզս աշխարհի. եւ արդ
ընկա՛լ զաղաչանս մեր:

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց
մեզ:

Զի դու միա՛ջն սուրբ, դու միա՛ջն բարձրեալ ես,
դու միա՛ջն Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Տէ՛ր եւ Հոգիդ Սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ
Հօր. Ամէն:

3. ԵՐԳ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Փառք քեզ, Բարձրեալ Աստուած երկնաւոր,
Քեւ Հրճուին միտք մեր, քեւ մեր սիրտք բոլոր.

Դո՛ւ միայն Հաստիչ մշտնջենաւոր,
Զիք մեր այլ Աստուած, դո՛ւ միայն Հզօր

Ըղբեզ ո՞ ետես, այլ մեր ճանաչեմք,
Զի ի քէն եղեաք, քեւ կեամք, քեւ շնչեմք

Առանց Արարչիդ խնամոց ոչ ինչ եմք,
Պահեա՛ զմեզ, Տէր, զքեզ աղաչեմք:

4. ՍՈՐՐԲ, ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ

Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց,
Լի՛ են երկինք եւ երկիր փառօք քո. Օրհնութի՛ւն 'ի
բարձունս, Օրհնեա՛լ որ եկիր եւ դալոցդ ես Անուամբ
Տեառն:

Ո՛վսաննա 'ի բարձունս:

Հա՛յր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր 'ի մաշ
վանս մեր՝ պարտապան պարտեաց մերոց Հեղմամբ
Արեան Նորա աղաչեմք զքեզ, ողորմեա՛ քո բանաւոր
Հօտի:

Յամենայնի օրհնեա՛լ ես, Տէ՛ր. օրհնեմք զքեզ.
դովեմք զքեզ. դոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր
Աստուած մեր:

Որդի՛ Աստուծոյ, որ պատարագեալ Հօր 'ի
հաշտութիւն, Հաց կենաց բաշխիս 'ի մեզ. Հեղմամբ
Արեան Քո սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա՛ Ար-
եամբ քով փրկեալ Հօտի:

5. ԵՐԳ ԻԿՂԱԲԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ. 'ի չայսմ Հետէ,
մինչեւ 'ի չաւիտեան:

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, եւ օրհնեցէ՛ք զա-
նուն Տեառն:

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ չայսմ Հետէ մին-
չեւ 'ի չաւիտեան:

Յարեւելից մինչ 'ի մուտս արեւու օրհնեալ է
անուն Տեառն. 'ի չայսմ Հետէ մինչեւ 'ի չաւիտեան:

Փա՛ռք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ
Սրբոյ Հոգւոյն. Եւ այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չա-
ւիտենից. Ամէն. Ի չայսմ Հետէ մինչեւ 'ի չաւիտեան:

6. ՆՈՐԱՍՏԵՂԾԵԱԼ

Նորաստեղծեալ բանն չանէից
 Ի սկզբբանէ զերկինս երկնից.
 Եւ զերկնային զօրս անձարմնոց
 Իմանալեացն զըւարթնոց.
 Եւ զգալի տարերց քառից
 Հակառակաց միարանից.
 Որով չաւէտ փառաբանի.
 Երրորդութիւնն անձառելի:

Երեքսրբեան Մի Տերութիւն
 Միով բնութեամբ Աստուածութիւն,
 Լոյսն որ անեղ արարչական
 Ասաց լինել լոյս եղական.
 Ձոր եւ ծագեաց չօրն առաջին
 Միաշարաթ կիւրակէին. — Որով:

Բարունօրէն բացատրեսցուք,
 Ձծածկեալ խորհուրդն ծանիցուք
 Ձի լոյսն անտես իմանալի,
 Մաքուր Հոգւոց տեսանելի.
 Ի սոյն ծագեաց միաշարաթ
 Մեղ չարութեան սուրբ ճառագայթ.
 Եկա՛յք փրկեալք, ընդ Ձուարթնոյն
 Տուք օրհնութիւն Յարուցելոյն:

Սէրբդ սիրով խոնարհեցար,
 Ի փրկութիւն մեր մարմնացար.
 Նովին մարմնովքն խաչեցար,
 Ի գերեզման մահու եղար.
 Այսօր Յարեար աստուածաբար
 Ի հրեշտակաց քարոզեցար. — Եկա՛յք.

Երեւեցար խնկաբերիցն
 Յողջոյն կենաց ուրախալից.
 Եւ ՚ի լերիննն Գալիլիա
 Առաքելոց մետասանից.
 Արժանացո՛ղ զմեզ ընդնոսին
 Ձքեղ տեսանել չօրըն վերջին. — Եկա՛յք.

Սիովնի որդիք, զարթի՛ք,
 Հարսին լուսոյ տո՛ւք աւետիք,
 Եթէ փեսայն քո չարուցեալ
 Յաղթեաց մահու իշխանութեամբ.
 Գայ պսակէ ըզքեզ փառօք
 Ե՛լ ընդ առաջ պճնեալ զարդուք.
 Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն,
 Նննջեցելոց կենաց պտղոյն:

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ

7. ՊԱՇՏԵՑԷՔ ԶՏԵՐ

Փա՛ռք Հօրդ Աստուծոյ,
 Արդար, սուրբ եւ անաչառ,
 Սէրդ անգրաւ եւ միշտ վառ,
 Գըթած, ողորմած, անձառ:
 Կրկ. Երգենք արդ ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,
 Պաշտենք ճշմարտութեամբ եւ Հոգւով մեր
 սրտերէն:

Փա՛ռք Բանդ Աստուծոյ,
 Օրհնեալ մեր Փրկիչ եւ Տէր.
 Մեղ աչնբան եղաւ քո սէր,
 Մինչ իսկ մեռնիլ չանձն առեր:
 Կրկ. Երգենք արդ ալէլուի, եւալն:

Թարգմ. Ա. Մ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

8. ԶԱՐԹԻՔ

Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք եւ ես զարթեացց
առաւօտուց. Ալէլուիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք Վերի-
նըն Սիօնի. Ալէլուիա:

Զարթի՛ք, որդիք լուսոյ, ՚ի չօրհնութիւն Հօրն
Լուսոյ. Ալէլուիա:

Զարթի՛ք, փրկեալք արեամբ եւ դուք ըզփառս
փրկողին. Ալէլուիա:

Զարթի՛ք, նոր ժողովուրդք, նոր երգս առեալ
նորոգողին. Ալէլուիա:

Զարթի՛ք, երկրպագուք եւ արտասուօք զայս
ասացուք. Ալէլուիա:

Զարթի՛ր ընդէ՞ր ննջես, Տէ՛ր, մի՛ մերժեր զմեզ
իսպառ:

Արի՛, Տէ՛ր, օգնեա մեզ, տացուք անուանդ
քում զփառս:

Այժմ եւ չաւէտ, Հօր եւ Որդուց եւ Սուրբ Հոգ-
ուցն, Ամէն:

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ

9. ՇԱՐԱԿԱՆ

Որ անբաւելի չաղթող զօրութիւն, թաղաւոր ես
երկնի եւ երկրի, Քրիստոս Աստուծոյ օրհնաբանեմք
զքեզ:

Որ փառակցութեամբ ընդ Հօր վեր օրհնիս ան-
մահից, եւ խոնարհեալ մարմին զդեցար փառաց թա-
գաւոր, օրհնաբանեմք զքեզ:

Որ կարողապէս զմահ կոխեցեր եւ չարուցեալ
լուսաւորեցեր Սբ. զեկեղեցի անմահ էութիւն, օրհ-
նաբանեմք զքեզ:

10. ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՐԳ

Լո՛յս, արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակեալք
՚ի լոյս յանմատոց, Հա՛յր երկնաւոր՝ ՚ի դասուց լու-
սեղինացն օրհնեալ. ՚ի ծագել լուսոյ առաւօտուս,
ծագեա՛ ՚ի հողիս մեր ըզլոյս քո իմանալի:

Լո՛յս ՚ի լուսոյ ծագումն արեգակն արդար, ան-
ճառ ծնունդ Հօր՝ Որդի. չառջ քան զարեւ անուն
քո գովեալ ընդ Հօր. ՚ի ծագել լուսոյ:

Լո՛յս, ՚ի Հօրէ Բղխումն աղբիւր բարութեան,
Հոգի՛դ Սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցուց ընդ
հրեշտակս ըզքեզ բարեբանեն. ՚ի ծագել լուսոյ:

Լո՛յս, Երրեակ եւ Մի անբաժանելի սուրբ Եր-
րորդութիւն. ըզքեզ ընդ երկնայնոցն երկրածինքըս
միշտ փառաւորեմք, ՚ի ծագել լուսոյ առաւօտուս
ծագեա՛ ՚ի հողիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՛յս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկ-
նաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս:

Եկեալքս ՚ի մտանել արեգականն, տեսաք զլոյս
երեկոյիս: Օրհնեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հո-
գիդ Աստուծոյ: Եւ ամենեքեան ասեմք. Ամէն: Ար-
ժանաւորեա՛ զմեզ չամենայն ժամ, օրհնել ձայնիւ
երգով՝ զԱնուն փառաց Ամենասուրբ Երրորդութեա-
նըդ. Որ տայ ըզկենդանութիւն, վասն որոյ եւ աշ-
խարհս զքեզ փառաւորէ:

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ



12. ԱԼԷԼՈՒԻԱ ԽԱԶԻԴ

“Halleluja for the Cross”

Փոթորկէն աննկուն
 Ալէլուիա, Ալէլուիա
 Կանգնի խաչն հաստատուն,
 Ալէլուիա, Ալէլուիա
 Փշեն թող շունչ դժոխական,
 Եւ բորբոքին հեռ ճարդկան,
 Խաչն սակաչն ճնայ չաղթական:
 Ալէլուիա փառք Խաչին
 Ալէլուիա, Ալէլուիա,
 Ալէլուիա փառք Խաչին
 Ալէլուիա, Ալէլուիա
 Միշտ պիտ' փայլի Խաչն Փրկչին:

Վաղեմի խաչն է այն
 Ալէլուիա, Ալէլուիա
 Գովենք զայն ձեծածայն,
 Ալէլուիա, Ալէլուիա,
 Սէրն Աստուծոյ անդ փայլի,
 Յանձին որդւոյն երանելի,
 Քաւիչ ձեղաց մեր եղկելի:
 Ալէլուիա փառք Խաչին, եւայլն:

Մեր պարտքը հոն վճարուեցաւ,
 Ալէլուիա, Ալէլուիա
 Մեր մեղքն Յիսուս ուսին բարձաւ,
 Ալէլուիա, Ալէլուիա
 Ուստի Խաչին շուրջ փառարան,
 Կ'երգենք զՔրիստոս մեր ընծան,
 Մեր կենդանի Սէր, Արքան:
 Ալէլուիա փառք Խաչին, եւայլն:

Թարգմ. (ՏԻԿ.) Ս. ՇԻՐՎԱՆԵԱՆ

ՄԱՂԹԱՆՔ

11. ՏԱՐ ԶԻՍ Ո՛Վ ՔԱՂՅՐ ԼՈՅՍ

“Lead Kindly Light”

Լուս բարերար, տիրող մէզին մէջէն
 Դուն զիս ուղղէ.
 Մութ է գիշերն, եւ ես հեռու՝ տունէն,
 Զիս հոն ուղղէ:
 Պահէ քայլերս, խընդիրքս չէ բընաւ
 Տեսնել հեռուն. ինձի մէկ քայլ է բաւ:
 Այսպէս չէի միշտ. ես չէի խնդրեր
 Որ զիս ուղղես.
 Ի՞նչ ելքս ու մուտքս ես կ'ընտրէի, բաց արդ
 Դո՛ւն զիս ուղղէ.
 Շէն օր սիրող, անվախ եւ անտարբեր,
 Կամքս էր հըստարտ. անցեալս մի՛ չիշեր:
 Քու աջդ հըզօր օրհնած է ցարդ, եւ դեռ
 Զիս պիտ' ուղղէ
 Ժպտին, ճահճին վրայէն՝ խոր ստուերներ
 Մինչեւ քաջուին,
 Եւ հեռ աչգուն ժպտին ի՞նչ սիրելիք,
 Զորս կորուսեր էի ես մէկ պահիկ:

Թրգմ. Յ. ՄԱՏԹԷՍՏԵԱՆ

13. ՏԷՐ ԻՆՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ

“Savior lead me”

Տէր, ինձի առաջնորդէ,
Որ չը մոլորիմ քեզմէ.

Խաւարին է իմ ճամբան

Տէր, սիրովդ եղիր պաշտպան:

Տէր իմ, Տէր իմ

Տէր, ինձի առաջնորդէ,

Միշտ սիրովդ ճամբաս ուղղէ,

Ամէն օր ձեռքէս բռնէ:

Դուն Հոգւոյս լեր ապաստան,

Երբ ցաւոց ալիք դուռան,

Ապահով եմ, Տէր, քու քով,

Կեանք անդորր ունիմ քեզմով:

Տէր իմ, Տէր իմ, եւ այլն:

Տէր Յիուս, ուղղիչ կենաց

Ձիս Հասցուր երկիրն փառաց.

Հոն երգեմ երգ չաղթութեան:

Քեզ դովեմ, ես չաւիտեան:

Տէր իմ, Տէր իմ, եւ այլն:

14. ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

Տէ՛ր, կեցո դու զհայս

Եւ արա զնոսա պաշտառս,

Կեցո զհայս:

Ձողորմութիւնդ վերին

Հաճեաց ձօնել նոցին.

Ձի նովաւ մարդասցին.

Ապրիլ չաստիս:

Ով Տէր մեր, Տէր փութա՛
Ձազդ մեր Համայն փրկեա՛
Ի թշնամեաց:

Կափո՛ դաչս նոցուն
Հատ զարմատոցն զբուն
Եւ զազդ մեր պարտասուն
Արա հօր:

Ի քո իջեալ տեղի
Ձաթո՞ Հայրապետի
Մեր Հաստատեա:

Ձերկարութիւն կենաց
Հօր մեր աստուազեաց
Շնորհեա պետին մեր հարց,
Որ զմեզ Հովուէ:

Աջովդ Համատարած
Ձազդ մեր արտահալած
Փոյթ դումարեա:

Յաշխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան
Որ այժմ է սեփական,
Օտար ազգաց:

Առաքեա ի բարձանց
Ձհամակրութիւն կամաց
Ի մերազնեաց:

Ձոմն ի մէնջ չարո՛
Պաշտպան ազգի մերոց,
Տուր նմա ցուպ հուժկու.
Հովուէլ զմեզ:

Մ. Գ. ԹԱՂԻԱԴԵԱՆՅ

15. ՏԷՐ ԻՆՉԱԿԵԱ ՈՐ ԿՈՒՉԵՍ

Տէր, ինչպէս որ կ'ուզես.
 Քու կամքըդ իմս ընեմ.
 Սիրոյ ձեռացըդ մէջ
 Ամէն բան կը յանձնեմ.
 Առաջնորդէ ինձի,
 Ընտրէ ինձի ճամբաց.
 Թող միշտ սրտանց երգեմ,
 «Քու կամքըդ, Տէր, ըլլայ:»

Տէր, ինչպէս որ կ'ուզես.
 Թէ տաս ուրախութիւն,
 Թէ լաւագոյն սեպես
 Վիշտ, ցաւ ու նեղութիւն,
 Եւ արտասուաց մէջէն
 Թէ աստղըս երեւնայ,
 Թող չոչըս չըմարի.
 «Քու կամքըդ, Տէր, ըլլայ:»

Տէր, ինչպէս որ կ'ուզես.
 Ինչ որ ըլլայ վիճակս,
 Զիս քեզ նըման ընես,
 Ըլլաս իմ օրինակս.
 Երկրիս վրայ դուն լացիր,
 Ծառադ ալ հոս թող լայ,
 Միայն թէ հետս եղիր.
 «Քու կամքըդ, Տէր, ըլլայ:»

Տէր, ինչպէս որ կ'ուզես.
 Դուն հետս ըլլաս. իրաւ
 Ինչ որ ալ որոշես՝
 Ինձի ամէնն է լաւ,
 Ամէն բան ապահով՝
 Ներկայ եւ ապագայ.
 Երգեմ միշտ ցնծումով,
 «Քու կամքըդ, Տէր, ըլլայ:»

16. ԽԱԶԻՆ ՄՕՏ

Տէր Յիսուս, հոգիս պահէ
 Քու խաչիդ մօտերը,
 Ուր աղբիւր մը կը հոսէ
 Իւր բուժող ջուրերը:
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Քովդ երանութիւնըս:

Խաչիդ մօտ հոգիս հասաւ,
 Տէր, ողորմութեանըդ.
 Հոն իմ շուրջըս փայլեցաւ
 Աստղ ասուտեանըդ:
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Քովդ երանութիւնըս:

Տէր, քու խաչըդ օրէ օր
 Բեր աչքիս առջեւը,
 Անդադար մընամ անոր
 Ըստուերին ներքեւը:
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Քովդ երանութիւնըս:

Մօտ խաչին ես կը սպասեմ,
 Մինչ Տէրօջը փառքը
 Հոն, գետէն անդին, տեսնեմ,
 Ոսկեղէն եզերքը:
 Տէր, քու խաչդ միշտ ընեմ
 Փառքս ու ցընծութիւնըս,
 Մինչ գետէն անդին զըտնեմ
 Քովդ երանութիւնըս:

563-2014

732371



17. ՄՈՎԱԶՍԻ ՆՄԱՆ

Մովազսի նման, որ քեզ չանդիման
 Ահ ու դողով կենար լսել
 Ձկենաստու քոյին բան,
 Ահա այսօր, Աստուած հղօր,
 Եւ մենք կեցած սուրբ աթոռիդ
 Առջեւ, համակ հէք, անղօր
 Կ'աղաչենք, Տէ՛ր, չերկնայինդ սէր
 Տուր մեզ հաղորդ լինել քնդ քեզ
 Հոգևով սրտով անձնուէր:

Թող փողք երկնային հնչեն սաստկագին
 Մեղաւորացս չուղել, շարժել
 Թմրած խիղճերն ու հոգին,
 Որոտք ահեղ, շանթք բոցահեղ
 Գոռան, փայլին, պակուցանեն
 Մեր հոգիներ սիրազեղ,
 Թող լուսավառ գրեն պաշտառ
 Մատունք ի մեր տախտակք սրտից
 Քո պատգամներ վեհ, անճառ:

Ձայն քո կենաստու, չաչմիկ ի պահու
 Ձերթ առ Ղաղար թող դայ առ մեզ
 Որ կամք ի ծոց անդ մահու,
 Թող մահարեր մեղքն ու կիրքեր
 Ցնդին բանիւդ քո կենսափիւռ,
 Ձերդ ծուխ հողմով ընդ այեր,
 Պօսէ, Հա՛յր մեր, համակ կեանք, սէր.
 Եւ մենք հոգուց թռչինք թեւով
 Յաւէտ առ քեզ դէպ ի վեր:

18. ՔԵԶԻ ԿԱՐՕՏ ԵՄ

Քեզի կարօտ եմ, Տէր,
 Ո՛հ ամէն ժամ.
 Անուշ է ձայնդ ինձի,
 Քեզի կուգամ,
 Կարօտ եմ, ո՛հ, կարօտ եմ,
 Միշտ քեզի կարօտ եմ,
 Օրհնէ զիս, ով Փըրկիչ իմ,
 Քեզի կուգամ:

Քեզի կարօտ եմ, Տէր,
 Եղիբ ներկայ.
 Երբ մօտ ըլլաս, փորձանքն
 Կը թեթեւնայ:
 Կարօտ եմ, եւայլն:

Քեզի կարօտ եմ, Տէր,
 Շուտով եկուր,
 Թէ ոչ՝ իմ կեանքս բոլոր
 Կ'անցնի ի գուր:
 Կարօտ եմ, եւայլն:

Քեզի կարօտ եմ, Տէր,
 Քո կամքդ չաչմնէ,
 Եւ քու մեծ խոստումներդ
 Ինձ կատարէ:
 Կարօտ եմ, եւայլն:

Քեզի կարօտ եմ, Տէր,
 Տէր բարերար.
 Ձիս մի թողուր, Յիսուս,
 Որք եւ անճար:
 Կարօտ եմ, եւայլն:

19. ՆՈՐՈԳՈՂ

Նորոգող տիեզերաց,
 Որ զգեցուցեր մեզ լույս փառաց,
 Արկար ըզքեւ ի գինուորաց
 Քղամիրդ կարմիր նախատանաց,
 Մերկեա չինէն ըզքուրձ մեղաց
 Ըզ տրտմագինն արեամբ ներկած.
 Եւ ըզգեցո զուրախալին
 Ըզ պատմուճանն իմ դառաջին:

Երկնաւոր Թագաւորիդ
 Ի ծունր իջեալ խաղ առնէին.
 Ծածկեալ ըզգլուխըդ կըռփէին
 Եւ եղեգամբ հարկանէին.
 Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
 Ի հնազանդել կամաց չարին՝
 Մի՛ թողուցուս խաղալ սովին,
 Այլ կանգնեսցես զիս վերլստին:

Բամեալ բոլորըդ քո մարմին
 Յետ վըճըոյ դատաւորին
 Սաստիկ էառ զհարուած գանին
 Վասըն գանից նախաստեղծին.
 Զիս, որ չտից մինչ եւ ցըբլուխ
 Յաւօք նեղիմ անհընարին,
 Առողջացո դարձեալ կըրկին,
 Որպէս շնորհօք չաւագանին:

Մըբափայլ պըճնեալ զարդուն,
 Զոր զգեցուցեր Ահարոնին,
 Փոխան պըսակ ի փշոյ եղին
 Մըշակք աջուցն Իսրայելի.
 Ըզփուշ մեղաց հանցես չինէն
 Զոր չիս եհար իմ թշնամին.
 Եւ ողջացո զխալթուած վերին,
 Զի սպիք մեղացըն ջընջեսցին:

Ն. ՇՆՈՐՀԱՒԻ

20. ԱՂՈԹՔ ԱՌԱԽՕՏՈՒ

Ո՛րվ հայր Աստուած եւ բարերար ամենից,
 Յօղեա՛ ի մեզ զցօղ լուսոյ գիտութեան,
 Աստուածոց եւ չարածամ աղօթից
 Մըմունջք խոնարհ, քեզ ի նուէր,
 Կնդրկարօյր ելցեն չեթեր:

Որդի Աստուած, պատկեր եւ լույս Հօր փառաց,
 Հաճեաց զմեօք ածել զաչացդ ակնարկի.
 Մանկականի տհաս տիոց մեր շրթաց
 Մըմունջք խոնարհ, եւայլն:

Հոգիդ Աստուած, Հօր եւ որդւոյ փառակից,
 Հայցեմք ի քէն միաբերան մեր ձայնից
 Կաթեա գշիթ շնորհաց մերոց չանդ մտաց
 Մըմունջք խոնարհ, եւայլն:

21. ՔՐԻՍՏՈՍ ԻՄէՋ ՄԵՐ

Քրիստոս ՚ի մէջ մեր չայտնեցաւ.
 Որ էնն Աստուած աստ բազմեցաւ:
 Խաղաղութեան ձայն հընչեցաւ
 Սուրբ ողջունի հրաման տուաւ,
 Եկեղեցիս մի անձ եղեւ.
 Համբուրըս չօդ լըման տուաւ:
 Թշնամութիւնն հեռացաւ.
 Մէրն չընդհանուրըս սիոնեցաւ:
 Արդ պաշտօնեա՛լք բարձեալ զձայն,
 Տո՛ւք օրհնութիւն ՚ի մի բերան.
 Միասնական Աստուածութեանն
 Որում Մէրովքէքն են սըրբարան:

22. ԵՐԲ ՓՐԿԻԶՍ ԱՆՈՒՆՍ ԿԱՐԴԱՅ

“When The Trumpet of The Lord”

Երբ Տէրով փողն հնչէ, եւ ա՛լ ժամանակներ
վերջանան.

Եւ փառաւոր, ջինջ ծաղի այգ, անվախճան:
Երբ փրկեալներ միւս կողմ ոսկի եզրին վըրայ
միանան,

Եւ Փրկիչս անունս կարդայ, հոն պիտ՝ ըլլամ:

Խմբ. Երբ Փրկիչս անունս կարդայ հոն,
Երբ Փրկիչս անունս կարդայ հոն,
Երբ Փրկիչս անունս կարդայ հոն,
Երբ Փրկիչս անունս կարդայ, հոն պիտ՝ ըլլամ:

Երբ Տէրովմով մեռեալք յառնեն անամպ առտուն
լուսածին,

Եւ մասնակցին իր Յարութեան սուրբ փառքին:
Երբ ընտրեալներ երկինքէն անդին, իրենց տուն
հաւաքուին.

Եւ Փրկիչս անունս կարդայ, ես հոն կ'ըլլամ:
Երբ Փրկիչս անունս կարդայ: Եւ այլն:

Օ՛ն ուրեմն գործեմ, մինչ ցերեկ՝ արշալույսէն
մայրամուտ,

Պատմեմ Փրկչիս հրաշալի, սուրբ սէրն ու դուրս.
Եւ երբ գործերս հոս վերջ դոնեն, մահուան դիշեր
տիրէ մուրս.

Երբ Փրկիչս անունս կարդայ, հոն պիտ՝ ըլլամ:
Երբ Փրկիչս անունս կարդայ: Եւ այլն:

ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

23. ՀՈՐԴԱՀՈՍ ՍԷՐԸ

“Oh! Love that will not let me go”

Ով Սէր, որ դուն չես թողուր զիս,
Քեզ կը յանձնեմ նուազ հոգիս,
Կեանքս ետ կուտամ, զոր քեզ պարտիմ,
Որ խորքին մէջ ծովուդ իր դեան
Աւ՛րի ճոխ, չորդ ըլլայ:

Ո՛վ լոյս, որ հետեւիս ճամբուս,
Առկաջ՞ պատրոցս քեզ կը յանձնեմ,
Սիրտս ետ դարձնէ իր դողբով շողն
Որ ցոլբերուդ վառքովն իր այգն՝
Աւ՛րի պայծառ ըլլայ:

Ով խինդ, զիս փնտռես ցաւիս մէջ,
Ինչպէ՞ս սիրտս փակ պահեմ ժպտիդ,
Յողն ինձ ցոյց տայ վառ ծիածան,
Եւ խոստանայ թէ արշալույս՝
Պիտ՝ անարցունք ըլլայ:

Ով խաչ, որ գլուխս վեր կ'ամբառնաս,
Ես չեմ ուզեր քեզմէ խոյս տալ:
Կեանքիս մեռած փառքն կը թաղեմ,
Հողէն կարծիր ծիլ տայ կեանք մը
Որ անթառամ ըլլայ:

24. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

“I Will Arise and Go”

Անապատին մէջ տխուր, դժբնեայ
Շատ տարիներ ես թափառեցայ
Քաղցէն, վախէն, ո՛հ, վրտարանդի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Վըշտով, ցաւով ես քայլերս առնեմ,
Երկնային Հօրըս դէմքըն փնտռեմ,
Յօժար առնուլ դիրքն իսկ ծառայի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Կրկ. Ելլեմ երթամ Հօրս տունն
Ելլեմ երթամ Հօրս տունն
Պիտի ելլեմ երթամ,
Պիտ' երթամ իմ Հօրս տունն:

Ինչո՞ւ մեռնիմ, ո՛հ, անյուշ լըքեալ
Հոս ուր չունիմ մի ինսամակալ,
Մինչ հոն կայ Հաց ու ծայք հովանի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Ապաշխարած եմ ծանր մեղքերէս,
Ըսեմ, «Սիրույդ անարժան եմ ես»,
Թերեւս Հացըն իր դաւակն ընդունի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Կրկ. Ելլեմ երթամ Հօրս տունն, եւայլն.

Յուշիկները քաղցր են անցեալին,
Սիրուած դէմքեր կը տեսնեմ կրկին,
Եւ սրտիկերն տանն ուր ես կ'ապրէի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Ուրիշներն ալ, ո՛հ, մոլորած են,
Ներուած, սիրուած եւ ընդունուած են,
Ինչո՞ւ մընամ ես տընէն հեռի,

Ելլեմ երթամ իմ Հօր,
Կրկ. Ելլեմ երթամ Հօրս տունն, եւայլն.
Թրգմ. Կ. Մ. Մ.

25. ՀԱՒԱՏՔ ՄԵՐ ՀԱՐՑ

“Faith of Our Fathers”

Հաւատք մեր Հարց, կ'ապրի դեռ ան,
Կ'արհամարհէ, հուր, սուր, զնդան.
Արագ տրոփեն ցնծամք սիրտք մեր,
Երբ կը լսենք այդ քաղցր բառեր:
Կրկ. Հաւատք մեր Հարց, ո՛հ, սուրբ Հաւատ,
Պիտի փարիք քեզ մինչ ցաւարտ:

Շղթայ եւ բանտ, հուր չկրցին
Ընկճել անոնց սիրտն ու հոգին.
Ո՛հ թէ մենք ալ մեր քաջ Հարց պէս
Մեռնինք քան թէ ուրանանք քեզ:

Հաւատք մեր Հարց, սիրենք պիտի
Թէ բարեկամ թէ թշնամի,
Եւ քարոզենք քեզ միշտ սիրով,
Անուշ լեզուով եւ սուրբ վարքով:
Թարգ. ՅՈՎ. Հ. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

26. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԷՄԸ

Ո՛հ, մերթ ստուերներն ի՞նչ խոր են,
Կեանքի շաւիղն ի՞նչ դառնադին,
Վիշտեր ալ երբեմն ուժեղնորէն՝
Մըլըկի պէս կոծեն մեր հոգին:
Յանժամ թողէք զիս, վեր թռչիմ
Դէպի վէմն որ բարձր է քան զանձ իմ:

Ո՛հ, մերթ օրն է ո՛րչափ երկար,
Եւ խոնջ եմ մարմնով բովանդակ.
Սակայն ես տաժանք չեմ ըզգար,
Հանգչիմ երբ վէմին շուրթն տակ:
Յանժամ թողէք զիս, եւայլն:

Մընալ կուզեմ միշտ վէ՛մ, քու մօտ,
 Աչքերս թէ խինդ կամ շիթ ծորեն.
 Ճամբաս հարթ ըլլայ կամ լեռնոտ,
 Անցնիմ ալ մահուան մութ ճորէն:
 Յանժամ թողէք զիս, եւայլն:

27. ԵՐԲ ԱՄՊԵՐԸ ՓԱՐԱՏԻՆ

“When The Mists Have Rolled Away”

Երբ փարատին ամպերն մըռայլ
 Բըլուրներէն պերճափառ,
 Եւ արեգակ շողափայլէ
 Ընդ քաղցր հովիտ եւ ընդ սար,
 Մենք կը լիչենք մեր Հօր խոստում
 Մէջ ծիածան աղեղին,
 Թէ լաւագոյնս զինք կը ճանչնանք
 Երբ ամպերը փարատին:
 Խմբ. Ըստուգի՛ւ պիտի գիտնանք
 Կատարել Անոր սուրբ կամք,
 Այն երջանիկ պաշտօն օրուան
 Երբ ծագի սուրբ առաւօտ,
 Անոր ժրպտէն տէրունական
 Յըրուին ամպերն մո՛ւլթ, աղօ՛տ:

Յաճախ չոգնած, քայլամոլոր
 Մենք կ'ընթանանք մեր ճամբան,
 Դաշտից մէջէն օտարամերժ,
 Ներքեւ ծրոած մեր բեռան.
 Սակայն Փրկչին «Եկո՛ւր, օրհնած»
 Խօսքին ի լուր այդ անդին՝
 Կը թեթեւան դառըն վիշտեր,
 Երբ ամպերն ալ փարատին:
 Խմբ. Ըստուգի՛ւ պիտի գիտնանք, եւայլն:

Մենք ցընծութեամբ չառաջ կ'երթանք
 Բողորուելու շուրջ դահին,
 Մեր սիրելիք դիմաւորել
 Ի սուրբ համբուր անձեկին.
 Ու մեր երգերն մեծ փրկութեան
 Մահէն, շիրմէն ալ անդին
 Պիտի լըսուին չա՛ր, միարա՛ն,
 Երբ ամպերը փարատին:
 Խմբ. Ըստուգի՛ւ պիտի գիտնանք, եւայլն:
 Թարգմ. Յ. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ

28. ՓԱՌՔԻ ԵՐԳ

“Glory Song”

Երբ այս կեանքի փորձանքներն վերջանան,
 Ու հասնիմ Հոն երկնային սուրբ Քանան.
 Սոսկ իմ Փրկչիս մօտ ըլլալս ինձ համար
 Փառք մը կ'արժէ դարերու անհամար:
 Ո՛հ այն ինձի ըլլայ պիտի
 Փառք երկնային դարձանալի
 Երբոր տեսնեմ Փրկչիս գէճը փայլուն
 Ո՛հ այն ինձ պիտի ըլլայ փառք անհուն:

Երբ իմ փրկիչըս՝ անհուն իր շնորհքով
 Տեղ մը տայ ինձ երկնից մէջ իրեն քով,
 Հոն ըլլալ, Հոն զինք տեսնել ինձ համար
 Փառք մը կ'արժէ դարերու անհամար:
 Ո՛հ այն ինձի ըլլայ պիտի, եւայլն:

Թող սիրելիքս երկնից մէջ քովս ըլլան,
 Եւ խըրխտանք շուրջս հոսի դետի նման.
 Բայց իմ փրկչիս մէկ ժպիտն՝ ինձ համար
 Փառք մը կ'արժէ դարերու անհամար:
 Ո՛հ այն ինձի ըլլայ պիտի, եւայլն:

29. ՊԻՏ՝ ՄԻԱՆԱ՞Յ ԽՈՒՄԲ ԶԵՐ ՏԱՆ

“Will The Circle Be Unbroken”

Փառաց մէջ կան սիրելիներ

Զորս կը փնտռէք դուք չաւէտ,

Երբ կատարէք ընթացքը ձեր,

Պի՛տ միանա՞ք անոնց հետ:

Կրկ. Պիտ՝ միանա՞յ խումբը ձեր տան,

Յետ մահուան, չետ մահուան,

Ունի՞ք ձեզ պերճ բընակարան,

Երկնից մէջ մշտական:

Գեղածիծաղ ձեր մանկութեան

Օրերուն մէջ պատմեցին

Սիրուն վըրայ Տեանն փրկչական,

Այժմ Անոր հետ վերն կապրին:

Կրկ. Պիտ՝ միանա՞յ խումբը ձեր տան եւայլն:

Կը չիշէք դուք մանկութեան ձեր

Յնծածալն երգք երկնային,

Կը սիրէ՞ք արդ աչն հին երգեր,

Թէ կընտրէք երգն աշխարհին:

Կրկ. Պիտ՝ միանա՞յ խումբը ձեր տան եւայլն:

Կը չիշէք խումբըն սիրելի

Սեղանին շուրջ արնական,

Եւ բաժանումն արտասուալի,

Երբ ձեր շարքէն մեկնեցան:

Կրկ. Պիտ՝ միանա՞յ խումբը ձեր տան եւայլն:

Զատ զատ, մէկ մէկ բաժնուեցան,

Մէկ մէկ, զատ զատ գընացին,

Յրուած է խումբըն ընտանեկան,

Պիտ՝ միանա՞ք դուք կրկին:

Կրկ. Պիտ՝ միանա՞յ խումբը ձեր տան եւայլն:

Թարգ. Կ. Մ. Մ.

30. ՔԵԶՄԷ Ի ԶԱՏ

Շըրջեցայ, Տէր իմ Աստուած, ծով ու ցամաք,

Փորձեցի, լեռ, ձոր ու դաշտ, ա՛հ, շարունակ.

Դիտեցի լուսին, արեւ, աստղերն ի սփիւռ.

Սարսեցայ կոհակներու կոծումէն բիւր:

Զը դըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ ԽՕՍՈՂ Հոգւոյս.

Քեզմէ ի զատ, քեզմէ ի զատ,

Զը դըտայ ԽՕՍՈՂ Հոգւոյս:

Ծաղիկներ բուրումնալից հովիտներ գեղ,

Պարզեցին եղեմային տեսիլք շքեղ:

Հալեցան մեզմ մեղեդիք թռչնոց երգին,

Սեղմեցին շատեր իմ ձեռք եռանդազին:

Զը դըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ ԴՊԶՈՂ Հոգւոյս:

Քեզմէ ի զատ, քեզմէ ի զատ,

Զը դըտայ ԴՊԶՈՂ Հոգւոյս:

Երգեցին բանաստեղծներ դարերու մէջ.

Շարեցին զմայլումի կամ սոսկման վէճ,

ձառեցին, Տէ՛ր, դիտուններ լուկ երեւոյթ.

Դըրեցին «կարգ ու օրէնք» անոնց սիրոյց:

Զը դըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ ՅՈՒԶԻԶ Հոգւոյս:

Քեզմէ ի զատ, քեզմէ ի զատ,

Զը դըտայ ՅՈՒԶԻԶ Հոգւոյս:

Հայր եւ մայր, որդի, եղբայր, քոյր թանկազին,

Ազգական, մարդ մտերիմ կամ այր ու կին՝

Ոչ երբէք մօտ են ինձի, Տէ՛ր, քեզ նման.

Ոչ երբէք հոգես հոգւով սիրել կըրնան:

Զը դըտայ, ո՛վ Տէր Յիսուս,

Քեզմէ ի զատ ՍԻՐՈՂ Հոգւոյս:

Քեզմէ ի զատ, քեզմէ ի զատ,

Զը դըտայ ՍԻՐՈՂ Հոգւոյս:

Հ. ԵԱՐՏԸՄԵԱՂ

31. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱԶԸ

Փրկչիս խաչին ներքեւը
 Կ'ուզեմ առնել կայան,
 Խիստ ծարաւուտ երկրի մը մէջ՝
 Ժաշուի շուքի նըման.
 Ի՛նչ զովարար ծածկոյթ է ան
 Կէս օր՝ տաքութենէն,
 Ճամբուն վրայ ալ հանդըստարան
 Օրուան ծանրութենէն:
 Ի՛նչ քաղցր ու ազահով է
 Փորձուած բընակարան,
 Ուր Աստուծոյ արդարութիւնն
 Ու սէրն կը միանան.
 Ինչպէս Յակոբ նահապետին
 Երազն զարմանալի.
 Աչնպէս խաչն ալ՝ մինչեւ երկինք
 Սանդուխն ինձ կը թըլի:
 Երբեմն Փրկչիս խաչին վրայ
 Աչքս հաւատքով տեսաւ
 Ձայն որ զիս փրկելու համար՝
 Իր անձը զոհ տըլաւ.
 Եւ տեսնելով կը սքանչանայ
 Իմ սիրտս աս բաներուն,
 Իմին մեծ անարժանութեանս,
 Անոր անհուն սիրոյն:
 Կ'ընտրեմ, ով խաչ, քու շուքըդ
 Անվտանգ ինձ ապաւէն.
 Բընաւ ուրիշ լոյս չեմ ուզեր
 Փրկչիս դէմքին լոյսէն.
 Ա՛լ լոյսըս չէ երկրիս վաստակն,
 Ա՛լ չեմ փնտուեր աշխարհս.
 Իմ մեղքս միայն ամօթըս է,
 Խաչն ալ՝ միայն իմ փառքս:

32. ՀԻՆ ԼՈՒՐԸ

Տուր ինձ այն հին, հին լուրը
 Վերին անտես իրաց,
 Տէր Յիսուսի սիրոյն վրայ,
 Եւ իր անհուն փառաց:
 Շատ պարզ պատմէ զանոնք ինձ,
 Իբրեւ փոքրիկ տըղու,
 Քանզի ես շատ տըկար եմ,
 Անգօր իմանալու:
 Տուր ինձ, եւ այլն:
 Ձայն մեղմ կերպով պատմէ ինձ,
 Որ ես լաւ հասկընամ
 Ձարմանալի փրկանքը,
 Իբրեւ մեղաց զարման:
 Եւ շատ անգամ կրկնէ ինձ,
 Ձի կը մոռնամ դիւրաւ,
 Առաւօտուս «կանուխ ցօղ»
 Միջօրէիս կորեալ:
 Տուր ինձ, եւ այլն:
 Շուտով այն հին, հին լուրը
 Հաճէ ինձի պատմել,
 Քանզի իմ մեծ մեղքըս ալ
 Կրնայ Յիսուս քաւել:
 Կրկին կրկին այն լուրը
 Պատմէ եթէ կամիս,
 Որ ինձ վշտաց ատենը
 Մըխիթարիչ լինիս:
 Տուր ինձ, եւ այլն:

Տուր ինձ այն հին, հին լուրը
 Վախու պատճառ երբ կայ,
 Կամ աշխարհիս սուտ փառքը
 Հրասպույր երբ ինձ ըլլայ.
 Եւ երբ փառաց աշխարհը
 Հողուցս վըրայ ծագէ,
 Տուր ինձ այն հին, հին լուրը,
 «Քրիստոս քեզ կը փրկէ:»
 Տուր ինձ, եւ այլն:

33. ՕՐՀՆԵԱԼ ԵՐԱՇԽԻՔ

“Blessed Assurance”

Օրհնեալ երաշխիք, իմս է Յիսուս,
 Ո՛հ, այս խորհուրդըն ինչ քաղցր է հողուցս
 Փըրկութեան ժառանգ, Տէրոջն եմ ես,
 Իր արիւնովն սըրբուած մեղքերէս.

Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին,
 Ու երգեմ սէրն անհուն իմ Փըրկչին,
 Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին,
 Ու երգեմ սէրն անհուն իմ Փըրկչին:

Իրն եմ ես, Ան իմ Տէր եւ Արքայ,
 Կ'ըզգամ իր փառքը անձիս մէջ ներկայ.
 Սուրբ հրեշտակներ գալով երկինքէն՝
 Ծնորհաց, սիրոյ երգ կը մըրմնջեն:
 Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին, եւ այլն:

Ալ զիս յանձնած եմ Անոր բաղկաց,
 Յոյժ երջանիկ եմ, անվախ, անկասկած.
 Իր բարութեամբ է լեցուն հոգիս,
 Միակ իր սէրը նիւթ է երգիս:
 Պիտի պատմեմ մինչ շունչըս վերջին, եւ այլն:

34. ՀԱԻԱՏՔՆ Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

“Faith is The Victory”

Հուսոյ բըլբոյն շուրջն բանակած
 Զինուորք խաչին ելէք.
 Եւ մութ գիշերն գալէն առաջ,
 Հողուով մարանչեցէք.
 Դէմ թշնամուցն կրկնապատկենք
 Մեր ուժն ու ջանքն բարի,
 Հաւատքն է չաղթութիւն գիտեմք
 Յաղթականն աշխարհի.
 Հաւատքն է չաղթութիւն, Հաւատքն է չաղթութիւն
 Ոհ փառաւոր չաղթութիւն, չաղթականդ աշխարհի:

Մէր է մեր վրայ իւր դրօշակն
 Մեր սուրն խօսք Աստուծոյ
 Սրբոց շուղէն քալեմք շիտակ
 Յնձմամբ սիրոյ, յուսոյ,
 Սուրբերն ոչք Հաւատքով միայն
 Անչաղթ քաջաց նձան
 Միշտ չաղթեցին չարին, մահուան,
 Հաւատքն եւ մեր վահան.
 Հաւատքն է չաղթութիւն, եւ այլն:

Ով որ չաղթէ վատ թշնամուցն,
 Ճերմակ Հանդերձ Հագած,
 Պիտ' պսակուի փառօք մ'անհուն,
 Ի մէջ Հրեշտակաց
 Ուրեմն չառաջ 'ի լոյս բըրոյ
 Հողիքս վառվռուն սիրով
 Վանեմք մէն մի խաւարին դօրք
 Փրկչին անուամբն չաղթող.
 Հաւատքն է չաղթութիւն, եւ այլն:

35. ՕՐ ՄԸ ՊԻՏԻ ՀԱՍԿՆԱՆՔ

“Some Day We Will Understand”

Ինչո՞ւ արդեօք մեր աչքերէն
 Յաճախ արցունք դառն կը վաղեն՝
 Արդ չենք դիտեր, ոչ ալ կրնանք,
 Բայց օր մը վերն պիտ' հասկնանք:
 Կրկ. Ուստի չուսա ընդ միշտ ի Տէր,
 Թէեւ ճամբադ մութ է, քաջ լեր,
 Ան քու քովդ է, չկա՛յ վտանդ,
 Օր մը անշուշտ պիտ' հասկնանք:

Կտրած թերն հոն պիտի բռնենք,
 Եւ կիսատ դործն ընցնենք,
 Երբոր մտնենք աչն անվերջ կեանք,
 Շատ դադանիքներ պիտ' հասկնանք:
 Կրկ. Ուստի չուսա ընդ միշտ ի Տէր եւլն.

Պիտի դիտնանք ինչո՞ւ ամպ սեւ
 Յաճախ ծածկէ պայծառ արեւ,
 Ինչո՞ւ ողբի դառնայ հրճուանք.
 Հոն, հոն լայնժամ պիտ' հասկնանք:
 Կրկ. Ուստի չուսա ընդ միշտ ի Տէր եւլն.

Ինչո՞ւ փայլուն չոյսեր խարեն,
 Եւ շատ ջանքեր դերեւ ելլեն,
 Զեն կատարուիր մեր խոր բաղձանք՝
 Օր մը անշուշտ պիտ' հասկնանք:
 Կրկ. Ուստի չուսա ընդ միշտ ի Տէր եւլն.

Աստուած գիտէ, դուռն կը բանայ
 Կ'առաջնորդէ մեզ ձեռքով՝ Նա՛,
 Անթաց աչքով երբ դայն տեսնանք,
 Աչն ատեն ո՛հ, պիտ' հասկնանք,
 Կրկ. Ուստի չուսա ընդ միշտ ի Տէր եւլն.

Քարգմ. ՅՈՎ. Հ. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

36. ՀԱՄՐԷ ԲԱՐԻՔՆԵՐԴ

“Count Your Blessings”

Երբ հանդիպիս կեանքի հովին փոթորկին,
 Դժբախտութեան սեւ օրեր քեզ պատահին,
 Համրէ կեանքիդ օրհնութիւններն մի առ մի,
 Տես Տէրդ ի՞նչ մեծ շնորհքներ ըրած է քեզի:
 Կրկ. Համրէ բարիքներդ մի առ մի,
 Տես Տէրդ ինչե՞ր տուած է քեզի
 Համրէ զանոնք, չի՛չ մի առ մի
 Համրէ Տէրո՞ջ բարիքներ զարմանալի:

Ունիս հոգեր, եւ նեղութեանց ծանր բեռներ
 Ծա՞նր է խաչըդ զոր տուած է քեզ Քո Տէր.
 Համրէ կեանքիդ օրհնութիւնք եւ խոստման չոյս
 Տարակոյսներդ քու հոգիէդ պիտ' տան խոյս:
 Կրկ. Համրէ բարիքներդ, եւալն:

Երբ տեսնես այլք հարուստ բարեօք երկրայլն
 Յիշէ Փրկչիդ խոստումները երկնայլն
 Համրէ վայելքդ, զոր կարող չէ տալ երկիր.
 Զոր դուռն ունիս առատ Հօրմէդ երկնայլն:
 Կրկ. Համրէ բարիքներդ, եւալն:

Կեանքիդ բոլոր պաշարից մէջ, ո՛հ, չըլլայ,
 Յուսահատիս, Տէրդ կը հսկէ քու վըրայ,
 Համրէ բարիքդ, հրեշտակք պիտի քեզ օգնեն,
 Մխիթարեն, մինչեւ մեկնիս աշխարհէն,
 Կրկ. Համրէ բարիքներդ, եւալն:

37. ԳԱՌՆՈՒԿԻՆ ԱՐԻԻՆԸ

“The Blood of The Lamb”

Օրհնութիւն, փառք արեան ուղիսին
 Որ աշխարհին յայտնուեցաւ,
 Օրհնեալ՝ Որդի, Սէր-Աստուծոյ
 Որուն վէրքերն բուժեց մեր ցաւ:
 Թէեւ երկար թափառած,
 Ես ջու գրկէդ եմ հեռացած.
 Լուա՛ զիս Արիւնովն Գառին,
 Որ ըլլամ ճերմակ քան զձիւն
 Սուրբ անբիծ մաքուր
 Սուրբ անբիծ մաքուր
 Տէր լուա՛ մաքրէ զիս աչսօր.
 Որ ըլլամ ճերմակ քան զձիւն:

Գլուխն դրաւ փուշէ պսակ,
 Խաչի մահուան կրեց սուր ցաւ,
 Անլուր վէրքեր, վշտաչարչար,
 Բաց, ոչ է զուր, տառապեցաւ:
 Այդ աղբիւրին զիս տանէին,
 Մեղքերս մաքրել բոլորովին.
 Լուա՛ զիս արիւնովն անգին,
 Որ ըլլամ ճերմակ ձեան նման,
 Սուրբ անբիծ մաքուր, եւայլն:

Հա՛յր, աստանդական շատ անգամ
 Միրտս հեռու պահեր եմ Գեղմէ,
 Մեղքերս որդան պէս, ո՛հ, կարմիր,
 Ջոր ջուր մաքրել ո՛հ, կարող չէ:
 Յիսուս, լինած խոստմանդ ես հոս,
 Կուգամ աղբիւրիդ սիրահոս,
 Մաքրէ ջուրովդ Աստուածային,
 Որ ըլլամ ճերմակ ձեան նման,
 Սուրբ անբիծ մաքուր, եւայլն:

38. ԿԵԱՆՔԻ ԵՐԳԸ

Տըլխուր ողբով մ'ըսեր ինծի,
 Կեանքս է միայն երազ
 Գործ կայ ինծի, գործ կայ քեզի
 Ամէն տեղ հանապաղ,
 Ամէն տեղ հանապաղ,
 Գործ կայ ինծի, գործ կայ քեզի
 Ամէն տեղ հանապաղ:

Կեանք իրական է փութաջան,
 Եւ նըպատակ ունի.
 Անոր վախճան չէ գերեզման,
 Անդին ալ կը նայի:

Կեանքս օգտակար եւ թանկագին
 Ընել ենք հրաւիրուած.
 «Դուն հող էիր, դառնաս հողին»,
 Հոգւոյն վրայ չէ ըսուած:

Ապառնիին չապաւինինք
 Անցեալը թող թաղուի,
 Մենք ներկային մէջ թող ապրինք,
 Արթուն եւ կենդանի:

Ամէն դարու մեծ, բարերար
 Մարդոց կեանքն կը փայլի.
 Մեր ետեւէն հետք օգտակար
 Ձրգել է պարտք մեզի:

Օն, ով եղբարք, վեր նայելով
 Մեր կեանքն վրսեմ ընենք.
 Արթուն ըլլանք, եւ միշտ չոչսով
 Ջանանք եւ սպասենք:

42. ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՆԳԻՍ

Անշուշտ շուտով պիտի անցնինք Յորդանանէն
 Անշուշտ շուտով ալ պատերազմք պիտի լուեն,
 Ո՛չ թ՛նամուտն նետք մեր սրտեր պիտի խոցեն,
 Ո՛չ մեր սրտերն դետեր արեան պիտի հոսեն:

Ո՛չ, ալ խաւար չկայ աչաց մեր մթազին,
 Եւ ոչ ալ ցաւ պիտի ճանչնայ մեր հէք հոգին.
 Լուսն Աստուծոյ դէմքէն պիտի, ո՛հ, դեղանի,
 Մեր վերքերուն, մեր խոցերուն սպեղանի:

Անուշ երգեր պիտի թնդան Սիօնի մէջ.
 Անմահ կենաց արեւն պիտի փայլի անչէջ.
 Թեւեր պիտի առնեն չաչնժամ մեր հոգիներ
 Երթալ խիզախ, թռչիլ սիրով Աստուած ի վեր:

Իզո՛ւր դարեր պիտի չափեն մեր խնդութիւն
 Իւրաքանչիւր օր նոր պիտի բերէ աւիւն.
 Այլ դու մարմին իմ երկրաքարչ, մնաս բարեա՛ւ,
 Մնաս բարեաւ, աշխա՛րհ, կ'երթամ յոյսն իմ չարեաւ:

Մ. ՆՈՐ ՀԱՏԵԱՆ

43. ՇՆՈՐՀՔՈՎ ՓՐԿՈՒԱԾ

“Some day the silver cord”

Օր մ'արծաթ թելն պիտի կտրի,
 Պիտ' չը կրնամ այլեւս երգել
 Բացց, ի՛նչ ցնծում, երբ աչքս բացուի
 Երկնաւոր Հօրս պալատին մէջ.
 Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ,
 Անհուն շնորհքով փրկուել պատմեմ:

Օր մը, հոգէ տունս պիտ' փլչի,
 Ձեմ դիտեր ե'րբ, ուշ կամ շուտով.
 Սակայն, վստահ խոստման փրկչի,
 Գէթ տեղ մ'ունիմ իր ոտից քով:
 Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ, եւայլն:

Օր մը, կեանքիս պայծառ արեւն
 Տժգունելով երբ մարն մտնէ,
 Լսեմ օրհնեալ Փրկչիս «բարեւն»,
 Եւ խեղճ հոգիս հանդիստ դտնէ:
 Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ, եւայլն:

Մինչեւ այդ օրն, պիտ' սպասեմ,
 Կանթեղս շտկած, փայլուն՝ պատրաստ.
 Որ, երբ «փեսան կ'ուզայ» լըսեմ,
 Մտնեմ իր հետն սուրբ առաքաստ
 Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ, եւայլն:

Թարգ. ՅՈՎՀ. Մ. ՓԱՇԿԵԱՆ

44. ԽԱԶՆ ՀՐԱՇԱԼԻ

Երբ որ դիտեմ Խաչն Հրաշալի,
 Յորում փառաց իշխան մեռաւ,
 Լինին շահերս ինձ ատելի
 Եւ ես դարչիմ մեղքէն անբաւ.
 Խաչն Հրաշալի ուր Տէրն մեռաւ
 Եւ վասն մեղացս անդ Խաչեցաւ,
 Յողնած աչերս դէպ քեզ նային,
 Ո՛վ դառն օրհնեալ Գողգոթալի:

Ձըլլայ, որ, Տէր ես պարծենամ
 Ուրիշ բանով այլ քու մահուամբ
 Ամենայն ինչ զոհել ջանամ
 Որք զիս դիւթեն զեղեցկութեամբ:
 Խաչն Հրաշալի, եւայլն:

Դիտէ, գլխէն ու ձեռքերէն,
 Վիշտ, սէր բղխին ի միասին,
 Ծնորհալի սուրբ ոտքերէն
 Արեան չեթեր վար կը հոսին:
 Խաչն հրաշալի, եւայն:

45. ՊԻՏԻ ԾԱԾԿԷ ԶԻՍ

Երբ չուզուին մրրիկք կենաց իմ,
 Վրդովին ծով ու ցամաք,
 Ապաստան պիտի փնտռեմ ես
 Աստուծոյ թեւերուն տակ:
 Կը ծածկէ զիս կը ծածկէ զիս,
 Ոչ մէկ վնաս չի հասնիր ինձ.
 Ապահով զիս կը ծածկէ Տէրս
 Իր թեւոց հովանւոյն տակ:

Տառապանք թող չարձակին վրաս,
 Միշտ կ'ուզուեմ աչքս ի վեր ես,
 Զի սիրով եւ ոչ ցասմամբ՝ ինձ
 Կը հասնին անոնք Հօրմէս:
 Կը ծածկէ զիս, եւայն:

Յարձակի թող թշնամեաց դունդ,
 Սատանան շանթեր ցանէ.
 Տէրն անոնց հարուածներէն բիւր՝
 Բիւր բերկրանք պիտի հանէ:
 Կը ծածկէ զիս, եւայն:

Խաչս առած կենաց մարտին մէջ,
 Մեղքին կուրծք տալու ատեն՝
 Հայրն վերէն պիտի հրաման տայ
 Որ հրեշտակք շուրջըս պատեն:
 Կը ծածկէ զիս, եւայն:

46. ՓՐԿԶԻՆ ՍԷՐԸ

Պիտի երգեմ սէրն իմ Փրկչին,
 Սէրն անհուն զարմանալի,
 Կրեց դառն վիշտ, ցաւ ի Խաչին
 Որ հոգին իմ փրկուի:
 Ո՛հ, երգեմ միշտ իմ փրկիչս
 Զի արեամբ մեղքերս սրբեց,
 Խաչին վրայ քաւեց չանցանքս
 Պարտքս հատուց եւ զիս փրկեց:

Պիտի պատմեմ սէրն փրկարար
 Թէ ինչպէս ի փրկութիւն
 Տէրն իմ Յիսուս կարեկցարար
 Յանհուն սէր թափեց արիւն:
 Ո՛հ, երգեմ միշտ, եւայն:

Պիտի երգեմ չաւերժարար,
 Զօրութիւնն չաղթողական,
 Ինչպէս չաղթեց ան քաջարար,
 Դժոխքին եւ դառն մահուան:
 Ո՛հ, երգեմ միշտ, եւայն:

Իմ մեծ փրկիչս պիտի օրհնեմ,
 Եւ իր սուրբ սէրն երկնային,
 Զի բերաւ զիս մահէն նսեմ,
 Մօտ իր փառաց աթոռին:
 Ո՛հ, երգեմ միշտ, եւայն:

ԹՐԳՎ. Կ. Մ. Մ.



ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃԻ

47. ԾՆՆԴԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Սորհուրդ մեծ եւ սքանչելի որ չայսմ աւուր
չայտնեցաւ. Հովիւք երգեն ընդ հրեշտակս տան աւե-
տիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթլեհէմ քաղաքի, որդիք
մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պա-
տեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ արքին բազ-
մեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ
աւետօք. Եւ արարածք ամենայն զգեցան Հանդերձ
փրկութեան:

Այսօր չայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աս-
տուծոյ. Եւ հրեղինաց բազմութիւնքն չերնից չեր-
կիր վայր իջեալ:

Այսօր հովուացըն տեսեալ զԱրդարութեան Արե-
գակն. Եւ ընդ հրեշտակս երգէին «Փառք ի բար-
ձունս Աստուծոյ»:

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. Ար-
դարութեան Արեգակն, Տէր, փառք Քեզ:

Ծընար ի չայրին ընծայեցար Բեթլեհէմ, Ար-
դարութեան Արեգակն, Տէր, փառք Քեզ:

Հովուացն չայտնեցար երկրպագեալք ի մոգուց,
Արդարութեան Եւայն.

Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար,
Արդարութեան Եւայն.

48. ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ ՓՐԿՉԻՆ

“Joy to the world”

Ծափ դարկ, աշխարհ, ցնծա՛ այսօր,
Ցնծա՛ եւ չաւիտեան,

Քանզի ծնաւ Արքայն Հօր,
Ի շխան խաղաղութեան:

Ե՛ւ, ո՛վ երկիր, ահա կուգայ
Ազգաց յոյժ ցանկալին,

Տուէք, արեւ ու լուսնկայ,
Ողջոյն էմմանուէլին:

Թող Սիօնի որդիք բերկրին,
Հնչեն փող յորեկան,

Օծեալ անմազ թագաւորին
Երգեն երգ գովութեան:

Թող Յորդանան, ափեր իւր գով
Կազմեն պար ու թափօր.

Եւ Գալիլիան գոռայ պերձ ծով,
Խաչտան Հերմոն, Թափօր:

Ե՛ւ Յուդայի վհատ աղջիկ,
Ծաղկած են դաշտ, արօտ,

Գլխուդ պըսակ վարդէ փնջիկ
Ճակտիդ կապէ նարօտ:

Ո՛հ, Սարօնի փթթի Ծաղիկ,
Հովտաց անբիծ Ծուշան,

Բեթլեհէմի փայլուն Աստղիկ,
Շողայ նորանշան:

Քեզ աւետիս, Սիրով եկաւ
Հոչակէ Տէր զնա.

Քնար, շեփօր ու գոռ թմբկաւ,
Գոչէ միշտ Ովսաննա:

Թարգմ. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

49. Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Լոյս 'ի լուսոյ 'ի Հօրէ առաքեցար եւ ճարմնա-
ցար 'ի սուրբ կուսէն. զի վերջստին նորոգեսցես զա-
պականեալն Ադամ:

Դու Աստուած 'ի չերկրի երեւեցար եւ ընդ մարդ-
կան շրջեցար, եւ փրկեցեր զտիեզերս չանիծիցն Ա-
դամայ:

Քեզ 'ի չերկնից վկայեալ Հօր քոյ ձայն, ասէ,
դա է իմ որդի. եւ սուրբ Հոգին զքեզ չայտնեաց ա-
զանակերպ երեւամբ:

Զքեզ որ Հոգւով եւ Հրով մաքրեցեր զմարդկան
աղտեղութիւն, որպէս զԱստուած եւ զՓրկիչ ամե-
նեքեան օրհնեսցուք:

50. ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Օրհնեալ է Աստուած:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում.
ալէլուիա:

Զմարմին իւր տաչ մեզ կերակուր եւ Սուրբ զա-
րիւնն իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք ըզլոյս. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցրէ Տէր. ալէ-
լուիա:

Օրհնեցէք ըզՏէր չերկինս. ալէլուիա:

Օրհնեցէք ըզնա ի բարձունս. ալէլուիա:

Օրհնեցէք ըզնա ամենայն Հրեշտակք նորա. ա-
լէլուիա:

Օրհնեցէք ըզնա ամենայն զօրութիւնք նորա. ա-
լէլուիա:

51. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Նորահրաշ պըսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ որ վանեցեր ըզթշնամին.
Վարդագոյն արեամբըդ քո պըսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու չաղթեալ պատերազմին,
Սոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.
Սորէն խորհըրդական ու ծանուցեալ անուն բարի,
Սաչելուոյն վըդայ եղեալ Հեղմամբ արեան պսակեցաւ:

Բենական լուսով լըցեալ արիացեալըն քաջն Արտակ,
Թաթաւեալ 'ի կարմրութիւն բոսորային բըղխեալ
աղբիւրն.

Զփըրկականն ըմպեալ զբաժակ եւ մըկըրտեալ
արեամբն իւրով:

Դասակցեալ ընդ անմարմնոցն. երրորդութեանն
երգել ըզփառս:

Սըրբափայլ զգեստուք պըճնեալ 'ի չերկնաւոր
Հանդիսադրին

Երրորդութեամբըն զօրացեալ վանեալ զամուրըս
բանսարկուին,

Հըմայեակ Հօր ընծայեալ, որդւոյ գոլով
չարչարակից,

Հոգւովն չաղթեալ պատերազմին եւ չարասէր
թագաւորին:

Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղացըն
վառեցաւ,

Տարագընաց ելիւք չերկինըս պարակցեալ ընդ
անմարմնոցն.

Տաճատ զարմանալի տաճար եղեալ
երրորդութեանըն,

Տէրունեան սուրբ խորհըրդոյն տուն եւ տեղի
արժանացեալ:

Ստացեալ ըզհաւատոյ Վահան, չուսոցն զրահիւք
 ծածկեալ,
 Զփրբրկականն սաղաւարտ 'ի դլուխ եղեալ զնշան
 խաչին.
 Վահան վեհ երեւեալ նոր մանկութեամբ
 նահատակեալ.
 Խաչելոցն վրկայ եղեալ պըսակեցաւ արեամբըն
 իւրով:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

52. ՎԵՐԱՑՄԱՆ ՍԲ. ԽԱԶ

Որ զանարատ բազուկըս քո 'ի խաչին տարածեցեր
 Քրիստոս Աստըւած, եւ նըշան չաղթութեան ետուր
 մեղ. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի
 քո Քրիստոս Աստըւած դաւազան զօրութեան ետուր
 մեղ. սովաւ, եւայլն:

Որ ըզմեռեալն 'ի ճաշակմանէ փաշտին չանցանաց,
 կենաց փաշտին կենազործեցեր. սովաւ, եւայլն:

Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ
 'ի չերկրի չաղթող թըշնամուցն. եկայք ժողովուրդք
 երկըրպագեսցուք:

Արարիչն Աստըւած բարձրացաւ 'ի խաչին, եւ
 զմեռեալըս մեղօք փաշտին ճաշակմամբն, 'ի սմա նորոգեալ
 կենդանացոյց:

Ի միւսանգամ զալըստեան աստուածորդւոցն,
 սուրբ խաչն երեւի եւ լուսաւորէ. զի նա է չոյս հաւատացելոց:

53. ՄԵԾ ՊԱՀՔԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Ա. ԿԻՐԱԿԻ

Ապաշխարութիւն

Բանն որ ընդ Հօր չէութեան եւ համադոյ սուրբ
 Հոգւոցն. ըզպատկերն իւրական խառնեալ ընդ Հո-
 ղանիւթ բընութեանս. զոր զարդարեալ փառօք եղ 'ի
 դրախտին փափկութեան:

Յորում ցնծայր զուարճացեալ անտխրական
 խնդութեամբ. քանզի զաստուած տեսանէր միշտ
 խոնարհեալ 'ի դրախտին. չորմէ զլուսոցն ճառագայթ
 տըպաւորէր 'ի չինքեան:

Այսօր չօրինակ նախաստեղծին Ադամայ որ 'ի
 դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտա-
 կըս. ցընծասցուք եւ մեք 'ի չօրհնութիւնս հոգեւորս:

Այսօր 'ի խորհուրդ աստուածաստեղծ նախ-
 չօրն. որ 'ի պըտղոցն ադինայ ճաշակելով զըւարճա-
 նայր, ճաշակեսցուք եւ մեք ըզպատուիրանս Աստու-
 ծոց:

Բ. ԿԻՐԱԿԻ

Օրէնք

Որ զօրէնըս սրբութեան պահոց նախ 'ի դրախտին
 աւանդեցեր, զոր ոչ պահելով նախաստեղծիցըն
 ճաշակմամբ պտղոցն ճաշակեցին ըզդառնութիւն մե-
 ղաց եւ մահու. փասն որոյ շնորհեա մեղ Տէր ճաշա-
 կել ըզբաղըրութիւն քոց պատուիրանաց:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք չողիս 'ի թըշ-
նամուշն, եւ 'ի բազմապատիկ հիւանդութեանս կա-
րօտացաք մարդասիրիդ բառնալոյ ըզցաւ ըս մեր.
վասն որոյ բժշկեա ըզմեզ Գրիստոս որպէս մարդա-
սէր:

Որ գերագոյն փառօք բարձրացուցեր զմանկունս
եկեղեցւոյ քո Գրիստոս խոնարհութեան քո ճանա-
պարհաւ. առաջնորդելով 'ի յերկնային վարքս հրեշ-
տակաց. աղաչեմք առաջնորդեա մեզ Տէր 'ի յարդա-
րութիւն:

Գ. ԿԻՐԱԿԻ

Անառակ Որդին

Օրհնեմք ըզքեզ անսկիզբն Հայր Որդւոյդ Միած-
նի, զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ սշխարին.
դարձո եւ զմեզ ի մեղաց՝ որդւոյդ քոյ չարչարանօք:

Գովեմք ըզքեզ բան եւ լոյս, որ զտիրական քո
պատկեր լուսով ճրագի քոյ գտեալ վերականգնեցեր.
կեանդնեա զանկեալ ըրս մեղօք՝ քոյին սուրբ չարչա-
րանօք:

Բարեբանեմք զփառակիցդ Հօր զՀոգիդ ճշմա-
րիտ. որ նորոգեցեր ըզհնացեալ ըս մեղօք հընոյն Ա-
գամայ. նորոգեա ըզմեզ ի մեղաց նորոգութեամբ քո
չնորհաց:

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրըդ գը-
թած. մեղաք չերկինս եւ առաջի քո քաւիչ յանցա-
նաց, եւ ընդ առաջ սիրով գրկեա համբուրիւ, մաք-
րեա ըզմեզ ի մեղաց մերոց:

Դ. ԿԻՐԱԿԻ

Անիրաւ Տնտեսը

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշ-
խարհ վերին. եւ 'ի նմա հաստատեցեր անտես ըզ-
պետըս հրեղինացն. օրհնեմք զանհասանելի զօրու-
թիւնդ:

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ
աշխարհ զգալի. եւ 'ի դրախտն որ չաղենի անտես
եղեալ զմարդն առաջին. օրհնեմք զանհասանելի զօ-
րութիւնդ:

Որ շինեցեր բարձրագոյն գեկեղեցի քո խոր-
հըրդեամբ. եւ 'ի սմա կարգեալ անտես զքարոզս բա-
նին ճշմարտութեան. օրհնեմք զանհասանելի զօրու-
թիւնդ:

Ե. ԿԻՐԱԿԻ

Դատաւորը

Որ արատելիբան ճըշմարտութեան աւանդեցեր
եկեղեցւոյ քոյ Գրիստոս. անսահման Ժամանակաւ
աղօթել միշտ առ Աստուած հոգւով եւ մըտօք:

Որ ըզբան քո օրինաց հաստատեցեր դործով մեզ
օրինակ, հանելով զգիշերն 'ի գլուխ չաղօթան Աս-
տուծոյ, բնութեամբ մերով անօրինաբար որում կըրկ-
նի ծունր ամենայն:

Դատաւոր արդարութեան հաստատեցեր 'ի մեզ
ըզմիտս մեր, դատել զհոգի եւ ըզմարմին. արդա-
րապէս դատմամբ ըստ օրինաց քոյ Գրիստոս:

2. ԿԻՐԱԿԻ

Գալստեան

Որ ըզխորհուրդ քո գալստեանդ յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւքն Իսրայէլի զորս ընտրեցեր չես Մովսիսի. որք խօսեցան հոգևով սրբով բազմապատիկ օրինակօք. տուր մեզ Փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն:

Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքն ծանուցին. ըզհասանիլ մեր փրկողիդ առ 'ի վախճան ժամանակին. երեւեցար 'ի մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայական. տուր. եւալն:

Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ի տիպ քո տիրական. որ ոչ պահեալ զպատուիրանն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ նոր ազամդ 'ի վեց դարուն այց արարեր կորուսելոյն. տուր, եւալն:

Է. ԿԻՐԱԿԻ

Ծաղկազարդ

Զգալուստ քո Քրիստոս այսօր չԵրուսաղէմ նոր. եկեղեցի սուրբ, չաղթական երգով բարեբանեմք, օրհնեալ եկեալ անուամբ տեառն:

Որ վասըն մերոյ փրկութեան չաւանակի նստիլ չանձն առեր ընդ մանկունսն բարեբանեմք, օրհնեալ, եւալն:

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեալ, եւ զերկրպագուս անուանող քոս պահեալ 'ի խաղողութեան:

54. Ա. ԱԻՈՒՐ ՍՐԲՈՑ ԶԱՏԿԻ

Այսօր չարեաւ 'ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր, քեզ աւետիք խընդութեան հարսն 'ի չերկրէ եկեղեցի. օրհնեալ 'ի ձայն ցընծութեան զԱստուած քո Սիօն:

Այսօր անճառ լոյսն 'ի լուսոյ լուսաւորեաց ըզմանկունքս քո, լուսաւորեալ Երուսաղէմ. քանզի չարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեալ 'ի ձայն ցընծութեան զԱստուած քո Սիօն:

Այսօր խաւարն անդիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս զիտութեան չառուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեալ 'ի ձայն ցընծութեան զԱստուած քո Սիօն:

Այսօր զատիկ մեր զենամբ Քըրիստոսի, արասցուք տօն ցընծութեան, նորոգեալքս 'ի հնուքնէ մեղաց ասելով. Քրիստոս չարեաւ 'ի մեռելոց:

55. ՎԱՐԴԱՎԱՌ

Որ 'ի լերինն այլակերպեալ ցուցեր զԱստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Որ ըզճառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարածքս լուսաւորեցեր. ըզքեզ փառաւորեմք, եւալն:

Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն, 'ի թըմրութիւն հրաշիցն 'ի սէր Աստուածային փառաց քոց. զքեզ փառաւորեմք, եւալն:

56. ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆ

Խաչին վրայ բազկատարած երկնադէտ

Գլուխն համակ արիւնամած փշաւէտ

Ո՛հ, դա անուշ Փրկիչն է իմ, իմ հոգւոյս,

Դա Արարիչ, դա կեանք անմահ իմ Յիսուս:

Արարչագործ ձեռքն համակ կենսատու,

Եւ իր ոտքն արեան վտակ կը հեղու:

Ո՛հ, դա անուշ, Փրկիչն է իմ եւայլն:

Փոխան օրհնից հաշտութիւնք կը լսուին

Կը լռէ նա եւ որոտմունք կը խօսին:

Ո՛հ, դա անուշ, Փրկիչն է իմ եւայլն:

Արեւ ծածկէ իր դէմք, լինի խոր խաւար

Եւ վարագոյր կը ցելանի ի տաճար:

Ո՛հ, դա անուշ, Փրկիչն է իմ եւայլն:

Սարսին լեռներ, սրտուն վէճեր անդանօր

Եւ զցաւ Փրկչին, ո՛հ, չղգայ դեռ մեղաւոր,

Ո՛հ, դա անուշ, Փրկիչն է իմ եւայլն:

Վերջին անգամ շրթունք սիրուն կը շարժին,

Երկինք երկրի, կեանք ընդ մահու կը խառնին,

Ո՛հ, դա անուշ, Փրկիչն է իմ եւայլն:

Ո՛հ, Աստուած իմ նայէ Խաչիդ ոտքին տակ

Թող սըրտիս մէջ ցոլայ վճիտ լոյսդ չտտակ,

Զի դու անուշ Փրկիչն ես իմ, հոգւոյս,

Դու արարիչ, դու կեանք անմահ իմ Յիսուս:

Մ. ՆՈՐ ՀԱՏԵԱՆ

57. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

“Jesus Christ is risen to-day”

Յիսուս Քրիստոս արդ չարեաւ, Ալէլուիա

Տօն չաղթական է աչօր, Ալէլուիա

Չարչարուեցաւ խաչին վրայ, Ալէլուիա

Որ փրկութիւն մեզի տայ, Ալէլուիա:

Երգն օրհնութեան արդ երգենք, Ալէլուիա

Ո՛հ մեր Փրկիչ Արքային, Ալէլուիա

Որ փուշն ու խաչն յանձն առաւ, Ալէլուիա

Մեղաւորին կեանք տուաւ, Ալէլուիա:

Յաւօք, վերօք դառնադին, Ալէլուիա

Եւ կը տիրէ ՚ի չերկին, Ալէլուիա

Ահա բուժեց մեր հոգին, Ալէլուիա

Ուր որ հրեշտակք միշտ բերկրին, Ալէլուիա:

Խուճք զուարթնոց քնարիւք ձեր, Ալէլուիա,

Հնչեցուցէք միաբան, Ալէլուիա,

Յարեաւ Քրիստոս Արքայն մեր, Ալէլուիա,

Թող կրքնէ աշխարհ համայն, Ալէլուիա:

58. ԼՈՒՍԱԿՈՐԵԱ ԵՐՈՒՍԱՂԵՍ

Լուսաւորեա, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս
քո. զարդարեա զամուրբս քո, եւ փառք Տեառն ի
վերայ քո ծագեացի:

Օրհնեղութեամբ, սաղմոսիւք քեզ վայելէ,
Աստուած, օրհնութիւն ի Սիւովնէ. եւ քեզ մատու-
ցին աղօթք չերուսաղէմ:

Գովեա, Երուսաղէմ, ըզՏէք, եւ օրհնեա զԱս-
տուած քո, նոր ժողովուրդ, զբշտոյ դուստըր Սի-
ովնի:

59. ՏԱՐԱԾԵԱԼ

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
 Ոտք ընդ ոտից ընթանալեաց·
 Փայտ ընդ փայտի դառնն պըտողոյ
 Կեանք ընդ մաշու փոխարկելով·
 Ի մէջ երկուց անօրինաց
 Կայր մերկացեալ տուողն օրինաց
 Զոր ոչ տեսին ազգըն կուրաց
 Բացց 'ի միոյն չաւաղակաց:

Րոպէից արեգականն
 Ըզտիւն արար դիչերանման·
 Զըստուերըն քօղ արկ մերկութեան
 Զի մի տեսցէ ակն անարժան·
 Ի միջօրեայն նըսեմացաւ
 Յորժամ Ադամ մեղօք մեռաւ·
 Ի չիններորդն 'ի լոյս դարձաւ
 Յորժամ մաշուամբ մաշըն լուծաւ:

Քարողի 'ի սքանչելեացս
 Աստուած մարմնով վասն իմ խաչեալ
 Մերով բնութեամբըս մեռանի
 Աստուած անմաշ խոստովանի·
 Կըրկնավըտակ կողին աղբերբք
 Եկեղեցի իւր Հաստատի,
 Զրովըն մաքրի դԱրիւնն ըմպէ
 ԶՈրդի ընդ Հօր փառաւորէ:

60. ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ

Անճառ լոյսին ծագումն այսօր
 Մեզի Համար սիրաչորդոր
 Կը խոնարհի մէջ վերնատան
 Կատարել տօնն ըստուերական,
 Ընթրեաց ատեն կապեց զենջակ
 Եւ ծառայի պէս ջուր լցած
 Այն որ Հագած է լոյսն Համակ,
 Իրեններուն ոտներն լըաց:

Իր ուսուցած խոնարհութիւնն
 Աչակերտաց ամէն մէկուն
 Այսօր դործով ցոյց տուաւ Նա
 Իր հրաշալի անձին վրայ,
 Ծառայ եղաւ Հող էակին
 Հուր էակէ անտես ոգին,
 Սպասաւորեց ծառաներուն
 Սերովբէներէ պաշտուողն Համբուն:

Տիեզերքի Տէրը գլխած
 Քաղցեալներուն տուաւ «կեանքի Հաց»
 Ուրախութեան բաժակն ալ նոցն
 Այն Ադամէն արտմողներուն,
 «Սա՛ Արիւնիս ուխտն է աշկեղ
 Հին զոհերու արիւնին տեղ,
 Իմ չիչատակս ըրէք անուշ,
 Մինչեւ նորէն դառնամ ձեր քով»:

Հետ դուժարուած մետասանին
 Կը խնդրենք մենք ալ, Տէր, ինքնին,
 Դու որ մարմինդ կենդանածիր
 Բաժակին Հեար բաշխեցիր,
 Տուր որ անոնց Հետ միամիտ
 Հաղորդ ըլլանք քու սեղանիդ.
 Հացիդ փափաքն ունինք մեր մէջ,
 Ըմպելիքիդ ծարաւն անչէջ:

Ն. ՇՆՈՐՀԱԼԻ

Վերածեց Աշխարհաբարի

ԱՐՔ. ԵՊՍ ԴՈՒՐԵԱՆ



Յ Ո Ր Դ Ո Ր

61. ԹԱԳՍ ՈՒ ԱՍՏՂԸ

“Will there be any star”

Ա՛հ, կ'երագեմ ես ծիշտ աչն պերճ երկիր վերին,
 Ուր պիտ հասնիմ երբ արեւս մարի,
 Երբ կանգնիմ Հոն շնորհօքն հրաշալի իմ Փրկչին,
 Թաղս, արդեօք, պիտ' աստղով, զարդարի՞:
 Թաղս, արդեօք, պիտ' աստղով, աստղով մը
 զարդարի՞:

Երբ վերջին օրն իմ արեւս մարի,
 Երբ ելլեմ Հետ սրբոց՝
 Վերն աչն ոսկի փողոց,
 Թաղս, արդեօք, պիտ' աստղով զարդարի՞:

Աշխարհ բոլոր է ինձ անապատ տըխուր, սին,
 Արադ պատեն զիս վախ, մութ անպեր,
 Ու թողու աիեղերք, օրերըս շուտ կարճին,
 Երբ խորհիմ չըկաչ մի աստղ ինձ վեր:
 Թաղս արդեօք, եւայլն:

Գործեմ, աղօթեմ ծիշտ Հսկեմ խաչիդ կռթնած,
 Շահիմ պաշտառ աստղեր, կեանքն է կարճ,
 Յօդէ Հողուցն անձրեւն խաչեալդ թեւատարած,
 Ծաղկին Հողուց զաշտեր գեղազուարճ:
 Թաղս արդեօք, եւայլն:

Ի՛նչ բերկրանք, երբ տեսնեմ վեր երես Տէրոջն իմ,
 Ժողովեմ ոսկի հունձ, դէզ գոհարի,
 Եւ իմ Տէրն ինձ ըսէ, մշակ հաւատարիմ,
 Քու թագըդ աստղով պիտո՛ դարդարի:
 Թագս արդեօք, եւայլն:

Օն, ով եղբարք, զարթնենք, հսկեն մեզ զուարթունք
 Տէրն գործի կանչէ մշակն արի,
 Կուրծք տանք գործի, կուռի, չը դառնան մեր
 թիկունք,

Որ աստղերով մեր թագ զարդարի:
 Թագս արդեօք, եւայլն:

Երկնից մէջ անաստղ թագ, ո՛հ, չի գտնուիր
 Գործ կայ քեզ մինչեւ արեւդ մարի,
 Վերէն գործի կանչեն մեզ սուրբեր թաղակիր
 Եւ այդ ձայն համար տայ կամարի:
 Թագս արդեօք, եւայլն:

Երբ ամպերով զայ Տէրն Մեծ Արքայն արքայից
 Երբ բացուին դռներ մեծ տաճարի,
 Ահեղ դատաստանի կանչեն փողեր երկնից,
 Եւ խաչին փրկող արիւն ցամքի:
 Թագս արդեօք, եւայլն:

62. ՇԱՐԱԿԱՆ

Թագաւորին չաւիտենից մատուցողը զօրհներ-
 դութիւն որ ի Կուսէն մարմնացաւ, հաստատեաց
 զաշխարհի հաւատս անասանելի, փառք նմա այժմ
 եւ չաւիտեան:

Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բան
 եւ եհեղ զարիւն Իւր Սբ. ի փրկութիւն տիեզերաց,
 փառք եւայլն:

Աստուածապէս չարուցեալ ի նորափոր ի վիմէն,
 լուսազարդեաց զեկեղեցի Իւր Սբ. ի փառքս եւ ի
 զովհետ անուան իւրոյ: Փառք եւայլն:

63. ԱՆՁԵՂՁԻՆ ՆԱՄԱՐ ԱՂՕԹՔ

Քաղցըր Փրկիչ մը ունիմ ես երկնից մէջ,
 Թէեւ բարեկամք են քիչուոր եւ տըկար,
 Հըղօր եւ գըթած իմ վըրաս կը հըսկէ ինք,
 Ո՛հ թէ իմ Փըրկիչս քուկինդ ալ ԵՄար:
 Սրտէս անդադար այս աղօթքը կ'էլլէ,
 Սիրելիս, որ Աստուած իր սէրն քեզ չայտնէ:

Հայր մը ունիմ որ ինձի պարգեւած է
 Յուս մը, ո՛հ, շատ քաղցըր ու երանելի,
 Եւ ինք զիս պիտի շուտ կանչէ իր առջեւը,
 Բայց ո՛ւր էր որ քեզ ալ իմ հետս տանէի:
 Սրտէս անդադար, եւայլն:

Ինձ փառաւոր եւ անբիծ Հանդերձներ կան՝
 Պատրաստ իմ աչքերս ըզմայլեցընելու,
 Բայց երբոր զանոնք փառաց մէջ վերն հագնիմ ես
 Ո՛հ, քեզ ալ տրուէր այն զգեստն հագնելու:
 Սրտէս անդադար, եւայլն:

Խաղաղութիւն մը ունիմ իմ սրտիս մէջ
 Ձոր աշխարհասէրք բընաւ չեն վայելեր.
 Անոր աղբիւրն է մի միայն իմ Փըրկիչըս,
 Ո՛հ թէ այս վայելը քեզի ալ տրուէր:
 Սրտէս անդադար, եւայլն:

Տէրն երբ գտնէ քեզ, ուրիշներ փնտոէ դուն,
 Ձի ինք նախ ըղքեզ փնտուելու հաճեցաւ.
 Անոնց համար ալ կ'ընդունուի քու աղօթքըդ,
 Ինչպէս իմինս քեզ համար ընդունուեցաւ:
 Սրտէս անդադար, եւայլն:

64. ՅՆԾԱՅԷՔ Ի ՏԷՐ

Ի Տէր ցընծացէք բերկրանօք
 Արդարք որ ուղիղ էք սրտով,
 Ի բայց մերժեցէք վիշտ եւ հոգ,
 Դուք որ զայն ունիք անվրդով:
 Ի Տէր, Ի Տէր բերկրելու ցնծացէք միշտ Ի Տէր.
 Ի Տէր, Ի Տէր բերկրելու ցնծացէք միշտ Ի Տէր:

Ուրախ եղէք զի Տէր է նա
 Յերկրի եւ յերկինս գերազօր.
 Ամէն ինչ իրմով կը կենայ,
 Սօսքն է փրկարար եւ Հրօր:
 Ի Տէր, Ի Տէր, եւայլն

Թէեւ սուրբ մարտին Ի Հանդէս,
 Երբեմն չարաղի չարթանակ.
 Յերկնից զօրութեամբ մը անտես,
 Պիտի ձեզ օղնէ սուրբ բանակ:
 Ի Տէր, Ի Տէր, եւայլն

Եւ երբ ձեր կենաց ջինջ երկին,
 Յերեկ ժամուց մէջ խաւարի,
 Թող չը վըհատի ձեր հոգին.
 Այլ չոյս թող տածէ քաջարի:
 Ի Տէր, Ի Տէր, եւայլն

Ի Տէր ցնծացէ՛ք խնդազին,
 Չնա դովեցէ՛ք ազգք ամէն,
 Քնարով եւ ի ձայն ձեր նուագին,
 Ըսէք, Ալէլուիա, Ամէն:
 Ի Տէր, Ի Տէր, եւայլն

Թարգ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

65. ՏՈՒՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ

“O, Land of Rest”

Տուն Հանգստեան Հոգւոց, սրտի,
 Երբ պիտ' վաչրկեանն Հասնի,
 Երբ պիտ' դնեմ գէնքերս մէկդի.
 Հանդէկ զիրկն Յիսուսի.

Գործենք մինչ Յիսուս դայ,
 Գործենք մինչ Յիսուս դայ,
 Գործենք մինչ Յիսուս դայ,
 Յերկինս մեզ Հանդիստ տայ:

Ոչինչ Հաճուք աստ անփոփոխ,
 Ոչ ոք խաղաղ անվիշտ,
 Աստ անապատ լի ա՛հ ու դող
 Յաշխարհի չիք Հանդիստ.
 Գործենք մինչ Յիսուս դայ, եւայլն:

Յիսուս փրկչին չարիմք ընդ միշտ
 Նա բիւր ցաւոցս դարմանն
 Նորա կրծոց չենու՞մք ընդ միշտ
 Մինչեւ Հասնիմք կալանն.
 Գործենք մինչ Յիսուս դայ, եւայլն:

Յառաջ ուրեմն Ի կողմն փրկչին
 Ոչժ տամք ան փոյլժ քայլից
 Մահուան քրտուկք թող արդ ջնջին
 Ձի ալժմ մօտ եմք երկնից.

Գործենք մինչ Յիսուս դայ, եւայլն:

66. ԼՈՅՍ ԽՐԿԷ

“Send The Light”

Ո՛հ, ալիքներ այս ի՞նչ հառաչ կը բերեն,
Լո՛յս խըրկէ, Լո՛յս խըրկէ:

Շատ հողիներ կան փրկելու խաւարէն.

Լո՛յս խըրկէ, Լո՛յս խըրկէ:

Խմբ. Լո՛յս խըրկեցէք լոյսը սուրբ Խօսքին,
Թող ան փայլի ամէն դին:

Ո՛հ, խըրկեցէք դուք ըզսուրբ Մատեանն,

Տարածուի միշտ, չաւիտեան:

Ա՛րդ, այս լուրը մենք լըսողներս անձնուէր,

Լոյս խըրկենք, Լոյս խըրկենք:

Մէր-Աստուծոյն մատուցանենք մեր նուէր,

Լոյս խըրկենք, Լոյս խըրկենք:

Ո՛հ, խըրկեցէք: Եւայլն:

Տէրոջ շնորհքն առատանայ ամէն դին

Լոյս խըրկենք, Լոյս խըրկենք:

Թող բընակի մեր մէջ Փրկչի սէր-հողին.

Լոյս խըրկենք, Լոյս խըրկենք:

Ո՛հ, խըրկեցէք: Եւայլն:

Թարգ. Հ. Գ. ՇԻՐՈՅԵԱՆՑ

67. ԵՂԱՅՐՈՒԹԻՒՆ

Եղբայր ենք մենք, մէկ Հօր որդիք.

Զըկայ մեր մէջ մեծ կամ պղտիկ.

Մէկ ուսուցիչ ունինք՝ Յիսուս,

Մէկ մեր հաւատք՝ եւ մէկ մեր յոյս:

Մէկ ճամբայով կերթանք մէկ տուն,
Տուն լուսեղէն, չաւերժ սիրուն,
Ուր մահ կամ վախ չը կայ մեզի
Ամէնքը հոն սիրով են լի:

Ի միասին հոն չաւիտեան

Պիտի բնակինք մենք համաձայն.

Ուստի սիրենք հոս մէկըմէկ,

Մէկ սիրտ ըլլանք եւ մէկ խորհուրդ:

68. ՔՈՒ ՓՈՔՐ ԱՆԿԻՆՆԻ ՓԱՅԼԵՑՈՒՐ

“Brighten the Corner”

Մըսպասեր մինչեւ որ դորժ մ'ընես դիւցազնական,

Մի թողուր քու անկիւնըդ թափուր,

Հաւատարիմ եղիր քու պարտքերուդ զանազան,

Քու փոքր անկիւնըդ փայլեցուր:

Խմբ. Քու փոքր անկիւնըդ փայլեցուր,

Քու փոքր անկիւնըդ փայլեցուր,

Թերեւս փրկես մոլորած մը լոյսովդ երկնասուր

Քու փոքր անկիւնըդ փայլեցուր:

Փարատէ վերեւ կուտակուած ամպերը մթին,

Անձնասէր կեանք մ'անցուներ ի դուր.

Թերեւս լոկ մէկ սիրտի մէջ իջնայ երդդ ցնծադին,

Քու փոքր անկիւնըդ փայլեցուր:

Խմբ. Քու փոքր անկիւնըդ փայլեցուր, եւայլն:

Քու տաղանդներդ դորժածէ միշտ մարդկութեան
ի սէր,

Ցուցցուր այդուն աստղ լուսատուր,
Կենաց հացը ձեռքովդ բաժնէ միշտ սիրանուէր,

Քու փոքր անկիւնըդ փայլեցուր:

Խմբ. Քու փոքր անկիւնըդ փայլեցուր, եւայլն:

Թարգ. ԳԱԼԵՆԻԿ Ս. ԹԻՄՈՒՐԵԱՆ

69. ՄԷԿԸ

Մէկը ըրաւ դործ մը ընտիր
 Կարօտի մը տալով ձեռքն իր
 Մէկը երգեց երգ մը զուարթ
 Խրախուսելով մի տխուր մարդ
 Արդեօք դուն էի՞ր մէկն
 Արդեօք դուն էի՞ր մէկն:

Մէկը հաւտաց քաղցր է ապրել
 Բաց պատրաստ էր մինչ իսկ զոհուել
 Մէկը մղեց մի բուռն պաշքար
 Պաշտպանելով փաստը արդար
 Արդեօք դուն էի՞ր մէկն
 Արդեօք դուն էի՞ր մէկն:

Մէկը տուաւ սիրոյ նուէր
 Վերցուց չոզնածին ծանր բեռ
 Մէկը պատմեց սէրն Յիսուսի
 Եւ իր անգին զոհն ի Խաչի
 Արդեօք դուն էի՞ր մէկն
 Արդեօք դուն էի՞ր մէկն:

Մէկն օրն ըրաւ պայծառ լուսով
 Գիշերուան մութն փարատելով
 Մէկին դործն էր չոյս ներչնչել
 Իր օրինակով կեանքեր ուղղել
 Արդեօք դուն էի՞ր մէկն
 Արդեօք դուն էի՞ր մէկն:

70. ՏԷՐՆ ՔԵԶ ՊԻՏԻ ՀՈԳԱՅ

“God Will Take Care of You”

Մի վհատիւր փորձութեան մէջ,
 Տէրն պիտի քեզ հոգայ:
 Վստահէ միշտ սիրոյն անչէջ,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Խմբ. Տէրն քեզ պիտ' խնամէ
 Զօրացնէ, առաջնորդէ
 Ան քեզ պիտ' խնամէ
 Տէրն քեզ պիտ' խնամէ:

Երբ դուն կ'անցնիս խոր ձորերէն,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Երբ վտանգներ քեզ կը պատեն,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Տէրն քեզ պիտ' խնամէ, եւայլն:

Կը հայթայթէ պէտքերդ բոլոր,
 Տէրն պիտի քեզ հոգայ:
 Խնդիրքդ Անոր տար ամէն օր,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Տէրն քեզ պիտ' խնամէ, եւայլն:

Սրտիդ տաղնապն ինչ ալ ըլլայ,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Յոգնած գլուխդ դեր կուրծքին վրայ,
 Տէրն քեզ պիտի հոգայ:
 Տէրն քեզ պիտ' խնամէ, եւայլն:

71. Ո՛ՒՐ Է ՈՐԴԵԱԿՍ ՉԷՔ

“Oh, where is my boy to-night”

Արդեօք ուր է որդեակս Հիմա,
Որդեակին իմ սիրական
Կենացս նեցուկն եւ յոյսն էր նա
Սիրոյս ալ առարկան:

Ո՛հ ա՛ւր է որդեակս արդեօք,
Ո՛հ ա՛ւր է որդեակս արդեօք,
Սիրտս վշտաձար, զինք մոռնալ չեմ
կըրնար,
Ո՛հ ա՛ւր է որդեակս արդեօք,

Երբ ծունըր դար իր մօրը քով,
Ցօղի պէս էր մաքուր.
Սիրուն էր յոյժ եւ քաղցր դէմքով,
Աչնքան հեղ էր սիրտն իւր:
Ո՛հ, ո՞ւր է որդեակս արդեօք, եւայլն:

Ո՛հ, ինձ նորէն տըրուէր որդեա՛կ
Տեսնել քու դէմքդ սիրուն,
Որուն ժըպիտը անուշակ
Կ'ընէր զըւարթ մեր տուն:
Ո՛հ, ո՞ւր է որդեակս արդեօք, եւայլն:

Ո՛հ, փնտուեցէք հոգևոյս հատոր,
Իր մօրը նազելին.
Ձի սիրտս կ'անձկաց ըսել անոր,
«Կը սիրեմ քեզ տակաւին:»
Ո՛հ, ո՞ւր է որդեակս արդեօք, եւայլն:

72. ԹԷԵՒ ՁԵՐ ՄԵՂՔԵՐ ԿԱՐՄԻՐ

“Though Your Sins”

Թէեւ ձեր մեղքեր կարմիր
Ձիւնի պէս պիտ' ճերմկնան,
Թէ որդան կարմիրի պէս,
Պիտի ըլլան իբր ասըր:
Թէեւ ձեր մեղքեր կարմիր
Ձեր մեղքեր կարմիր,
Ձիւնի պէս պիտ' ճերմկնան
Ձիւնի պէս պիտ' ճերմկնան
Թէեւ ձեր մեղքեր կարմիր
Ձիւնի պէս պիտ' ճերմկնան:

Լսեցէ՛ք ձայնն կ'աղաչէ,
Ո՛հ շուտ, Աստուծոյ դարձէք.
Ան ի՛նչ մեծ սէր կարեկիր,
Եւ գութ, գորովանք ունի:
Լսէ՛ ձայնն որ կ'աղաչէ
Ձայնն որ կ'աղաչէ.
Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք
Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք
Լսէ՛ ձայնն որ կ'աղաչէ,
Ոհ, շուտ Աստուծոյ դարձէք:

Կը ներէ ձեր ջանցանքներն,
Ալլեւս չի չիչեր զանոնք,
Ինձ նաչեցէ՛ք, ով մարդիկ,
Կ'ըսէ ձեր Աստուածն հըզօր.
Կը ներէ ձեր ջանցանքներն,
Ներէ ջանցանքներն,
Ալլեւս չի չիչեր զանոնք,
Ալլեւս չի չիչեր զանոնք,
Կը ներէ ձեր ջանցանքներն,
Ալլեւս չի չիչեր զանոնք:

73. ՎՍՏԱՆԷԻ ՀՆԱԶԱՆԻ

“Trust and Obey”

Երբ քալենք Տէրոջ Հետ,
 Անոր խօսք արփաւէտ՝
 Ո՛հ ի՛նչ փառք կը Հեղու մեր ճամբան.
 Երբ Իր կամք կատարենք,
 Զինք մեզ Հետ կը գըտնենք,
 Հընազանդ իր որդւոց՝ պահապան:
 Օ՛ն վըստահէ՛, սուրբ պատգամը այս է,
 Հետեւելով Յիսուսին, Հնազանդ իր խօսքին:

Ըստուեր կամ ամպ մըթին
 Չերեւիր ի չերկին —
 Կ'անՀետի՛ Իր անոջ ժըպիտով.
 Ո՛չ կասկած եւ ո՛չ աՀ
 Մեզ արցունք կը սպառնայ
 Երբ Իր Հետ կը քալենք անվրդով:
 Օ՛ն վըստահէ՛, եւայլն:

Չենք կըրեր ո՛չ մի բեռ
 Եւ կամ վիշտ անըմբեր —
 Ան մեղմէ կը վանէ քաջ ի բաց,
 Յաւեր Հոժ ու դաժան,
 Ու մեր խաչն անբաժան
 Իր անդին օրՀնութեամբ են լըցուած:
 Օ՛ն վըստահէ՛, եւայլն:

Արդ երգենք անտըրտում
 Իր սէրը անպատում,
 Իր բազնին բերելով մեր ընծան.
 Զի չընորհք իւր անՀուն
 Եւ անխառն բերկրութիւն
 Են անոնց՝ որ Անով կը ցընծան:
 Օ՛ն վըստահէ՛, եւայլն:

74. ԹՈՂ ՎԱՌԻՆ ԱՂՕՏ ՃՐԱԳՆԵՐԸ

Կը փայլի մեր Հօրը գութը,
 Իր լուսոյ գահին վերերն.
 Բայց պահելն մեզի ջանձնած է
 Եզերքին վրայ կանթեղներն:
 Թող վառին աղօտ ճրագները,
 Լոյս ղրկեն ալեաց մէջէն.
 Տատանեալ մարած նաւորդ մը
 Դուն կընաս փրկել կորստէն:

Ո՛հ մեղաց գիշերն պատած է,
 Ալիքները կը դողան,
 Անձկանօք դիտող աչքեր կան,
 Որ եզերքը լոյս տեսնան:
 Թող վառին աղօտ ճրագները,
 Լոյս ղրկեն ալեաց մէջէն.
 Տատանեալ մարած նաւորդ մը
 Դուն կընաս փրկել կորստէն:

Արդ, եղբայր, վառէ՛ կանթեղը,
 Նաւորդներն թող Հրաւիրուին.
 Կը փնտենն նաւահանգիստը
 Ո՛հ, մութին մէջ չը կորսուին:
 Թող վառին աղօտ ճրագները,
 Լոյս ղրկեն ալեաց մէջէն.
 Տատանեալ մարած նաւորդ մը
 Դուն կընաս փրկել կորստէն:



ԶԻՆՈՒՈՐԵԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

75. ՀԱՅՈՒՆ ՔԱՅԼԵՐԳԸ

Ո՛չ, ո՛չ, թէեւ ընկճուած, խաչուած,
Մենք կը մնանք խրոխտ ու կանգուն.
Միշտ խոշտանգուած, բայց վերն Աստուած
Մեր չաղթութիւնն է աննդիուն:
Մենք Վարդանի սուրբ արիւնին
Ժառանգներն ենք անմեկին.
Թէեւ անզօր ինչանք գետին,
Մե՛րն է նորէն չաղթութիւն:
Դարեր, ազգեր մեզ լքեցին
Մեր կապտեցին եկեղեցին,
Հալածական ու տարագիր.
Տուն, հայրենիք, կեանք, պատիւ, գիր:
Մենք Վարդանի սուրբ արիւնին եւայլն:
Ո՛չ սուր ունինք, թնդանօթ, զէնք,
Ո՛չ տէրութիւն, բանակ, տորմիզ.
Մեր զօրապետ Յիսուս կ'ուզենք,
Ճշմարտութիւնն է մեր զէնք ուղիղ:
Մենք Վարդանի սուրբ արիւնին եւայլն:
Խաղաղութեան քաջ զինուորներ,
Դէ՞մ կը կուտինք պատերազմին.
Ալ բաւ նախճիր, արիւն աւեր,
Պատերազմն է մեր թշնամին:
Մենք Վարդանի սուրբ արիւնին եւայլն:

ԱԿԻԻԼԻՆԷ

76. ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

“Onward Christian Soldiers”

Օ՛ն, Փրկչին զինուորներ,
Օ՛ն, յառա՛ջ ի մարտ,
Խաչանիշ դրօշը ձեր
Թող ծածանի չաղթ.
Քրիստոս մեր Տէր Արքան,
Առաջնորդն է մեր,
Օ՛ն, կըռուինք չաղթական,
Բռնենք դրօշն ի վեր:
Խմբ. Օ՛ն, Փրկչին զինուորներ,
Օ՛ն, յառա՛ջ ի մարտ,
Խաչանիշ դրօշը ձեր
Թող ծածանի չաղթ:

Տէրոջ Եկեղեցին
Շարժի զերթ բանակ,
Մեզ ալ պահուած է հին
Մըրրոց չաղթանակ.
Մընանք միշտ անբաժան
Մէկ սիրտ մէկ հոգի,
Միրով եղբայրութեան
Յովսովն հաւատքի:
Օ՛ն, Փրկչին զինուորներ: Եւայլն:

Գահեր կը կործանին
Ու պետութիւններ,
Տէրոջ Եկեղեցին
Կը մնա, աներեր,
Դըժոխքին սեւ դուռներ
Յաղթել չեն կարող,
Զայդ խոստացած է Տէր
Անսուտ խոստումով:
Օ՛ն, Փրկչին զինուորներ: Եւայլն:

Օ՛ն, դուք ժողովուրդներ,
 Միացէ՛ք խուճբին,
 Խառնեցէ՛ք ձայնն ալ ձեր
 Յաղթութեան երգին:
 Փա՛ռք, պատի՛ւ մեծ Փրկչին
 Թագաւորին մեր.
 Թող միշտ մեզ ձայնակցին
 Մարդիկ, Հրեշտակներ:
 Օ՛ն, Փրկչին զինուորներ: Եւայլն:

Թրգմ. ԳՐ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

77. ԿԵԱՆՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այս կեանքս պատերազմ է եւ մենք զինուորներ,
 Մեղաց ու դիւին դէմ պիտի մարտնչինք
 Իրաւ խորամանկ են մեր թշնամիներն,
 Բաց մենք զՔրիստոս զօրապետ մեր ունինք:
 Կանգնէ Յիսուսի Համար ով քրիստոնեայ,
 Քեզի Համար ինք կանգնեցաւ խաչին վրայ,
 Դուն ալ մի վախնար, Տէրոջդ Համար
 Կանգնէ եղիւր քաջ վրկայ:

Աստուած կը բանայ քեզ իրեն զինարանն
 Կը Հագուեցունէ ըզքեզ արդարութեամբ,
 Գըլխուդ սաղաւարտ կուտայ չոյս փրկութեան
 Քու մէջքդ ամուր կ'ընէ ճշմարտութեամբ:
 Կանգնէ Յիսուսի Համար, Եւայլն:

Իր խօսքը մեր ձեռքն ունինք, սուր երկսայրի,
 Վահանն Հաւատոյ մեզ կ'ընէ անվտանգ,
 Մեր շաւիղներուն վրայ սուրբ լոյս կը փայլի,
 Ուստի, Տէրոջմով զօրաւոր միշտ կ'ըլլանք:
 Կանգնէ Յիսուսի Համար, Եւայլն:

Արթուն կենալով եւ ազօթք ընելով
 Բոլոր մեր դէնքերն կը մնան միշտ փայլուն,
 Եւ մենք Յիսուսի օգնութեամբն ապահով
 Կ'ըլլանք, եւ Անոր շնորհքով Հաստատուն:
 Կանգնէ Յիսուսի Համար, Եւայլն:

Անթիւ փորձութեանց պիտի Հոս Հանդիպինք,
 Սակայն Քրիստոսով ամենուն կը չաղթենք
 Եւ Յորդանանու ջուրերէն երբ անցնինք
 Մեզի Համար զինք Հոն կանգնած կը տեսնենք:
 Կանգնէ Յիսուսի Համար, Եւայլն:

78. ՅԻՍՈՒՍԻ ԿԱՄԱԿՈՐՆԵՐԸ

Մենք Յիսուսի ուխտեալ զինուոր,
 Սիրոյ դաշնով կազմած բանակ,
 Համոզումով չոյժ զօրաւոր,
 Յառա՛ջ, դէպ 'ի վեհ նպատակ:

Համաշխարհի լայն Հորիզոն
 Քաղցրիկ լոյսով մեզ կը ժպտի,
 Պայծառ չոյսեր կը շողան Հոն,
 Յնդին վախերն մեր սնտախ:

Եւ պատմութեան կուրծքէն աւեր,
 Հին դարերու խորունկ ծոցէն.
 Եղծած այլ սուրբ չիշատակներ,
 Մեզ 'ի խրախոյս կ'ողեւորեն:

Ահա՛, տեսէք ամենազգի
 Մեր եղբայրներ, որք կ'ընկրկին
 Պայքարին մէջ դժնէ կեանքի,
 Եւ օգնութեան կը կարօտին:

Օ՛ն, Յիսուսի ձայն սրբանուէր
Որչա՛փ անուշ, սիրով զեղուն,
Եւ Ի՛նչ ազգու կուտայ Հրաւէր
Միանալու իր քաջերուն:

Յառա՛ջ, դէպ ՚ի վեհ նպատակ,
Մեր Համոզման մէջ զօրաւոր,
Սիրոյ դաշնով կազմած բանակ
Կռուինք Փրկչին իբրեւ զինուոր:

Ռ. ԲԱԳՈՒՊԵԱՆ

79. Օ՛Ն Ի ԳՈՐԾ

“To The Work, To The Work,”

Օ՛ն ի գործ, օն ի գործ, ով եղբարք օն յառաջ
Հետեւինք այն շաւղաց, յորս մեր Տէրն է քալած,
Նորոգենք մեր ջան ոյժ, եւ գործենք ի մեծ յոյս՝
Տարածենք սէր եւ լոյս, Տէրն է մեր խրախոյս:

Օ՛ն յառաջ, օն յառաջ, օն յառաջ, օն յառաջ,
Ի մեծ յոյս սպասենք, Տեառն գալստեան անդուլ
գործենք:

Օ՛ն ի գործ, օն ի գործ, ըզքաղցեալն յաղեցնենք,
Եւ կենաց աղբիւրին, ծարաւեալն մօտ բերենք,
Պարծենանք ի խաչ Տեառն, աւետենք ամէնուն,
Կենտական այս մեծ լուրն, է ձրի փրկութիւն:

Օ՛ն յառաջ, օն յառաջ, օն յառաջ, եւայլն:

Օ՛ն ի գործ, օն ի գործ, յարածամ կայ մեղ գործ,
Կործանենք Սատանին զօրութիւն ու ամբողջ,
Ամէն տեղ բարձրանայ, Եհովայ մեծ անուն,
Եւ դոչենք մեծաձայն, է ձրի փրկութիւն:

Օ՛ն յառաջ, օն յառաջ, օն յառաջ, եւայլն:

Օ՛ն ի գործ, օն ի գործ, Տէրն է մեր զօրութիւն,
Թէ գործենք եռանդուն, կայ մեղ թագ մը փայլուն,
Երբ Հասնինք ի յերկինս, փառաւոր վերին տուն,
Անդ երգենք սրբոց Հեա, է ձրի փրկութիւն:
Օ՛ն յառաջ, օն յառաջ, օն յառաջ, եւայլն:

Կ. ՊԵՇԿԷՅԻՍԻՒՐԵԱՆ

80. ԲԵՐԴԸ ՊԱՆԵՑԷՔ

Բաջ եղէ՛ք, ո՛վ եղբարքներս,
Մերձ է օգնութիւն.

Վերը կ'երեւնայ նշանը,
Ստուգ է յաղթութիւն:

«Շուտ կուգամ» կ'ըսէ Տէրը,
«Բերդը պահեցէ՛ք»:

— «Կը պահենք, Տէր քու շնորհքովք»
Պատասխան տուէք:

Մեր անյաղթ թշնամիները
Բազմութեամբ կուգան,

Եւ անոնց չար զօրապետը
Ինքն է սատանան:
«Շուտ կուգամ» եւայլն:

Պանծալի է մեր դրօշակը,
Փողը կը լսենք,

Մեր զօրապետին անուամբը
Պիտ' անշուշտ յաղթենք:
«Շուտ կուգամ» եւայլն:

Դառն, երկար է պատերազմը,
Սակայն դիմացէ՛ք.

Մեր անյաղթ Զօրազըլուիսը
Մօտ է, քաջ եղէք:
«Շուտ կուգամ» եւայլն:

81. ՆՐԱԻԷՐ

Օ՛ն, վեր ելէք, դէպի Սիօն,
 Սիրողք փրկչին հասաւ մեզ տօն,
 Տեսէք ահա ցելուն ամպեր
 Եւ մեզ կենաց դուռն է բացուեր:

Օ՛ն, դուք անդադար
 Հարէք փող քնար,
 Տուէք օրհնութիւն
 Մերձ է փրկութիւն:

Կ'ըսէ Փրկիչ մեր մարդասէր
 Ձեզ կը սպասեն ամէն ազգեր,
 Մահուան շուքին մէջ ընկղմած,
 Ձեզմէ խնդրեն պատգամ կենաց:
 Օն ձեր խումբք այժմէն
 Թող երգեն, պատմեն
 Փրկչին բարութիւն
 Մերձ է փրկութիւն:

Օ՛ն վազեցէք երկրէ երկիր,
 Միթէ եւ դուք չէ՞ք խաչակիր,
 Անահ, անվախ քարոզեցէք,
 Փրկիչն ընդ ձեզ է, մինակ չէ՛ք:
 Օն դուք ի մի ձայն
 Ի Փրկիչ արքայն
 Երգեցէք խիղոյն
 Մերձ է փրկութիւն:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

82. ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստա՛ն երկիր դրախտավայր,
 Դու մարդկայնոց ցեղիս որրան.
 Դու եւ բնիկ իմ հայրենիք,
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Իվե՛հ անունդ սիրտ իմ ո՛հ չտոյժ,
 Ոգեւորի ի նոր խրախոյս.
 Եւ անձկայրեաց ի քեզ չուսամ,
 Իքեզ, իքեզ, չոյս իմ միայն,
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, անուն փարելի,
 Իքեզ հանգիստ նոյեան տապան
 Եգիտ, եւ քեւ ապրեցաւ Նոյ,
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Գետք քաջառողջք ատենարուք,
 ՁՀողդ բարի առնեն չուրթի.
 Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
 Քե՛ւ, քե՛ւ պանծամ, փառք իմ միայն,
 Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

83. ԾԻԾԵՌՆԱ՛Կ, ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դո՛ւ, գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թըռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թըռի՛ր, ծիծեռնակ,
Ծընած տեղս — Աշտարակ.
Անդ շինիր քո բոցնը —
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու՝ ալեւոր
Հայր մը ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդւոջն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարեւ արա՛.
Ասա՛, թող նստի լայ
Իր անբախտ որդւոջն վըրայ:

Դու պատմէ՛, թէ ինչպէս
Աստ անտէր եւ խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ Համար ցերեկը
Մութ է թուում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտս չէ գալիս:

Շուտով սառ հողի տակ
Կը պառկիմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Միշտ ցաւալի չիշատակ:

84. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Ով մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ Հեշտ բարբառ մայրական,
Փափկահնչուն բառերուդ
Նըման արդեօք այլ տեղ կա՞ն:

Դու որ նախ ինձ հընչեցիր
Սիրալին, ո՛հ, Հեշտ խօսքեր,
Այն նախ ըզքեզ թոթովելս՝
Դեռ իմ մտքէն չէ ելլեր:

Ի՞մ մայրենի քաղցր լեզու,
Կեա՛յց անսասան, կեա՛յց չաւէտ,
Կեա՛յց միշտ լեզուդ Հայկարժան,
Կեա՛յց ծաղկալից ծաղկաւէտ:

Ի՛նչ դառն վիշտ է սըրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու՝
Բըռնի իրեն զիս քաշէ,
Սըքտէս արիւն կը հեղու:

Ո՛հ, այն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող ի սրտէ,
Չէ՛, այն չէ քաղցր իմ լեզու
Որ սիրով զիս ողջուէ:

Ի՞մ մայրենի քաղցր լեզու, եւայլն:

Յաւերժական Սուրբ Գրոց մէջ
Կեա՛յց միշտ նորէն եւ նորէն,
Կըշուալ անուշ քու տողերդ
Թող ամէն սիրտ արծարծեն:

Շնորհ ուզել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շըրթունք սըրտէ բորբոքած
Կ՛աղաղակէ անարգել:

Ի՞մ մայրենի քաղցր լեզու, եւայլն:

85. ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան չքեղ
 Թէ երգք թռչին սիրողարար,
 Մատունք կուսին ամենագեղ
 Թէ որ զարնեն փափուկ քնար,
 Չունին ձայն մի այնքան սիրուն
 Քան զանձկալի եղբայր անուն:

Տո՛ւր ինձ քո ձեռք, եղբայր ենք մենք,
 Որ մըրըրկաւ էինք զատուած,
 Բաղբին ամեն ոխ չարանենդ
 Ի մի համբուր ցրբուին ի բաց:
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալեւոր Մայր Հայաստան,
 Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
 Սըրտին խորունկ վէրքերն դաժան
 Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, եւայլն:

Մէկտեղ լացինք մենք ի հընում,
 Եկէ՛ք դարձեալ չար անբաժան
 Խառնենք զարտօսը եւ ըզխընդում,
 Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, եւայլն:

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
 Մէկտեղ թափին մեր քրտինքներ.
 Ըզճունձ բարեաց չերկինս հանենք,
 Որ կեանք առնուն Հայոց դաշտեր:
 Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, եւայլն:

86. ՍՐԻՆԳ

Ե՛կ իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,
 Նիհար չըրթներդ, ո՛հ, երերուն,
 Դի՛ր դալկահար իմ չըրթներուն,
 Երգենք ու լանք, լանք ու երգենք արտօմագին:

Լա՛յց, զի լոկ քեզ դըտայ հատորն իմ սրտին:
 Դու բարունակ էիր կանաչ,
 Երբ մի՛ անդուժ ձեռք անճանաչ
 Կտրեց զքեզ, անջատեց մայրն ու որդին:

Եւ թոչ տուիր որ լանջքիդ վրայ դալարուտ
 Ծակեր բացին, վէրք երկաթի,
 Թող այս վէրքէն, ըսիր, կաթի
 Արիւն, բողոք՝ միակ սփոփանք վիշտերուդ:

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց
 Մի անձանօթ պատճառ վըզիս
 Լուծ մը դըրաւ, ո՛րբ կոչեց զիս,
 Եւ հօր ու մօր սիրուցս կարօտ զիս թողուց:

Իմ ալ կուրծքըս ծակծրկեցին ժանտ վէրքեր,
 Եւ որպէս դուն սիրես որմին
 Յենուլ, լըռել, մինչեւ որ մին
 Չի չուղէ քեզ, չես հառաչեր, չես երգեր:

Լըռիկ մընջիկ սիրեմ եւ ես հեռու կալ
 Ընկերութեան սին ժըխորէն,
 Եւ իմ սըրտին, հոգւոյն խորէն
 Չըննել, ըզդալ, լոկ զարմանալ ու խողալ:

Թող երգեհոն, դաշնակ, քընար գեղգեղեն
 Յեկեղեցուց ի գինետան,
 Աղօթք եւ սլար թըռչին, խայտան՝
 Թող այլք վայլեն հաճուց մամնոց հողեղէն.

87. ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞մ հայրենիք զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն,
Հայու որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը:
Բոպիկ ոտքով, արձակ մազով,
Կ'արտասուէ Հայաստանը:

Ո՛հ, թողէ՛ք զիս՝ խօսիմ աղատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անո՛ւշ երկիր, կոչս անարատ,
Աննճման Հայաստանը:

Արեւ ծածկեր է իր դէմքը,
Խաւար է Հայաստանը:
Հայոց արեւն ալ մարեր է,
Սեւ է հագեր Հայաստանը:

Մինչեւ կտրի իմ վերջի շունչ՝
Պիտի կանչեմ Հայաստան,
Պըլլուիմ մէջ մ'իմ հայրենեացս,
Ապա մտնեմ իմ գերեզման:

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կտրել այս ձաջն չէ՛, չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին:

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

88. ԱԻԱՐԱՅՐԻ ՆԱՀԱՏԱԿՔ

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լուեր են.
Երկնից թող դան անմահ հողիք
Հայոց քաջերն պսակել:

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Ա՛հ, վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնէ մահարձան
Մենաստաններ, խաջն ի դժբէթ,
Աւետարան սուրբ տաճար:

Լուսին, լուսին, աչքովդ անքուն.
Պահէ Հայոց ոսկորներ,
Եւ մայիսի դուարթ ցօղով՝
Յօղէ անոնց շիրիմներ:

Արծիւք, բաղէք Հայաստանի,
Եւ արագիւք ամրան հիւր.
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ շինէք բուն.
Եւ ծիծեռնակ դաչ ու երթայ
Մինչեւ Հայոց գաչ դարուն:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

89. ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք եղբայրք, մարդկութեան մէջը,
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.

Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք:
Եղբայրք, Հայ ապրինք:

Հայ ապրինք, մեր հայրն է ան դիւցադուն,
Որ աղատութիւն սորվեցուց մարդուն.
Ու մեզ վե՛հ անուն մը տուաւ բաժին.

Եղբայրք, Հայ ապրինք:

Մեր ազգն հետեւող ճիշտ Յիսուսի,
Որ խաչն աչքան դար առած չուսի,
Ո՛չ, չ'խոնարհիր, չ'ըլլար դասալիք.

Եղբայրք, Հայ ապրինք:

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալից,
Այո, Հայուն կեանք, կեանք է ցաւալից,
Բայց խաչն չաղթութեան ունի վե՛հ կնիք.

Եղբայրք, Հայ ապրինք:

Մեր քաղցր հայրենիք, մեր թագ, դաւադան,
Ամպերն են ծածկեր արեւի նման,
Յուսացէք արեւ կուտայ մեզ երկինք.

Եղբայրք, Հայ ապրինք:

Ո՛չ, ճակատագիր մեր, չէ միշտ տխուր,
Զթշուառութեան ուտել հացն ու ջուր,
Նոր երջանկութեան ապագայ մը ունինք,

Եղբայրք, Հայ ապրինք:

Հայ ապրինք որ մեր որդիք ալ, եղբայրք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք,
Զըլլանք հայ անուան, չըլլանք նախատինք

Եղբայրք, Հայ ապրինք:

90. ԹՈՂ ՓՁԷ ՔԱՄԻՆ

Թո՛ղ վը՛չէ քամին՝ պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող դայ
Որքան որ կ'ուզէ՝ թող վը՛չէ հիւսիս.
Յուսով եմ, չուսով եմ, վաղ ուշ
արեւ պիտ' ծագի:

Թուղալը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանճըր մառախուղ թող տիրէ Երկիր.
Տարերք աչխարհի խոնուին իրար
Յուսով եմ, չուսով եմ, վաղ ուշ
արեւ պիտ' ծագի:

Թող դայ հալածանք, թող դայ փորձութիւն,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լուսը.
Սարսափելի չէ Հային տառապանք,
Միայն թէ միայն թէ չհասնէր
խեղճուկի չուսը:

Թո՛ղ վը՛չէ հիւսիս, թո՛ղ չ'երգէ սոխակ,
Թող միշտ այդ քամին քանդէ մեր տընակ,
Որքան որ կ'ուզէ թող մեզ սարցընէ.
Գիտեմ որ, գիտեմ որ ասոր վերջը
խիստ մօտ է:

Թիւրք թող պատէ մեզ խոնաւ բանտերուձ
Մահ թո՛ղ առնէ մեզ իր ճիրաններու.
Ծանր շղթաներով թող մեզ կաշկանդէ,
Մեր չոյսն է մեր չոյսն է հաստատ
եւ խիղճը արդար:

91. ԳԱՐՈՒՆ

Ո՛հ, ինչ անուշ եւ ինչպէս զով
 Առաւօտուց փչես, հովիկ,
 Ծաղկանց վրայ դուրդուրալով
 Եւ ճաղերուն կուսին փափկիկի:
 Բայց չես հովիկ իմ հայրենեաց.
 Գնա՛, անցիր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ աղու եւ սրտագին
 Ծառոց ձէջէն երգես, թռչնիկ,
 Սիրոյ ժամերն ի չանտառին
 Զճալլեցան ի քո ձայնիկ.
 Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
 Գնա՛, թռիր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՛նչ մրմունջ հանես, վտակ՝
 Ականակիտ եւ հանդարտիկ.
 Քու հայելուց մէջ անապակ
 Նային զիրենք վարդն ու աղջիկ:
 Բայց չես վտակ իմ հայրենեաց,
 Գնա՛, հոսէ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն եւ հովն Հայոց
 Աւերակաց թռչին վերայ,
 Թէպէտ պղտոր վտակն Հայոց
 Նոճիներու մէջ կը սողայ,
 Նոքա հառաչք են հայրենեաց.
 Նոքա չերթան սրտէս ի բաց:

92. ՔԱՅԼԵՐԳ

Օ՛հ, հայ պատանիներ,
 Հայ երիտասարդներ,
 Որ հայրենիք, հայրենիք, հայրենիք թողած
 Օտար ափանց վըրայ,
 Տարբեր երկիրներէն՝
 Բայց եղբայր ենք, եղբայր ենք, եղբայր ենք հարա-
 զատ:

Օտար անապատ,
 Այս հողին վրայ,
 Ովասիս մ'եկէք շինենք.
 Եւ մեր ստուերին տակ,
 Կաղաւոր, սիրով դտնեն
 Հէք հայ սրտեր, հայ մտքեր, այո, հայ հողիներ:

Օ՛հ, եկէ՛ք միանանք
 Սիրոյ դրօշակին տակ.
 Եւ միաբան, միաբան, միաբան սրտով
 Յիսուս մեր օրինակ,
 Քրիստոս մեր զօրապետ,
 Եւ ծառայենք, ծառայենք, ծառայենք Տէրոջը:
 Օտար անապատ: Եւսչն:

ԱԿԻԻԼԻՆՔ

93. ՍԻՐԷ ՀԱՅԸ

Սիրէ Հայը, թէ ըլլայ
 Աղքատ, տրնանկ, անկարող,
 Հազուստները հին ու մին,
 Դունէ ի դուռ մուրացող:
 Անունն է Հայ՝ պարտ է քեզ
 Սիրել ըզնա Հայու պէս:

Սիրէ Հայ, թէ ըլլայ
 Հարուստ, փարթամ, մեծատուն,
 Ունենայ պէշ, էֆէնտի,
 Կամ ամիրա պատուանուն:
 Անունն է Հայ, եւ այլն:

Սիրէ Հայ, թէ ըլլայ
 Հայր-սուրբ, տէրտէր, վարդապետ,
 Վրան փիլոն՝ ծոցը խաչ,
 Կաթողիկոս, Հայրապետ:
 Անունն է Հայ, եւ այլն:

Սիրէ Հայ, թէ ըլլայ
 Բողոքական, այլ կրօն,
 Ըստ թո կարծեաց սնասպաշտ,
 Հերետիկոս, անկրօն:
 Անունն է Հայ, եւ այլն:

Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

94. ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լռեց: — Ամպերը եկան ծածկեցին.
 Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին.
 Մնացի մինակ հոգիս վրդովուած,
 Չեռնեցս ծոցիս, գլուխս քարշ արած:
 Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
 Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
 Նրա տխրամած դէմքը նայելիս,
 Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:
 Ա՛խ, ցոլա՛, փայլէ տխրադէմ լուսին,
 Գուցէ քու փայլից փայլ տաս եւ Հային:
 Պատմէ շատերուն Վարդանի մահը
 Կամ ինչպէ՛ս կորաւ Հայ ազգին գահը.
 Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան,
 Մայրենի հողը — աշխարհն Հայաստան:

ՔԱՄԱՌ. ՔԱԹԻՊԱ.

95. ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ

“Will Pleasures and palaces”

Թէեւ բնակիմ հոյակապ պալատներ
 Իսկ դու աննշան երկիր մ'ես կոչուէր
 Քաղցրիկ Հայրենիք հաճույքներդ երկնատուր
 Բունեալ են ի քեզ մի միայն ոչ այլուր
 Կրկ. Իմ քաղցրիկ Հայրենիք, նման քեզ վայր չիք,
 Ա՛հ, նման քեզ վայր չիք:

Տխուր այս վայրէջն կը տեսնեմ երբ լուսին
 Գիտեմ որ մայրիկս կը վիշէ իւր որդին
 Նա եւս կը դետէ այս լուսին մեր տունէն
 Ինձի սիրելի գեղազարդ դաշտերէն:
 Կրկ. Իմ քաղցրիկ Հայրենիք, եւ այլն:

Պանդուխտ եմ ես հոս ունայն է պերճութիւն
 Տուք ինձ Հայրենիքս, աղքատիկ հօրս տուն,
 Չայն ուր երգեցին թռչուններն իմ ձայնիս
 Կային անվրդով եւ հանգիստ տաք սրտիս:
 Կրկ. Իմ քաղցրիկ Հայրենիք, եւ այլն:



Յ Ա Ն Կ

ԵՐԳՈՑ ԱՌԱՋԻՆ ՏՈՒՆԵՐՈՒ

	ԵՐԳ
Ա՛հ, կ'երազեմ ես միշտ այն պերճ երկիր	61
Այս կեանքս պատերազմ է	77
Այսօր չարեաւ ի մեռելոց	54
Անապատին մէջ տխուր, դըժնեայ	24
Անձառ լուսին ծագումն այսօր	60
Անշուշտ շուտով պիտի անցնինք Յորդանանէն	42
Աշխարհ ամենայն	39
Առաւօտ լուսոյ	1
Արդեօք ո՞ւր է որդեակս Հիմա	71
Բանն որ ընդ Հօր չէութեան	53
Ե՛կ իմ սրինդ, իմ բարեկամ սրտագին	86
Եղբայր ենք մենք, մէկ Հօր որդիք	67
Եղիցի անուն Տեանն օրհնեալ	5
Երբ այս կեանքի փորձանքներն վերջանան	28
Երբ խաղաղութիւն իբրեւ գետ չորդէ	40
Երբ Հանդիպիս կեանքի Հովին փոթորկին	36
Երբ չուզուին մրբիկք կենաց իմ	45
Երբ որ դիտեմ Խաչն Հրաշալի	44
Երբ Տէրոջ փողն հնչէ	22
Երբ փարատին ամպերն մռայլ	27
Երբ քալենք Տէրոջ Հետ	73
Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք եւ ես զարթեալց	8
Թագաւորին չաւիտենից մատուցուք	62
Թէ Հայրենեաց պսակաղեր	88
Թո՛ղ փրչէ քամին՝ պաղ պաղ երեսիս	90

Թէեւ բնակիմ հոլակապ պալատներ	95
Թէեւ ձեր մեղքեր կարմիր	72
Ի բիւր ձայնից բնութեան շքեղ	85
Իմ հայրենիք զիս կը կանչէ	87
Ինչո՞ւ արդեօք մեր աչքերէն	35
Ի Տէր ցեծացէք բերկրանօք	64
Լո՛ցս, արարիչ լուսոյ առաջին լոյս	10
Լոյս բարերար, տիրող մէգին մէջէն	11
Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար	49
Լուսաւորեա, Երուսաղէմ	58
Լուսոյ բըլրոջն շուրջն բանակած	34
Լռեց:— Ամպերը եկան ծածկեցին	94
Լցաք ի բարութեանց քոց Տէր	41
Խաչին վրայ բազկատարած երկնադէտ	56
Խորհուրդ մեծ եւ սքանչելի	47
Ծափ զարկ, աշխարհ, ցնծա՛ ալսօր	48
Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ	83
Կը փայլի մեր Հօրը գութը	74
Հայ ապրինք եղբայրք	89
Հայաստա՛ն երկիր դրախտավայր	82
Հաւատք մեր հարց, կ'ապրի դեռ ան	25
Մենք Յիսուսի ուխտեալ զինուորներ	78
Մէկը ըրաւ գործ մը ընտիր	69
Մըսպասեր մինչեւ որ գործ մ'ընես	68
Մի վհատիր փորձութեան մէջ	70
Մովսէսի նման, որ քեզ չանդիման	17
Յիսուս Քրիստոս արդ չարեաւ, Ալէլուիա	57
Նորահրաշ պսակաւոր	51
Նորաստեղծեալ բանն չանէից	6
Նորոգող տիեզերաց	19
Շըրջեցայ, Տէր իմ Աստուած	30
Ո՛հ, ալիքներ այս ի՞նչ հառաչ կը բերեն	66
Ո՛հ, ինչ անուշ եւ ինչպէս գով	91
Ո՛հ, մերթ ստուերներն ի՞նչ խոր են	26
Ո՛չ, ո՛չ, թէեւ ընկճուած, խաչուած	75
Ո՛վ Հայր Աստուած եւ բարերար ամենից	20

Ո՛վ մեծասքանչ դու լեզու	84
Ով Սէր, որ դուն չես թողուր զիս	23
Որ անբաւելի չաղթող զօրութիւն	9
Որ զանարատ բազուկս քո	52
Որ ի լերինն ալակերպեալ ցուցեր	55
Պիտի երգեմ սէրն իմ Փրկչին	46
Սիրէ Հայր, թէ ըլլայ	93
Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց	4
Տարածեալ ձեռք ընդ ձեռաց	59
Տէր, ինձի առաջնորդէ	13
Տէր, ինչպէս որ կուզես	15
Տէ՛ր, կեցո դու զհայս	14
Տէր Յիսուս, հոգիս պահէ	16
Տըխուր ողբով մ'ըսեր ինձի	38
Տուն Հանդստեան հողոց, սրտի	65
Տուր ինձ այն Հին, Հին լուրը	32
Փառաց մէջ կան սիրելիներ	29
Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ	2
Փա՛ռք Հօրդ Աստուծոյ	7
Փառք քեզ, Բարձրեալ Աստուած երկնաւոր	3
Փոթորիկէն աննկուն	12
Փրկչիս խաչին ներքեւը	31
Քաջ եղէ՛ք, ո՛վ եղբայրներս	80
Քաղցր Փրկիչ մը ունիմ ես երկնից մէջ	63
Քեզի կարօտ եմ, Տէր	18
Քրիստոս ի մէջ մեր չայտնեցաւ	21
Օ՛ն ի գործ, օ՛ն ի գործ	79
Օ՛ն, Հայ պատանիներ	92
Օ՛ն, վեր ելէք, դէպի Սիօն	81
Օ՛ն, Փրկչին զինուորներ	76
Օրհնեալ է Աստուած	50
Օրհնութիւն, փառք արեան ուղիսին	37
Օրհնեալ երաշխիք, իմս է Յիսուս	33
Օր մ'արծաթ թելն պիտի կտրի	43

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԵՒ

ԱՂՕԹՔՆԵՐ

ԸՆԹԵՐՑՈՒՄ 1

ՍԱՂՄ ՈՍ 147, 1—13

- 1 Գովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծոյն սաղմոս ըսել.
Վասն զի քաղցր ու վաչելու է օրհնութիւնը:
- 2 Տէրը կը շինէ Երուսաղէմը,
Իսրայէլի ցրուածները կը ժողովէ.
- 3 Սրտով կտորածները կը բժշկէ,
Ու անոնց խոցերը կը փաթթէ.
- 4 Աստղերուն թիւը կը համրէ,
Անոնց ամէնն ալ իրենց անուններովը կը կանչէ:
- 5 Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը շատ է,
Անոր իմաստութիւնը անհուն է:
- 6 Տէրը կը հաստատէ խեղճերը,
Ու ամբարիշտները մինչեւ հողը կը խոնարհեցնէ:
- 7 Երգեցէք Տէրովը գոհութիւնով.
Մեր Աստուծոյն սաղմոս ըսէք քնարով.
- 8 Որ երկինքը ամպերով կը ծածկէ,
Անձրեւ կը պատրաստէ երկրի համար,
Խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ:
- 9 Որ անասուններուն իրենց կերակուրը կուտայ,
Ու ագռաւին ձագերուն՝ որոնք կ'աղաղակեն:
- 10 Անիկա ձիուն զօրութեանը չհաճիր,
Մարդուն սրունքներուն չհաւնիր:
- 11 Տէրը կը հաւնի իրձէ վախցողներուն
Ու իր ողորմութեանը չուսացողներուն:
- 12 Ով Երուսաղէմ, գովէ Տէրը.
Օրհնէ քու Աստուածդ, ով Սիօն:

13 Վասն զի անիկա քու դռներուդ նիզերը ամուր-
ցուց,
Եւ քու որդիներդ քու մէջդ օրհնեց:

Ա Ղ Օ Թ Ք

Ամենակարող Հայր, այս պահուս մտիր մեր սիրտերուն մէջ եւ աջնպէս լեցուր զանոնք քու սիրովդ, որ մենք հեռու վանենք մեր մէջէն մեր բոլոր չար փափաքները, եւ կարող ըլլանք փարիլ Քեզի՝ Քեզի որ մեր բարի Հայրն ես:

Յուցուր մեզի, Քու ողորմութեամբդ, ո՛վ Տէր, մեր Աստուածը, թէ ինչ է Քու կամքդ մեզի համար, եւ ըսէ մեր հոգիներուն «Ես եմ ձեր փրկութիւնը»: Աջնպէս խօսէ մեզի, Տէ՛ր, որ հասկնանք քու խորհուրդներդ: Մեր սիրտերը բաց են հիմա քու առջևդ, բա՛ց նաեւ մեր աղանջները, որ քու ձայնդ լսենք եւ մօտ գանք Քեզի: Մի ծածկեր Քու երեսդ մեզմէ, կ'աղաչենք Քեզի, ո՛վ Տէր: Լայնցուր մեր անձուկ հոգիները որպէս զի Դուն կարող ըլլաս մտնել անոնց մէջ, ու հոն բնակիս: Նորոգէ մեր մեղսալից սիրտերը ու Դուն գրաւէ զանոնք Քու ներկայութեամբդ:

Լսէ մեզի, ո՛վ մեր Երկնաւոր Հայրը, Քու Միածին Որդուդ Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար, որ կ'ապրի ու կը թաղաւորէ Քեզի եւ Սուրբ Հոգիիդ հետ՝ հիմա եւ միշտ ու յաւիտեանս, ամէն:

ՄԲ. ՕԳՈՍՏԻՆՈՍ (354-430)

(S.K.)

ԸՆԹԵՐՑՈՒՄ 2

ՍՍ.ՂՄՈՍ 148, 1—14

- 1 Ալէլուիա: Օրհնեցէք Տէրը երկինքէն.
Օրհնեցէք զանիկա բարձր տեղերուն մէջ:
- 2 Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր հրեշտակները:
Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր զօրքերը:
- 3 Օրհնեցէք զանիկա, ով արեղակ ու լուսին.
Օրհնեցէք զանիկա, ով բոլոր փայլուն աստղեր:
- 4 Օրհնեցէք զանիկա, ով երկնից երկինք
Ու երկինքէ վեր եղող ջուրեր:
- 5 Թող Տէրոջը անունը օրհնեն.
Վասն զի ինք հրամայեց, ու անոնք ստեղծուացան:
- 6 Եւ զանոնք չաւիտեանս չաւիտենից Հաստատեց.
Կանոն դրաւ որ չխափանուիր:
- 7 Օրհնեցէք Տէրը երկրէ,
Ով վիշապներ ու բոլոր անդունդներ.
- 8 Կրակ եւ կարկուտ, ձիւն ու շողի,
Եւ անոր խօսքը կատարող մրրկալից հով,
- 9 Լեռներ ու բոլոր բլուրներ,
Պաղատու ծառեր ու եղեւիներ,
- 10 Գազաններ ու բոլոր անասուններ,
Սողացողներ ու թեւաւոր թռչուններ,
- 11 Երկրի թագաւորներ եւ բոլոր ազգեր,
Իշխաններ ու երկրի բոլոր դատաւորներ,
- 12 Երիտասարդներ եւ կոյս աղջիկներ,
Ծերեր ու տղաքներ.
- 13 Թող Տէրոջը անունը օրհնեն,
Վասն զի միայն անոր անունը բարձր է,

Անոր փառքը երկրէ ու երկինքէ վեր է:
 14 Անիկա բարձրացուց իր ժողովուրդին եղջիւրը,
 իր բոլոր սուրբերուն,
 իրեն մօտ եղող ժողովուրդին,
 Իսրայէլի որդիներուն օրհնութիւնը: Ալէլուիա

Ա Ղ Օ Թ Ք

Ով Տէր Աստուած, դուն իմ հոգիս կը սիրես. եթէ հոգւոյս մէջ գաս ու հոն բնակիս, իմ ներսիւդիս ուրախութեամբ ու ցնծութեամբ կը լեցուի:

Դուն ես իմ փառքս եւ իմ սրտիս բերկրանքը: Դուն ես իմ չոյսս եւ իմ ապաւէնս՝ նեղութեանց ատեն:

Ազատէ զիս բոլոր իմ չար կիրքերէս. բժշկէ իմ սիրտս իր բոլոր անմաքուր զգացումներէն, աջապէս որ ես ներսէն բժշկուած ու մաքրուած՝ արժանի ըլլամ քեզ սիրելու, անվախ ըլլամ քեզի Համար չարչարուելու, եւ Հաստատ ըլլամ միշտ չարատեւելու:

Բան մը չկայ որ այնքան քաղցր է որքան սէրը. բան մը չկայ որ աւելի անվախ կ'ընէ զմարդ, որքան սիրելը. երկինքի մէջ ու երկրի վրայ սիրելէ աւելի մեծ ու անկէ աւելի գեղեցիկ բան չկայ, որովհետեւ սէրը Քեզմէ կը ծնի եւ քեզմէ գատ ուրիշ մը չկայ որ կարենայ Հանդիսատալ խոոված հոգիին:

Շնորհէ ինձի, Հայր, որ իմ անձէս աւելի սիրեմ քեզ, եւ իմ անձս սիրեմ միայն քեզի Համար. — Ամէն:

ԹՌՎՄԱՍ ԿԵՄՓԱՅԻ 1379-1471)

ԸՆԹԵՐՅՈՒՄ 3

ՍԱՂՄՈՍ 96, 1—13

- 1 Նոր երգ երգեցէք Տէրոջը.
Ով բոլոր երկիր, երգեցէք Տէրոջը:
- 2 Երգեցէք Տէրոջը, օրհնեցէք անոր անունը.
Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք:
- 3 Անոր փառքը ազգերուն մէջ պատմեցէք,
Ու անոր հրաշքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ.
- 4 Քանզի Տէրը մեծ է ու խիստ դովելի.
Անիկա բոլոր աստուածներուն վրայ ահաւոր է:
- 5 Վասն զի ազգերուն բոլոր աստուածները կոռ-
քեր են.
Բաց Եհովան երկինքը ստեղծեց:
- 6 Փառք ու վայելչութիւն կայ անոր առջեւ,
Զօրութիւն ու գեղեցկութիւն՝ անոր սրբաբանին մէջ:
- 7 Տէրոջը տուէք, ով ժողովրդոց տոհմերը,
Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն:
- 8 Տէրոջը տուէք իր անուանը փառքը.
Ընծայ առէք ու անոր սրահներուն մէջ մտէք.
- 9 Սուրբ հանդէսով Տէրոջը երկրպագութիւն
ըրէք.
Վախցէք անոր երեսէն, ով բոլոր երկիր:
- 10 Հեթանոսներուն մէջ ըսէք թէ Տէրը կը թագա-
ւորէ.
Աշխարհ ալ հաստատուած է որպէս զի Հասսանի.
Անիկա պիտի դատէ ժողովուրդները ուղղու-
թիւնով:

- 11 Երկինք թող ուրախանայ ու երկիր ցնծայ.
Ծովը իր լիութիւնով թող գոռայ:
- 12 Դաշտը ու բոլոր անոր մէջ եզոզները թող ու-
րախանան.
Այն ատեն անտառին բոլոր ծառերը թող ցնծան
- 13 Տէրոջը առջեւ, վասն զի կուգայ,
Վասն զի կուգայ երկիրը դատելու.
Պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,
Ու ժողովուրդները՝ իր ճշմարտութիւնովը:

ԱՂՕԹՔ

Տէ՛ր երկնի եւ երկրի, արարիչ ամենայն արա-
րածոց՝ երեւելաց եւ աներեւութից: Առ քե՛զ կար-
գածք յամենայն ժամ, զի ընդ ամենայն տեղիս է Տէ-
րութիւն քո, եւ արքայութիւն քո ամենեցուն տիրէ:
Շնորհեա՛ մեզ երկիւղիւ հանապազ. սիրել զքեզ ՚ի
բոլոր սրտէ եւ ՚ի բովանդակ մտաց, եւ յամենայն զօ-
րութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառ-
նալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութիւն՝ առանց բար-
կութեան եւ երկմտութեան, եւ դտանել ՚ի քէն զը-
նորհս եւ զողորմութիւն, եւ զառաքինասէր գործոցն
յաջողութիւն: Վասն զի դո՛ւ ես Տէր կենաց եւ Աստ-
ուած ողորմութեանց. եւ քեզ վայելէ փառք իշխա-
նութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 4

ՍՍ.ՂՄՈՍ 98, 1—9 ԵՒ ՍՍ.ՂՄՈՍ 99, 1—6

- 1 Նոր երգ երգեցէք Տէրոջը,
Վասն զի հրաշքներ ըրաւ.
Իր աջ ձեռքը ու իր սուրբ բազուկը
Իրեն փրկութիւն տուաւ:
- 2 Տէրը ցուցուց իր փրկութիւնը,
Ազգերուն առջեւ լայտնեց իր արդարութիւնը:
- 3 Յիշեց իր ողորմութիւնը ու իր հաւատարմութիւնը
Ի սրաչէլի տանը համար.
Երկրին ամէն ծայրերը
Մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան:
- 4 Յնծացէք Տէրոջը առջեւ, ով բոլոր երկիր.
Ուրախութեան ձայնով աղաղակեցէք ու սաղմոս
ըսէք:
- 5 Սաղմոս երգեցէք Տէրոջը քնարով,
Քնարով ու սաղմոսի ձայնով.
- 6 Փողերով ու շեփորի ձայնով.
Աղաղակեցէք Տէր Թագաւորին առջեւ:
- 7 Թող գոռաց ծովը ու անոր լիութիւնը,
Աշխարհ ու անոր բնակիչները:
» Գետերը թող ծափ գարնեն,
Ու լեռները մէկտեղ թող ցնծան
- 9 Տէրոջը առջեւ, վասն զի կուգայ երկիրը դատելու.
Անիկա պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,
Ու ժողովուրդները՝ ուղղութիւնով:
- 1 Տէրը կը թագաւորէ, ժողովուրդները թող
սարսափին.

- Ինք քերովրէներուն վրայ կը նստի, Լրկիր թող
չարժի:
- 2 Տէրը մեծ է Սիօնի մէջ,
Ու բարձրացած է բոլոր ժողովուրդներուն վրայ:
 - 3 Թող գովեն քու մեծ ու ահաւոր անունդ.
Անիկա սուրբ է:
 - 4 Եւ թագաւորին զօրութիւնը իրաւունք կը սիրէ.
Ուղղութիւն հաստատեցիր,
Իրաւունք ու արդարութիւն ըրիր Յակոբի մէջ,
 - 5 Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,
Ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքերուն պատ-
ուանդանին.
Անիկա սուրբ է:
 - 6 Մովսէս ու Ահարոն անոր քահանաներուն մէջ,
Եւ Սամուէլ անոր անունը կանչողներուն մէջ
Տէրոջը կ'աղաղակէին,
Ու անիկա պատասխան կուտար անոնց.

Ա Ղ Օ Թ Բ

Հա՛յր դթած. բարեխնամ՝ դ, արարի՛չ ամենայն
արարածոց. ընկա՛լ զպաղատանս ծառայից քոց ՚ի
ժամ երեկոյիս. որ առատդ ես առ ամենեսեան՝ պար-
գեւօք բարերարութեան քո: Ողորմեա՛, Տէր, ամե-
նայն աշխարհի, եւ Եկեղեցւոյ քում սրբոց. Հիւան-
դաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց,
խոստովանողաց, ապաշխարողաց, եւ հոգւոցն հան-
դուցելոց: Զի դու, Տէ՛ր ամենակալ, գիտես զպէտս
մեր եւ զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք. եւ իմա-
նածք. եւ քեզ ընդ Որդւոց եւ Ամենասուրբ Հոգւոցդ,
վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ
եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ 5
ՍԱՂՄՈՍ 33, 1—18

- 1 Ով արդարներ, Տէրոջմով ցնծացէք.
Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն երգել:
- 2 Գովեցէք Տէրը քնարով,
Տասը լար ունեցող տաւիղով սաղմոս երգեցէք
անոր:
- 3 Նոր երգ մը երգեցէք անոր,
Վարպետութեամբ նուագարանները զարկէք ցըն-
ծութեան ձայնով:
- 4 Վասն զի Տէրոջը խօսքը շիտակ է,
Ու անոր բոլոր գործերը ճշմարտութեամբ են:
- 5 Անիկա արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ
Տէրոջը ողորմութիւնով երկիրը լեցուն է:
- 6 Տէրոջը խօսքերովը երկիրնքը ստեղծուեցաւ,
Ու իր բերնին հոգիովը՝ անոր բոլոր զօրքը:
- 7 Ծովուն ջուրերը դէզի մը պէս կը ժողվէ,
Անդունդները շտեմարաններուն մէջ կը դնէ:
- 8 Բոլոր երկիր թող Տէրոջմէն վախնայ,
Ու անկէ դողան աշխարհի բոլոր բնակիչները:
- 9 Վասն զի անիկա ըսաւ, ու եղաւ.
Ինք հրամայեց, ու հաստատուեցաւ:
- 10 Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խորհուրդները,
Փռճ կը հանէ ժողովուրդներուն դիտաւորու-
թիւնները:
- 11 Տէրոջը խորհուրդը չաւիտեան կը մնայ,
Ու անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մին-
չեւ ազգ:
- 12 Երանի՛ աչն ազգին՝ որուն Աստուածը Տէրն է,
Ու աչն ժողովուրդին՝ զար իրեն ժառանգութեան
համար ընտրեց:

- 13 Տէրը երկինքէն կը նայի,
Բոլոր մարդոց որդիները կը տեսնէ:
- 14 Իր բնակութեանը տեղէն
Աշխարհի բոլոր բնակիչները կը դիտէ:
- 15 Անոնց սիրտերը հաւասարապէս ինք ստեղծեց,
Անոնց բոլոր ըրածները կ'իմանայ:
- 16 Թագաւոր մը զօրքի շատութիւնով չազատիր.
Ոչ ալ զօրաւոր մարդ մը ուժի շատութիւնով կը
փրկուի:
- 17 Ձին ազատութեան համար պարապ բան է:
Ու իր ուժին շատութիւնովը չկրնար ազատիլ:
- 18 Ահա Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն
Ու իր ողորմութեանը չուսացողներուն վրայ է,

ԱՂՕԹ Ք

Ո՛վ Աստուած, Դուն որ աշխարհի ճշմարիտ ա-
րեւն ես, որ կը ծագիս եւ երբէք չես մարիւր, Դուն որ
քու ներկայութեամբդ կը սնուցանես եւ կ'ուրախա-
ցընես ամէն բան, երկինքի ու երկրի մէջ, կ'աղաչենք
Քեզի որ ողորմութեամբդ Քու լոյսդ փայլեցնես մեր
սրտերուն վրայ, աչնպէս որ մեղքին մութ գիշերը եւ
մէն, փարատին Քու պայծառ լոյսիդ մեր սրտերուն
մոլորումներու մշուշը որ մեզ պատած են ամէն կող-
վրայ փայլելովը:

Տուր, Տէ՛ր, որ մենք Քեզմով լուսաւորուած՝
քալենք Քու առջեւ անսպթաք, որպէս թէ ցերեկի
մէջ, եւ խաւարին գործերէն ազատուած, կարող ըլ-
լանք անիլ ու զօրանալ աչն բարի գործերու մէջ զոր
դուն մեզի համար պատրաստած ես:

Յանուն Յիսուսի կը խնդրենք. — Ամէն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ 6

ՍԱՂՄՈՍ 103, 1—14

- 1 Ով իմ անձս, օրհնէ՛՛ Տէրը,
Ու աչն ամէնը որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ
անունը:
- 2 Ով իմ անձս, օրհնէ՛՛ Տէրը,
Եւ անոր բոլոր բարեբարութիւնները մի ծոռնար:
- 3 Որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ,
Ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ:
- 4 Որ կը փրկէ քու կեանքդ ապահանութենէ,
Եւ կը պսակէ քեզ ողորմութիւնով ու գթութիւ-
նով:
- 5 Որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով,
Ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը նորոգուի:
- 6 Տէրը արդարութիւններ ու իրաւունքներ կ'ընէ
Բոլոր զրկուածներուն:
- 7 Անիկա իր ճամբաները Մովսէսի ճանչցուց,
Ու իր գործերը՝ Իսրայէլի որդիներուն:
- 8 Բարեգութ ու ողորմած է Տէրը,
Երկայնամիտ ու առատ՝ ողորմութիւնով:
- 9 Անիկա մինչեւ վերջը չհակառակիր,
Եւ չաւիտեան ոխ չպահէր:
- 10 Անիկա մեր մեղքերուն համեմատ չըրաւ մեզի,
Ու մեր անօրէնութիւններուն համեմատ հատու-
ցում չըրաւ մեզի:
- 11 Հապա որչափ որ երկինք երկրէ բարձր է,
Այնչափ իր ողորմութիւնը իրձէ վախճողներուն
վրայ զօրաւոր է:

- 12 Որչափ որ արեւելքը արեւմուտքէն հեռու է,
Այնչափ հեռացուց մեզմէ՛ մեր չանցանքները:
- 13 Ինչպէս հայր մը կը գթայ իր որդիներուն վրայ,
Այնպէս Տէրը կը գթայ իրձէ՛ վախճողներուն վրայ:
- 14 Վասն զի ան գիտէ մեր կազմուածքը,
Կը լիչէ որ մենք հող ենք:

Ա Ղ Օ Թ Ք

Քու դաճիդ առջեւը կը կենանք այս պահուն, ո՛վ
երկնաւոր Աստուած, մեր Տէրը, մեր Թագաւորը, մեր
Հայրը:

Մարդկային տկարութիւններով պաշարուած
ենք, մեղքերու շղթաներով կաշկանդուած ենք, խա-
ւարն է պատեր մեր հոգիները: Անչոյս ենք, անմխի-
թար եւ անկար:

Ո՛վ Աստուած, դուն որ լոյս ես, կեանք եւ փր-
կութիւն, կը խնդրեմք որ լուսաւորես մեր մտքերը
քու ճշմարտութիւնովդ, ազատես զմեզ մեր մեղքե-
րու կապանքներէն՝ քու սիրովդ, եւ տաս մեզի կեանք
եւ փրկութիւն, որ մեր հոգիները կենդանանան եւ
մենք կարող ըլլանք ասլրիլ ճշմարիտ կեանքը, Յիսու-
սի կեանքը:

Ո՛վ Հայր, բաց մեր միտքերը որ քու ճշմարտու-
թիւնդ հասկնանք, սիրովդ լեցուր մեր սիրտերը որ
ծառայենք քեզի մեր բոլոր ուժովը, եւ տուր մեզի
չնորհք եւ իմաստութիւն որ հնազանդինք քու կամ-
քիդ եւ Հետեւինք մեր Տէրովը՝ Յիսուս Քրիստոսի
բաշխեցուն:

Անոր անունովը կը խնդրենք քեզմէ. — Ամէն:

* * *

ԸՆԹԵՐՑՈՒՄ 7

ՍՍՂՄՈՍ 23, 1—6 ԵՒ ՍՍՂՄՈՍ 121, 1—8

- 1 Տէրը իմ հովիւս է.
Ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:
- 2 Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ.
Հանդարտ ջուրերուն քով ինծի կ'առաջնորդէ.
- 3 Հոգիս կը նորոգէ.
Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն
մէջ կ'առաջնորդէ ինծի:
- 4 Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ,
Չարէն պիտի չվախնամ,
Վասն զի դուն ինծի հետ ես.
Քուցուպդ ու գաւազանդ՝ անոնք զիս պիտի մխի-
թարեն:
- 5 Սեղան կը պատրաստես իմ առջեւ իմ թշնա-
միներուս զիմաց.
Իմ գլուխս իւղով կ'օծես,
Իմ բաժակս խիստ լեցուն է:
- 6 Յիրաւի բարերարութիւնը ու ողորմութիւնը
ինծի հետ պիտի գան
Կեանքիս բոլոր օրերուն մէջ,
Ու շատ օրեր Տէրոջը տունը պիտի բնակիմ:

- 1 Աչքերս դէպի լեռները պիտի վերցնեմ,
Ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ:
- 2 Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
Որ երկինքը ու երկիրը ստեղծեց:
- 3 Անիկա քու ոտքդ չդողացնէ,
Ու քու Պաշտպանդ չքնանայ:

- 4 Ահա Իսրայէլի Պաշտպանը
Պիտի չմրափէ ու պիտի չքնանայ:
- 5 Տէրը քու պաշտպանդ է.
Տէրը քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է:
- 6 Յորեկը արեգակը քեզ պիտի չզարնէ,
Ոչ ալ զիշերը՝ լուսինը:
- 7 Տէրը քեզ ամէն չարէն պիտի պաշտպանէ,
Քու անձդ պիտի պաշտպանէ:
- 8 Տէրը քու ելլելդ ու մտնելդ պիտի պաշտպանէ,
Ասկէ ետեւ մինչեւ չաւիտեան:

Ա Ղ Օ Թ Ք

Ի գիշերի եւ ի տունջեան եւ չամենայն ժամու ըզ-
քեզ աղաչեմք, եւ 'ի քէն խնդրեմք մարդասէր Տէր:
Լո՛ւր մեզ. Աստուած փրկիչ մեր, խոնարհեցո՛ւ ունին
քո ի խնդրուածս մեր, զի մի՛ ունայն լիցին վաստակք
ճառայից քոց. ալ Համարեա՛ զաշխատութիւնս մեր
'ի գործ արդարութեան եւ 'ի պտուղ Աստուածպաշ-
տութեան: Ընկա՛լ Տէր, զաղօթս եւ զերկրպագու-
թիւնս մեր, եւ հատո՛ մեզ զողորմութիւն քո առա-
տապէս. ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամենաղօր
աջոյ քոց. զօրացո՛ զմեզ Տէր, զօրութեամբ Սուրբ
Հոգւոյդ. պահեա՛ զմեզ որպէս բիբ ական, եւ արա՛
առ մեզ նշան բարի 'ի գովեստ եւ 'ի փառաբանու-
թիւն Անուանդ քու՛մ սրբոց: Զի՛ ' քո փառս կատարի
ամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն
'ի բարձունս, Հօր եւ Որդւոց եւ Հոգւոյն Սրբոց, աչժմ
եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 8
ՍԱՂՄՈՍ 27, 1—14

- 1 Տէրը իմ լոյսս ու փրկութիւնս է,
Ես ուրկէ՞ պիտի վախնամ.
Տէրը իմ կեանքիս ապաւէնն է,
Ես ուրկէ՞ պիտի դողամ:
- 2 Չարերը իմ մարմինս ուտելու համար ինծի
մօտեցած ատենը՝
Իմ նեղիչներս ու թշնամիներս սահեցան ու ինկան:
- 3 Եթէ վրաս զօրքի բանակ ելլէ,
Սիրտս պիտի չվախնայ.
Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ,
Անով ալ ես վստահ պիտի ըլլամ:
- 4 Բան մը կը խնդրեմ Տէրօջմէն,
Ու ասիկա կ'աղաչեմ,
Որ կեանքիս բոլոր օրերը
Տէրօջը տանը մէջ բնակիմ
Տէրօջը վայելչութիւնը տեսնելու,
Ու անոր տաճարին մէջ զինք խնդրելու համար:
- 5 Վասն զի չար օրուան մէջ՝
Իր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,
Իր վրանին ծածկութովը զիս պիտի ծածկէ.
Վէ՛ծի վրայ պիտի վերցնէ զիս:
- 6 Ու հիմա իմ գլուխս պիտի բարձրանայ
Իմ բոլորտիքս եղող թշնամիներու վրայ.
Ու անոր վրանին մէջ ուրախութեան ձայնով դո-
՛հեր պիտի մատուցանեմ.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ Տէրօջը:
- 7 Ով Տէր, ձայնս լսէ կանչելու ատենս,
Ու ողորմէ եւ պատասխան տուր ինծի:
- 8 Իմ երեսս փնտռեցէք՝ որ ըսիր,

- Իմ սիրտս քեզի ըսաւ, Գու երեսդ պիտի փնտռեմ,
ով Տէր:
- 9 Գու երեսդ ինձմէ մի ծածկեր,
Բարկութիւնով ծառադ մէկդի մը ձգեր,
Ինծի օգնական եղար, զիս մի մերժեր,
Եւ զիս մի թողուր, ով իմ փրկութեանս Աստուածը
 - 10 Թէ եւ հայրս ու մայրս զիս թողուն,
Բայց Տէրը զիս պիտի ընդունի:
 - 11 Ով Տէր, քու ճամբադ ինծի սորվեցուր,
Ու շիտակ ճամբուն մէջ ինծի առաջնորդէ թշնա-
միներուս համար:
 - 12 Զիս իմ թշնամիներուս կամքին մի մատներ,
Վասն զի իմ վրաս սուտ վկաներ
Ու անիրաւութիւն փչողներ ելան:
 - 13 Հաւատացի Տէրօջը բարութիւնը տեսնելու
Կենդանիներուն երկրին մէջ:
 - 14 Տէրօջը սպասէ.
Զօրացիր ու սիրտդ թող զօրանայ.
Ալ Տէրօջը սպասէ:

ԱՂՕԹՔ

Հովիւ քաջ, Հովիւ բարի եւ չափտեսական, նայեա՛ց
եւ այց արա՛ բանաւոր Հօտի քո, զոր ժողովեցեր առ
քեզ գթութեամբ քով: Զի քո առաջի կամք, Տէր, եւ
առ ՚ի քէն ողորմութեանցդ եւ գթութեանցդ ակն ու-
նիմք: Չամենեսեան օրհնեա՛. զամենեսեան իմաս-
տացո՛. զամենեսեան լուսաւորեա՛, եւ ամենեցուն
պարգեւեա՛ գերկնից արքայութիւնդ: Վասն զի դո՛ւ
ես Տէր կենաց եւ Աստուած ողորմութեանց. եւ քեզ
վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ
միշտ եւ չափտեսանս չափտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 9
ՍԱՂՄ ՈՍ 90, 1—17

- 1 Ով Տէր, դուն մեզի ապաւէն եզար ազգէ մինչեւ ազգ:
- 2 Լեռներուն ծնանելէն առաջ
Ու երկրի եւ աշխարհի ստեղծուելէն առաջ՝
Յաւիտենից մինչեւ չաւիտեանս դուն ես Աստուած:
- 3 Դուն մարդը փոշի կը դարձնես,
Ու կ'ըսես, Ետ դարձէք, մարդոց որդիներ:
- 4 Վասն զի Հազար տարին քու առջեւ երէկուան
օրին պէս է որ անցաւ,
Կամ գիշերուան պաՀու մը պէս:
- 5 Կ'ընկղծես զանոնք, երազի պէս կ'ըլլան.
Առտուանց կանանչացած խոտի պէս կ'ըլլան.
- 6 Առտուանց կը ծաղկի ու կը կանանչանայ,
Իրիկունը կը կտրուի ու կը չորնայ:
- 7 Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք,
Եւ քու սրտմտութենէդ կը խռովինք:
- 8 Մեր անօրէնութիւնները քու առջեւ,
Ու մեր ծածուկ մեղքերը քու երեսիդ լուսին մէջ
դրիր:
- 9 Վասն զի մեր բոլոր օրերը քու բարկութիւնովդ
կ'անցնին.
Մեր տարիները ցնորքի մը պէս կ'անցնենք:
- 10 Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են.
Ու եթէ զօրութիւնով ութսուն տարի ըլլան,
Տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է.
Վասն զի անոնք շուտով կ'անցնին, ու մենք կը
թռչինք:
- 11 Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը,
Եւ քու սրտմտութիւնդ՝ քու վախիդ Համեմատ:

- 12 Աչնպէս սորվեցուր մեզի մեր օրերը Համբել,
Որ սրտի իմաստութիւն ստանանք:
- 13 Դարձիր, ով Տէր, մինչեւ ե՞րբ.
Ու գթութիւն ըրէ քու ծառաներուդ:
- 14 Կշտացուր մեզ կանուխ քու ողորմութիւնովդ,
Որպէս զի ցնծանք եւ ուրախ ըլլանք մեր բոլոր
օրերուն մէջ:
- 15 Ուրախացուր մեզ աչն օրերուն չափովը որ
տրտմեցուցիր.
Աչն տարիներուն չափովը որ չարիք տեսանք:
- 16 Թող երեւնայ քու գործդ քու ծառաներուդ,
Եւ քու փառքդ անոնց որդիներուն:
- 17 Ու մեր Տէր Աստուծոյն վաչելութիւնը մեր
վրայ ըլլայ.
Եւ ձեռքերնուս գործը Հաստատէ մեր վրայ.
Մեր ձեռքերուն գործը Հաստատէ:

Ա Ղ Օ Թ Ք

Ո՞վ Տէր, երբ առողջութիւն կամ կեանք խնդրեմ
քեզմէ, անոր Համար է միայն որ զանոնք գործածեմ
քեզի Համար եւ քեզմով միայն: Դուն միայն գիտես
թէ ինչ է բարին ինծի Համար. ըրէ ինծի, Հայր, ինչ
որ դուն գիտես թէ լաւագոյնն է:

Թէ տաս ինծի եւ թէ առնես ինձմէ, Տէր, իմ
կամքս քու կամքիդ Հետ միացուր, եւ չնորՀք տուր
ինծի որ կատարեալ Հնազանդութեամբ եւ սուրբ վրս-
տաՀութեամբ քու չաւիտենական նախախնամութեա-
նըդ Հրամանները ընդունիմ, եւ Հաւասարապէս պաշ-
տելի թող ըլլայ ինծի՝ ինչ որ քու ձեռքէդ կուգայ,
Երեսու Քրիստոսի սիրոյն Համար — Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 10
ՍԱՂՄՈՍ 19, 1—14

- 1 Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ,
Ու երկիրն էի Հաստատութիւնը անոր ձեռքերուն
գործերը կը ցուցնէ:
- 2 Օրը օրին կը չափանէ խօսքը,
Ու գիշերը գիշերին կը ցուցնէ գիտութիւնը:
- 3 Չկայ զրոյց ու չկան խօսքեր:
Անոնց ձայնը չլսուիր:
- 4 Բայց ամէն երկիր ելաւ անոնց Հնչիւնը,
Ու մինչեւ աշխարհի ծայրը՝ անոնց խօսքը:
Անոնց մէջ արեւին Համար վրան մը կանգնեց:
- 5 Ու անիկա իր առաջատէն ելած փեսայի պէս է
Հզօր մարդու պէս իր ճամբան վաղելով կ'ուրա-
խանայ:
- 6 Անոր ելքը երկինքի ծայրէն է,
Ու անոր շրջանը մինչեւ անոնց ծայրերը,
Եւ անոր տաքութենէն բան մը չծածկուիր:
- 7 Տէրօջը օրէնքը կատարեալ է, Հոգին կը նորոգէ
Տէրօջը վկայութիւնը ճշմարիտ է, տգէտը իմաս-
տուն կ'ընէ:
- 8 Տէրօջը կանոնները շիտակ են, սիրտը կ'ուրա-
խացնեն.
Տէրօջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն
լոյս կուտան:
- 9 Տէրօջը վախը սուրբ է, չաւիտեան կը մնայ.
Տէրօջը դատաստանները ճշմարիտ ու բոլորովին
արդար են:
- 10 Ցանկալի են անոնք ոսկիէն ու շատ փորձուած
ոսկիէն.
Մեղրէն անուջ են, ու խորիսխէ կաթած մեղրէն:

- 11 Նաեւ քու ծառադ անոնցմով կը խրատուի,
Ու զանոնք պահելուն վարձքը շատ է:
- 12 Ո՞վ կրնայ միտք առնել իր չանցանքները,
Ծածուկ մեղքերէն զիս մաքրէ,
- 13 Ամբարտաւան մեղքերէն ալ պահէ քու ծառադ.
Թող անոնք ինձի չտիրեն.
Այն ատեն անմեղ կ'ըլլամ,
Ու կը մաքրուիմ մեծ անօրէնութենէ:
- 14 Բերնիս խօսքերը ու սրտիս խորհուրդը
Քու առջեւ ընդունելի ըլլան,
Ով Տէր, իմ վէճս ու փրկիչս:

ԱՂՕԹՔ

Ո՞վ Տէ՛ր, ես չեմ գիտեր թէ ինչ պէտք է խընդ-
րեմ Քեզմէ, Դուն միայն գիտես թէ ինչ են իմ պէտ-
քերս: Դուն զիս շատ աւելի կը սիրես, քան որ ես
գիտեմ թէ ինչպէս սիրելու եմ իմ անձս:

Ո՞վ Հայր, Տուր քու դուրսիդ ինչ որ ինք չգիտեր
անդամ թէ ինչպէս խնդրելու է: Ես չեմ Համարձա-
կիր Քեզմէ խնդրել խաչեր կամ սփոփանքներ, միայն
ինքզինքս քեզի կը ներկայացնեմ, նայէ ինձի եւ ըրէ
ինձի ինչ որ կուզես քու ողորմութեանդ Համեմատ:
Չարկ ինձի կամ բժշկէ զիս, տուր ինձ տառապանք
կամ տուր ինձ Հանգիստ: Ես սիրով կ'ընդունիմ Քու
բոլոր նպատակներդ, առանց զանոնք Հասկնալու:
Լուիկ կը կենամ Քու առջեւ, Հա՛յր, եւ կը նուի-
րեմ ինքզինքս Քեզի իբր պատարագ մը, կը չանձնեմ
ինքզինքս քեզի: Ուրիշ փափաք չեմ ուզեր ունենալ,
բայց միայն այն որ Քու կամքը կատարեմ:
Նայէ՛, Տէր, եւ սորվեցուր ինձի աղօթել քու
կամքիդ Համաձայն: Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 11

ՍՍՂՄՈՍ 25, 1—18

- 1 Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցի:
- 2 Ով իմ Աստուածս, քեզի չուսացաց. թող չամբընամ,
Ու թշնամիներս իմ վրաս չցնծան:
- 3 Նաեւ ամէն քեզի սպասողները թող չամբընան.
Ունայնութեամբ անօրէնութիւն ընողներ թող ամբընան:
- 4 Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծի,
Քու շաւիղներդ սորվեցուր ինծի:
- 5 Քու ճշմարտութեանդ մէջ ինծի առաջնորդէ ու սորվեցուր ինծի:
Քանզի դուն ես իմ փրկութեանս Աստուածը.
Ես քեզի կը սպասեմ ամէն օր:
- 6 Ով Տէր, քու գթութիւններդ ու ողորմութիւններդ չիչէ,
Վասն զի չաւիտենական են:
- 7 Մանկութեան մեղքերս ու չանցանքներս մի չիչէր,
Հապա քու ողորմութիւնովդ զիս չիչէ՝
Քու բարութեանդ համար, ով Տէր:
- 8 Տէրը բարի եւ ուղիղ է.
Անոր համար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան:
- 9 Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ հեղերուն,
Ու իր ճամբան հեղերուն պիտի սորվեցնէ,
- 10 Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն ու ճշմարտութիւն են
Իր ուխտը ու վկայութիւնները պահողներուն:
- 11 Ով Տէր, քու անուանդ համար

- Ներէ իմ անօրէնութիւնս, վասն զի մեծ է:
- 12 Ո՞վ է այն մարդը որ Տէրոջմէն կը վախնայ.
Անա անոր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան:
 - 13 Անոր անձը բարութեան մէջ պիտի բնակի,
Ու անոր սերունդը երկիրը պիտի ժառանդէ:
 - 14 Տէրոջը ընտանութիւնը իրմէ վախցողներուն հետ է,
Ու իր ուխտը անոնց կը սորվեցնէ:
 - 15 Իմ աչքերս ամէն ատեն Տէրոջը կը նային,
Վասն զի իմ ոտքերս որդալթէն ան պիտի հանէ:
 - 16 Ինծի դարձիր ու ողորմէ ինծի,
Վասն զի միտակ ու վշտացած եմ:
 - 17 Սրտիս նեղութիւնները շատցան.
Իմ վիշտերէս զիս հանէ:
 - 18 Իմ նեղութեանս ու տառապանքիս նայէ,
Ու բոլոր մեղքերս ներէ:

Ա Ղ Օ Թ Ք

Գոհանա՛մք զքէն Տէ՛ր Աստուած մեր, որ երեւելի լուսով քով զուարճացուցեր զամենայն արարածս քօ. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս 'ի քեզ: Զօրացո՛ւ եւ զմեզ Տէ՛ր, 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ 'ի տունջեանս չայսմիկ եւ չամենայն ժամանակի: Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ ըզհաճոյս քօ արասցուք, եւ հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն սուրբս քօ: Ծնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ եւ Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի. որում վաչելի փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 12
ՍՍ.ՂՄՈՍ 118, 1—18

- 1 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
Վասն զի անոր ողորմութիւնը չաւիտեան է:
- 2 Իսրայէլ թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնը չաւիտեան է:
- 3 Ահարոնի տունը թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնը չաւիտեան է:
- 4 Տէրոջմէ վախոյողները թող ըսեն թէ
Անոր ողորմութիւնը չաւիտեան է:
- 5 Նեղութեան մէջ Տէրոջը կանչեցի,
Եւ Տէրը պատասխան տուաւ ինծի, լաչնարձակ
տեղ մը համեղով:
- 6 Տէրը ինծի հետ է, չեմ վախնար.
Մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել:
- 7 Տէրը իմ օգնականներուս հետ մէկտեղ ինծի
հետ է,
Ու ես իմ թշնամիներուս կորուստը պիտի տեսնեմ:
- 8 Լաւ է Տէրոջը չուսալ,
Քան թէ մարդոց ապաւինիլ,
- 9 Լաւ է Տէրոջը չուսալ,
Քան թէ իշխաններուն ապաւինիլ:
- 10 Բոլոր ազգերը զիս պաշարեցին.
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 11 Իմ բոլորտիքս առին, եւ զիս պաշարեցին
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 12 Մեղուներու պէս իմ բոլորտիքս առին,
Փուշերու կրակի պէս մարեցան.
Քանզի Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 13 Սաստիկ հրեցիր զիս, որպէս զի վար ինձամ.
Բայց Տէրը օգնեց ինծի:

- 14 Տէրը իմ զօրութիւնս ու սաղմոսս է,
Ու իմ փրկութիւնս եղաւ:
- 15 Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծու-
թեան ու փրկութեան ձայն կայ.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ:
- 16 Տէրոջը աջ ձեռքը բարձր է.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ:
- 17 Պիտի չմեռնիմ, հասա պիտի ապրիմ,
Ու Տէրոջը գործերը պատմեմ:
- 18 Տէրը զիս շատ խրատեց,
Բայց մահուան չմատնեց զիս:

Ա Ղ Օ Թ Ք

Բաղումողո՛րմ Աստուած եւ Հաստիչ խաղաղու-
թեան՝ Հաստատեա՛ զանձինս մեր քոչով խաղաղու-
թեամբք, որով ունիս չիւրաքանչիւր կարգի զամե-
նայն արարածս քո՛ ուղիղ հրամանաւդ մատակարա-
րելով: Վասն զի՛ աչք իսկ է կամք քո՛ խաղաղական
եւ հոգեւոր սիրով կալ մեզ առ միմեանս, եւ սպասել
արթուն մտօք չաչանութեան միածնիդ Աստուծոյ եւ
Փրկչիդ մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում արժանա-
ւորք եղիցուք Հանդիպել ամպովք ընդ առաջ Տեառն
ջօղս. Զուարթերես կացցուք չաջմէ՛ քուծմէ՛ ընդ
սուրբս եւ ընդ սիրելիս Անուանդ քո սրբոյ. եւ ժա-
ռանդեսցուք զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի
սրբոց քոց զարքայութիւնդ: Եւ ընդ նոսին գոհանա-
լով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր եւ ամենասրբոյ
Հոգւոյդ. աչժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից.
Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 13
ԵՍԱՅԵԱՅ 51, 1—7

- 1 Ո՛վ դուք՝ արդարութեան հետեւողներ ու Տէրը փնտռողներ՝ ինծի՛ մտիկ ըրէք. դուք ան վէճին նաչեցէք, ուսկից որ կտրուեցաք, եւ ան դուրին փոսին, ուսկից որ փորուեցաք:
- 2 Ձեր հօրը ԱրբաՀամին ու ձեզ ծնանող Սարբաչին նաչեցէ՛ք. քանզի անիկա կանչեցի՛՝ որ մէկ մարդ մըն էր, եւ զանիկայ օրհնեցի ու բազմացուցի:
- 3 Վասն զի Տէրը Սիօնը պիտի մխիթարէ, անոր բոլոր աւերակները պիտի մխիթարէ. եւ անոր բոլոր անապատը Եղեմի պէս, ու անոր ամաչութիւնը Տէրոջը դրախտին պէս պիտի ընէ. անոր մէջը ցնծութիւն եւ ուրախութիւն, գովութիւն եւ օրհնութեան ձայն պիտի գտնուի:
- 4 Ո՛վ իմ ժողովուրդս՝ ինծի մտիկ ըրէ, ո՛վ իմ աղբս՝ ինծի ահանջ տուր. քանզի ինծմէ օրհնք պիտի ելլէ, եւ իմ իրաւունքս ժողովուրդներուն լոյս ըլլալու համար պիտի հաստատեմ:
- 5 Իմ արդարութիւնս մօտ է. իմ փրկութիւնս ելած է. ու իմ բազուկներս ժողովուրդները պիտի դատեն. կղզիները ինծի պիտի չուսան, եւ իմ բազուկիս պիտի ապաւինին:
- 6 Աչքերնիդ վեր վերցուցէք դէպ ՚ի երկինքը, ու վար նաչեցէք դէպ ՚ի երկիրը. քանզի երկինքը ծուխի պէս պիտի անցնի, ու երկիրը Հանդերձի պէս պիտի մաշի. նմանապէս անոր բնակիչներն ալ պիտի մեռնին. բաց իմ փրկութիւնս չաւիտենական պիտի ըլլայ, ու իմ արդարութիւնս պիտի չպակսի:

7 Ինծի՛ մտիկ ըրէք՝ ո՛վ արդարութիւն ճանչցողներ, եւ իմ օրհնքս ձեր սրտին մէջը պահող ժողովուրդ. մարդոց նախատինքէն մի՛ վախնաք, ու անոնց բամբասանքէն մի՛ զարհուրիք:

Ա Ղ Օ Թ Ք

Ո՛վ Տէր, հաստատէ իմ սրտիս մէջ ճշմարիտ հաւատք մը, մաքրագործող Յոյս մը, եւ աննման Սէր մը առ քեզ:

Տուր ինծի կատարեալ վստահութեան հողին, արթնցուր իմ մէջս բոցավառ նուիրում մը Քեզի համար, եւ խորին չարգանք մը աչն ամեն բաներուն համար որ Քեզի կը վերաբերին:

Շնորհք տուր ինծի, Տէ՛ր, որ ոեւէ գործ չընեմ որ կրնայ Քեզ վշտացնել: Տուր որ միշտ երախտագէտ հողի մը ունենամ առ Քեզ Քու բազմաթիւ շնորհացը համար:

Ո՛վ Տէր օղնէ ինծի որ իմ ընկերներուս եւ դրացիներուս հանդէպ եղբայրական սէր ունենամ, թող իմ սիրտս համակրութեամբ լեցուն ըլլայ անոնց համար, աչնպէս որ կարող ըլլամ սիրել զանոնք անձիս պէս:

Պարգեւէ ինձ Տէր, մաքուր սիրտ մը, քաջ ըրէ զիս իմ փորձութեանց դէմ մաքառելու եւ շնորհք տուր ինծի որ հաւատարմութեամբ իմ սիրոց պարտքերս կատարեմ թէ անոնց որ ինծի բարիք ըրած են եւ թէ անոնց որ ինծի չարիք հասցուցած են, Հնազանդելով Քու պատուէրիդ եւ հետեւելով Քու օրինակիդ:

Յանուն Յիսուսի կը խնդրեմ.— Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 14
ԵՍԱՅԵԱՅ 55, 1—11

- 1 Ո՛վ բոլոր ծարւածներ՝ ջուրերուն եկէք եւ ըստակ չունեցողներ՝ եկէ՛ք, ծախու առէք ու կերէ՛ք. եկէ՛ք առանց ստակի եւ առանց դնոց գինի ու կաթ ծախու առէք:
- 2 Ինչո՞ւ ձեր ստակը կը վատնէք՝ չէ թէ Հացի Համար, եւ ձեր վաստակը անանկ բանի Համար՝ որ չկշտացներ. ուշադրութեամբ ինծի մտիկ ըրէք, որ բարիքներ ուտէք, ու ձեր Հոգին պարարութեամբ զուարճանայ:
- 3 Ձեր ահանջը խոնարհեցուցէք ու ինծի եկէք. մտիկ ըրէք, ու ձեր Հոգին պիտի ապրի. եւ ձեզի Հետ չաւտենական ուխտ պիտի ընեմ, Դաւիթին մնացէն ողորմութիւնները ձեզի տալով:
- 4 Ահա զանիկայ Ժողովուրդներուն վկայ՝ ազգերուն առաջնորդ ու Հրամանատար դրի:
- 4 Ահա չը գիտցած ազգդ պիտի կանչես, եւ քեզ չճանչցող ազգերը քեզի պիտի դիմեն, քու Տէր Աստուծոյդ Համար ու Իսրայէլի Սուրբին Համար քանդի անիկայ քեզ փառաւորեց:
- 6 Տէրը փնտռեցէ՛ք, քանի որ անիկայ կը դըրնուի. զանիկայ կանչեցէ՛ք, քանի որ անիկայ մօտ է:
- 7 Թող ամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն Հրաժարի եւ Տէրոջը դառնայ, ու անիկայ պիտի ողորմի անոր. ու ձեր Աստուծոյն, ինչու որ անիկայ առատապէս կը ներէ:
- 8 Քանզի իմ խորհուրդներս ձեր խորհուրդները

- չեն, ու ձեր ճամբաները իմ ճամբաներս չեն, կ'ըսէ Տէրը.
- 9 Հապա որչափ որ երկինքը երկրէս բարձր է, այնչափ ալ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են, եւ իմ խորհուրդներս ձեր խորհուրդներէն:
 - 10 Վասն զի ինչպէս որ անձրեւը ու ձիւնը երկինքէն կ'իջնէ եւ Հոն չդառնար, Հապա երկիրը կ'ոռոզէ, ու զանիկայ պտղաբեր եւ արգասաւոր կ'ընէ, ու ցանողին Հունտ՝ եւ ուտողին Հաց կուտայ,
 - 11 Իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ. ինծի պարապ պիտի չդառնայ, Հապա իմ կամքս պիտի կատարէ, ու չաջողութեամբ ՚ի գործ դնէ ան բանը՝ որուն Համար զանիկայ խըրկեցի:

Ա Ղ Օ Թ Ք

Ամենախորդ Աստուած, Ամենաղործ Հայր մեր, Տուր մեզի կ'աղաչենք Քու շնորհքը որ կարող ըլլանք անկեղծօրէն քննել մեր սրտին խորերը, մեր գաղտնի խորհուրդները, որպէս զի տեսնենք թէ ինչ է մեր Հոգիին ներքին վիճակը Քու առջեւ, եւ որպէս զի այսուհետեւ չփորձուինք ընել ուրիշ բան որ կրնայ արատ բերել Քու անուանդ: Օգնէ մեզի Տէր որ մենք բարի գործերու մէջ չառաջ երթանք, շարունակ Քու Սուրբ կամբքիդ ծառայենք մինչեւ մեր կեանքին վերջը:

Շնորհք տուր մեզի որ մենք ճիշդ այսօր, գիտնալով թէ մեղանչած ենք Քեզի դէմ, սկսինք քալել Քու առջեւ այնպէս որպէս կը վաչելէ անոնց որ Քրիստոսով կապուած են լուսոյ Ժառանգութեան եւ երկնային օրհնութեանց: Յիսուսի սիրոյն կը խընդրենք. — Ամէն:

ՃՕՐՃ ՀԻԷՍ (1642-1715)

ԸՆԹԵՐՅՈՒՄ 15

ԵՍՍՅԵԱՅ 40, 1—12

- 1 Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք իմ ժողովուրդըս; կ'ըսէ՛ ձեր Աստուածը. Երուսաղէմին քաղցրութեամբ խօսեցէ՛ք. ու անոր կանչեցէ՛ք՝ որ անոր պատերազմելու ժամանակը լրացաւ, եւ անոր անօրէնութիւնը թողուցաւ. քանզի իր բոլոր մեղքերուն համար Տէրօջը ձեռքէն կրկին հատուցում առաւ:
- 3 Անապատի մէջ կանչողին ձայնը. Տէրօջը ճամբան պատրաստեցէ՛ք, ու ամաչութեան մէջ մեր Աստուծոյն համար շաւիղ շիտկեցէ՛ք:
- 4 Ամէն՝ ձոր պիտի բարձրանայ, եւ ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, ու ծուռը պիտի շիտկուի, եւ խորտուրորտ տեղերը հաւասար պիտի ըլլան.
- 5 Ու Տէրօջը փառքը պիտի չաչտնուի, եւ ամէն մարմին մէկտեղ գանիկայ պիտի տեսնէ. քանզի Տէրօջը բերանը խօսեցաւ:
- 6 Մէկ ձայն մը ըսաւ, կանչէ՛. ու անիկայ ըսաւ, ի՞նչ կանչեմ. Ամէն մարմին խոտ է, ու անոր բոլոր վայելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է:
- 7 Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, երբոր անոր վրայ Տէրօջը հովը կը փչէ. իրաւքընէ ժողովուրդը խոտ է:
- 8 Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի. բայց մեր Աստուծոյն խօսքը չաւիտեան պիտի մնայ:
- 9 Ելի՛ր բարձր լեռան վրայ, ո՛վ դուն՝ որ Միօնին աւետիս կը բերես. քու ձայնդ ուժով բարձրացուր, ո՛վ դուն՝ որ Երուսաղէմին աւետիս կը բերես. բարձրացուր, մի վախնար. Յուդայի քաղաքներուն ըսէ՛ Ահա՛ ձեր Աստուածը:

- 10 Ահա՛ Տէր Եհովան զօրութեամբ՝ պիտի գայ, ու անոր բազուկը իրեն համար պիտի իշխէ. ահա իր վարձքը իր հետն է, ու գործոց հատուցումը իր առջեւն է:
- 11 Անիկա հովիւի պէս իր հօտը պիտի հովուէ. դանուկները իր բազուկովը պիտի ժողվէ, ու զանոնք իր գրկացը մէջ պիտի կրէ եւ ծիծ տուողները կամաց պիտի քչէ:
- 12 Ո՞վ իր ափովը ջուրերը չափեց, ու թիզով երկինքը ծրագրեց, ու երկրիս հողը չափի մէջ ամփոփեց, եւ լեռները կշորդով, ու բլուրները կշիռքով կշռեց:

Ա Ղ Օ Թ Ք

Փարատեա՛ զցաւս եւ բժշկեա՛ զհիւանդութիւնս ՚ի ժողովրդենէ քունմէ, Տէ՛ր Աստուած մեր, եւ շնորհեա՛ ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենաչաղթ Խաչիւ քով. որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան, եւ դատապարտեցեր զթշնամին կենաց եւ փրկութեան մերոց:

Դու ես կեանք մեր եւ փրկութիւն, բարերար եւ բազումողորմ Աստուած. որ միայն կարող ես թողուլ զմեզս եւ մերժել զախտս եւ զհիւանդութիւնս ՚ի մէնջ, որում չաչտնի են պէտք կարեաց մերոց: Պարգեւիչդ բարեաց՝ պարգեւեա՛ զառատ ողորմութիւն քո ՚ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. չորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 16

ԵՍԱՅԵԱՅ 52, 1—13

- 1 Արթընցի՛ր, արթընցի՛ր, քու զօրութիւնդ Հագիր՝ ո՛վ Սիօն. քու փառաւոր Հանդերձներդ Հագիր՝ ո՛վ Երուսաղէմ սուրբ քաղաք. քանզի մէջմըն ալ անթըրիատ ու պիղծ մէկը քու մէջդ պիտի չը մտնէ:
- 2 Փոչին քեզմէ թօթվէ՛, ել նստէ՛՝ ո՛վ Երուսաղէմ. քու պարանոցիդ կապերը քակէ՛, ո՛վ Սիօնի դերի աղջիկը:
- 3 Վասն զի Տէրը աչսպէս կ'ըսէ. Ձրի ծախուեցաք, եւ առանց ստակի պիտի փրկուիք:
- 4 Քանզի Տէր Եհովան աչսպէս կ'ըսէ. Իմ Ժողովուրդս առաջ Եգիպտոս իջաւ, որ Հոն պանդըխտութիւն ընէ. ու Ասորեստանցիք առանց պատճառի անոր բռնութիւն ըրին:
- 5 Եւ Հիմա Հոս ի՞նչ ունիմ՝ կ'ըսէ Տէրը, որ իմ Ժողովուրդս պարապ տեղը քշուեցաւ. անոր վրայ իշխողները զանիկայ կը պոռացընեն, կ'ըսէ Տէրը, ու միշտ ամէն օր իմ անունս կը ՀաչՏոյուի:
- 6 Ասոր Համար իմ Ժողովուրդս պիտի գիտնայ իմ անունս. ասոր Համար ան օրուան մէջ պիտի գիտնայ, թէ ես ան եմ՝ որ կը խօսէի. ահա՛ ես եմ:
- 7 Ի՞նչ գեղեցիկ են լեռներուն վրայ անոր ոտքերը, որ աւետիս կը բերէ, խաղաղութիւն կը քարոզէ. բարութեան աւետիս կը բերէ, փրկութիւն կը քարոզէ, ու Սիօնին կ'ըսէ, Քու աստուածդ կը թագաւորէ:
- 8 Քու պահապաններդ ձայն պիտի վերցընեն, ցնծութեան ձայնով միաբերան պիտի երգեն.

քանզի երբոր Տէրը Սիօնը ետ դարձընէ, անոնք յաշտնապէս պիտի տեսնեն:

- 9 Ո՛վ Երուսաղէմի աւերակներ՝ ցնծութեան ձայնով մէկտեղ աղաղակեցէ՛ք. քանզի Տէրը իր Ժողովուրդը մխիթարեց, ու Երուսաղէմը փրկեց:
- 10 Տէրը իր սուրբ բազուկը մերկացուց բոլոր ազգաց աչքերուն առջեւը, ու երկրիս ամէն ծաշերը մեր Աստուծոյն փրկութիւնը պիտի տեսնեն:
- 11 Քաշուեցէ՛ք, քաշուեցէ՛ք, անկէ ելէ՛ք. պիղծ բանի մի՛ դպչիք. անոր մէջէն ելէ՛ք. մաքուր եղիք՝ ո՛վ Տէրոջը սպասները վերցնողներ:
- 12 Քանզի չէ՛ թէ արտորալով պիտի ելլէք, եւ չէ՛ թէ փախչելով պիտի երթաք. Հապա Տէրը ձեր առջեւէն պիտի երթայ, ու Իսրայէլին Աստուածը ձեզի թիկնապահ պիտի ըլլայ:
- 13 Ահա՛ իմ ծառաս չաջողութիւն պիտի գտնէ եւ պիտի մեծնայ, ու պիտի բարձրանայ ու խիստ պիտի փառաւորի:

Ա Ղ Օ Թ Ք

Անկեա՛լ առաջի ըր բարերար եւ բազումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք, եւ խնդրեմք զգթութիւն ՚ի քէն՝ որպէս խոստացար ծառայից քոց եւ ասացեր. «Չամենայն զոր ինչ խնդրիցէք Հաւատով ջանուն Որդուց ՚ի Հօրէ՛ տացի՛ ձեզ:»

Շնորհեա՛ եւ այժմ Հաւատացելոցս ՚ի քեզ, եւ կատարեա ՚ի բարի զխնդրուածս մեր, զի ՚ի քեզ եմք արաւինեալ:

Եւ ըր առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ ըզմեզ ՚ի կեանս չաչոսիկ. եւ առաջնորդեալ Հասո՛ ջանճառ երկնից արքայութիւնդ, ՚ի փառաբանութիւն եւ ՚ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 17
ՄԱՏԹԷՈՍ 7, 15—29

- 15 Ձգուչ կեցէք սուտ մարգարէներէն՝ որոնք ձեզի կուգան ոչխարի Հանդերձներով, բայց ներսէն չափշտակող գալլեր են:
- 16 Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուշերէն խաղող կը քաղե՞ն, կամ տատասկէն՝ թուղ:
- 17 Ասանկ ալ ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ, եւ չար ծառ չար պտուղ կուտայ:
- 18 Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ո՛չ ալ չար ծառը բարի պտուղ տալ:
- 19 Ամէն ծառ որ բարի պտուղ չտար՝ կը կտրուի ու կրակը կը ձգուի:
- 20 Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք:
- 21 Ո՛չ թէ ամէն մէկը որ ինծի Տէ՛ր Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը, Հապա անիկա որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ:
- 22 Ետտերը ան օրը ինծի պիտի ըսեն, Տէ՛ր Տէ՛ր՝ չէ՞ որ քու անունովը մարգարէութիւն ըրինք, եւ քու անունովը դեւեր Հանեցինք, ու քու անունովը շատ Հրաշքներ ըրինք:
- 23 Եւ ան ատենը անոնց չալտնապէս պիտի ըսեմ թէ ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկդի՛ դացէք թովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք:
- 24 Արդ ո՛վ որ աս իմ խօսքերս կը լսէ ու կը կատարէ անոնք, զանիկա պիտի նմանցընեմ խելացի մարդու մը՝ որ իր տունը վէճի վրայ շինեց. եւ անձրեւ իջաւ, ու գետերը վազեցին ու հովերը

- փչեցին, եւ զարկին ան տանը, ու չփլաւ. ինչու որ վէճի վրայ Հաստատուած էր:
- 26 Եւ ո՛վ որ աս իմ խօսքերս կը լսէ ու չկատարեր անոնք, կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց.
- 27 Եւ անձրեւ իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, եւ զարկին ան տանը, ու փլաւ, եւ մեծ էր անոր կործանումը:
- 28 Ու երբոր Յիսուս լընցուց աս խօսքերը, Ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ:
- 29 Ինչու որ իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու չէ՛ թէ դպիւրներուն պէս:

Ա Ղ Օ Թ Ք

Լո՛ւր ձայնից մերոց, Տէ՛ր Աստուած մեր. ընկա՛լ զաղաչանս մեր, զհամբարձուն ձեռաց մերոց՝ եւ զբանս աղօթից, սրբելով զերեկոցի պատարագս մեր՝ ՚ի Հոտ անուշից՝ ՚ի Հաճոցս քեզ պատրաստել:

Յաւե՛լ, ի մեզ Տէ՛ր ամենակալ, զՀաւատ, ըզՅոցս, զՄէր, եւ զամենայն գործս առաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց բարեպիտանք՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ, ՚ի տուէ եւ ՚ի դիչերի արժանաւորք եղիցուք չաղագս անձանց մերոց փրկութեան եւ վասն Հոգեւոր կենացդ աղաչիւ ըզքեզ, Տէ՛ր, եւ գտանել ՚ի քէն զչնորհս եւ զողորմութիւն. եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 18

ՂՈՒԿԱՍ 15, 11—22

- 11 Եւ ըսաւ, Մէկ մարդ մը երկու որդի ունէր. Ու անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ, Հայր՝ քու ստացուածքէդ ինծի ինչալու բաժինը տուր ինծի. ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը:
- 13 Եւ շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները ժողվեց ու հեռու երկիր մը գնաց, եւ հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց:
- 14 Ու երբոր ամէնը հատցուց, ան երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ, ու ինքը սկսաւ չբաւոր ըլլալ:
- 15 Եւ գնաց ան երկրին քաղաքացիներէն մէկունը քովը մտաւ. ան ալ իր ազարակը խրկեց զանիկայ՝ խոզեր արածելու համար:
- 16 Եւ կը փափաքէր խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցընելու, ու մէկը չէր տար անոր:
- 17 Եւ ինքզինքին դալով ըսաւ, Քանի բանուորներ կան իմ հօրս տունը հացով լեցուած, ու ես հոս սովամահ կը կորընչիմ:
- 18 Ելլեմ՝ երթամ իմ հօրս, եւ ըսեմ անոր, Հայր՝ մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեւդ,
- 19 Եւ ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու. զիս քու վարձկաններուդ մէկունն պէս ըրէ:
- 20 Ու ելաւ իր հօրը եկաւ. եւ դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկայ ու գուժը շարժեցաւ, եւ վազելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ, ու համբուրեց զանիկայ:
- 21 Որդին ալ ըսաւ անոր, Հայր մեղանչեցի եր-

կինքին դէմ ու քու առջեւդ, եւ ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու:

22 Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն: Հանեցէք առաջին պատմուճանը ու հագցուցէք անոր, եւ մատնի դրէք անոր ձեռքը, ու կօշիկներ անոր ոտքերը:

ԱՂՕԹՔ

Ո՛վ սրտերը քննող Աստուած, դուն մեզ կը տեսնես եւ մեզմէ աւելի աղէկ գիտես մեր ներքին կեանքը: Դուն գիտես մեր այն մեղքերը ու չանցանքները՝ որոնք մարդոց աչքերէն ծածկուած են: Սակայն, ո՛վ Տէր, մինչեւ անգամ մեր խիղճը ներսէն ձայն կուտայ եւ կը ջանդիմանէ մեզ՝ մեր մեղքերուն համար. քանզի շատ անգամ մենք թմրած եւ քնացած կը գտնուինք. շատ անգամ մարդոց հետ սիրով չենք ապրիր եւ քու առջեւդ ալ խոնարհութեամբ չենք քարեր: Ո՛հ. ով Տէր, ո՛րչափ շատ անգամ անձնասէր կ'ըլլանք մենք, եւ ինքզինքնիս իբր զոհ չենք նուիրեր քու սուրբ կամքիդ: Մենք զիտենք թէ առանց այս նուիրումին չենք կրնար խաչուիլ Քրիստոսի համար, եւ հետեւաբար չենք ալ կրնար մասնակից ըլլալ Անոր փրկութեանը:

Նայէ մեր վրայ, ո՛վ Աստուած, եւ մեր ձեռքէն բռնած վեր հանէ մեզ մեր ինկած տեղէն: Թող քու լույսը ծագի մեր սրտերուն մէջ եւ տուր, Տէր, մեզ բժշկութիւն, զօրութիւն եւ ուրախութիւն:

Հայր, տուր որ օրէ օր աճինք հաւատքի մէջ, սիրոյ մէջ. օրէ օր թող մեր սրտերն ու հոգիները դէպի երկինք բարձրանան, եւ վերջապէս միացուր ըզմեզ փրկուածներուն մեծ խումբին, որ անոնց հետ միացած՝ քու անունդ օրհնենք ու գովենք չաւիտեանս չաւիտենից. — Ամէն:

ՄԱՐԹԻՆՕ (1805-1900)

ԸՆԹԵՐՑՈՒՄ 19

ՄԱՏԹԷՈՍ 5, 1—17

- 1 Եւ տեսնելով ժողովուրդները՝ լեռը ելաւ. ու երբոր նստաւ հռն, իր աշակերտները քովը գացին.
- 2 Եւ իր բերանը բանալով կը սորվեցընէր անոնց ու կ'ըսէր,
- 3 Երանի՛ հոգևով աղքատներուն, ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է:
- 4 Երանի՛ սղաւորներուն, ինչու որ անոնք պիտի մխիթարուին:
- 5 Երանի՛ հեղերուն, ինչու որ անոնք պիտի ժառանգեն երկիրը:
- 6 Երանի՛ անոնց՝ որ անօթի ու ծարաւ են արդարութեան, ինչու որ անոնք պիտի կշտանան:
- 7 Երանի՛ ողորմածներուն, ինչու որ անոնք ուղորմութիւն պիտի գտնեն:
- 8 Երանի՛ անոնց՝ որ սրտով մաքուր են, ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած:
- 9 Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, ինչու որ Անոնք Աստուծոյ սրղիներ պիտի կոչուին:
- 10 Երանի՛ անոնց՝ որ Հալածուած են արդարութեան Համար, ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է:
- 11 Երանի՛ ձեզի՝ երբոր կը նախատեն ձեզ ու կը Հալածեն, եւ սուտ տեղը ամէն կերպ դէշ խօսքեր կը խօսին վրանիդ ինծի Համար:
- 12 Յնծայէ՛ք եւ ուրախ եղէք, ինչու որ ձեր վարձքը շատ է երկինքը. քանզի աս կերպով Հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները:
- 13 Դուք էք երկրի աղը. Հապա թէ որ աղը իր Հա-

մը կորսնցընէ, ինքը ինչո՞վ պիտի աղուի. անկէ ետեւ բանի մը չգար, միայն թէ դուրս ձգուելու եւ մարդոց ոտքին տակը կոխուելու:

- 14 Դուք էք աշխարհի լոյսը. քաղաք մը՝ որ լեռան վրայ կեցած է, չկրնար պահուիլ:
- 15 Ու ճրագը չեն վառեր եւ դներ դրրուանի տակ, Հապա աշտանակի վրայ, եւ լոյս կուտայ բոլոր տանը մէջ եղողներուն:
- 16 Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին, որ տեսնեն ձեր բարի գործքերը, ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է:
- 17 Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւրելու. չեկայ աւրելու, Հապա կատարելու:

Ա Ղ Օ Թ Ք

Տէ՛ր զօրութեանց՝ որ կամաւոր մահուամբ քով 'ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ 'ի մեռելութենէ մեզաց. եւ բեւեռեցեր զկնիք դատապարտութեան մերոյ 'ի Սաչին, եւ շնորհեցեր ազատութիւն ազգի մարդկան 'ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց՝ Հեղմամբ Արեան քոյ Սրբոյ:

Ընկա՛լ եւ այժմ զաղաչանս մեր. եւ յաջողեա՛ մեզ՝ ուղիղ Հաւատով եւ առաքինասէր վարուք՝ կեալ յայսմ աշխարհիս, եւ արժանաւոր լինել չաւիտեանական եւ երկնային ուրախութեանցն ընդ ամենայն սուրբս քո: Եւ գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր եւ Սրբոյ Հոգևոցդ. այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 20

ՀՈՌՄ . 8, 28—39

- 28 Սակայն գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն, որոնք անոր նախասահմանութեամբը կանչուած են:
- 29 Վասն զի անոնք որ առաջ կը ճանչնար, առաջուց ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու. որ անիկայ անդրանիկ ըլլալ շատ եղբայրներու մէջ:
- 30 Եւ որոնք որ առաջուց սահմանեց, նաեւ կանչեց զանոնք. եւ որոնք որ կանչեց, նաեւ արդարացուց զանոնք. եւ որոնք որ արդարացուց, նաեւ փառաւորեց զանոնք:
- 31 Ուրեմն ի՞նչ ըսենք աս բաներու համար. թէ որ Աստուած մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ:
- 32 Ան որ իր Որդւոյն չխնայեց, Հապա մեր ամենուն համար մատնեց զանիկայ, ալ ի՞նչպէս անոր հետը ամէն բաները մեզի չպարզեւեր:
- 33 Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ. Աստուած է որ կ'արդարացընէ
- 34 Ուրեմն ո՞վ է որ կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ թէ չարութիւն ալ առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաեւ մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ.
- 35 Ուրեմն ո՞վ պիտի դատէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապանքը, կամ նեղութի՞ւնը, կամ Հալածանքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտանքը, կամ սո՞ւրը.
- 36 (Ինչպէս որ գրուած է, Ամէն օր քեզի համար

կը սպաննուինք, մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք:)

- 37 Հապա աս ամէն բաներուն մէջ՝ ալ աւելի չաղթող կ'ըլլանք անով որ մեզ սիրեց:
- 38 Ինչու որ ես Հաստատ գիտեմ թէ ո՛չ մահը, եւ ո՛չ կեանքը, ու ո՛չ հրեշտակները, եւ ո՛չ իշխանութիւնները, ու ո՛չ զօրութիւնները, եւ ո՛չ ներկայ բաները, եւ ո՛չ դալու բաները,
- 39 Եւ ո՛չ բարձրութիւնը, ու ո՛չ խորունկութիւնը, եւ ո՛չ մէկ ուրիշ արարած մը կրնայ մեզ դատել Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուս մեր Տէրօջմով է:

Ա Ղ Օ Թ Ք

Առաջնորդեա՛ մեզ, Տէր Աստուած մեր, եւ ուսո՛ մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեան. պահեա՛ ի խաղաղութեան զկեանս մեր, եւ զգնացս ՚ի Հաճոց քո. Ժամանեցո՛ զՀոգեւոր եւ զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ չաւիտենական ՚ի կեանսդ. շնորհօք Միածնի քոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղև մեզ առաջնորդ կենաց եւ լոցս փրկութեան:

* * *

Հա՛յր գթութեանց, եւ Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում. լո՛ւր եւ այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ ՚ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով: Ներեա՛ եւ լուր մեզ. քաւեա՛ եւ թող զմեզս մեր. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 21
ՀՌՈՄ. 12, 9—21

- 9 Սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ, չարէն զգուերով բարիին չարելով.
- 10 Եղբայրասիրութեան մէջ իրարու վրայ գորովալից եղիք. պատուելու մէջ իրարմէ անցէք.
- 11 Չանքի մէջ թուրասիրտ չըլլաք. հոգիով բորբոքեցէք. Տէրոջը ծառայեցէք.
- 12 Յուսով ուրախ եղիք. նեղութեան մէջ Համբերեցէք. ստեպ աղօթքի կեցէք.
- 13 Սուրբերուն պիտոյիցը Հաղորդեցէք. հիւրասիրութեան ետեւէ եղիք.
- 14 Ձեզ Հալածողները օրհնեցէք. օրհնեցէք ու մի՛ անիծէք.
- 15 Խնդացողներուն Հետ խնդացէք, եւ լացողներուն Հետ լացէք.
- 16 Իրարու վրայ մի եւ նոցն խորհուրդը ունեցէք. ամբարտաւանութիւն մի ընէք, Հապա խոնարհներուն Հետ խոնարհեցէք. ինքզինքնիդ իմաստունի տեղ մի դնէք.
- 17 Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ Հատուցանէք. ամէն մարդոց առջեւ բարի բաներ ընելու հոգ տարէք:
- 18 Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց Հետ խաղաղութիւն ունեցէք:
- 19 Սիրելիք՝ վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն Համար, Հապա բարկութեան տեղ տուէք. Ինչու որ գրուած է, Վրէժխնդրութիւնը իմս է, եւ պիտի Հատուցանեմ՝ կ'ըսէ Տէրը:
- 20 Ուստի թէ որ քու թշնամիդ անօթացեր է՝ Հաց տուր անոր, եւ թէ որ ծարաւ է ջուր տուր անոր.

քանզի աս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես:

21 Չարէն մի՛ չաղթուիր, Հապա բարիով չաղթէ՛ չարին:

Ա Ղ Օ Թ Ք

Կը գոհանանք քեզմէ Բարեգութ Հայր մեր, քու անհամեմատ բարիքներուն Համար՝ որ մեզի պարգեւած ես: Ծնորհակալ ենք քու Հայրական սիրոյդ Համար, զոր մեզի յայտնած ես՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի անձովը եւ կեանքովը:

Ո՛վ Տէր, մեր ցաւերուն մէջ միտիթարութիւն կը գտնենք, եւ մեր տկարութեանցը մէջ զօրութիւն՝ երբ կ'իրականացնենք թէ Ամենակարող Հայր մը ունինք՝ որ մեզ կը սիրէ, եւ մեզի Համար հոգ ու խնամք ունի:

Սակայն ցաւով կը խոստովանինք թէ շատ անգամ կենաց փոթորկալից դէպքերու մէջ մեր աչս Հաւատքին լոյսը կ'աղօտի, ու երբեմն ալ կարծես կը մարի. այնպէս որ ինքզինքնիս խաւարին մէջ կը գըլտնենք:

Դուն որ լոյս ես, Տէր Բարեխնամ՝ լոյս տուր, կը խնդրենք, մեր Հոգիներուն որ մեզ պատող մթութեան մէջէն քու ձեռքդ տեսնենք, եւ քու ներկայութիւնդ զգանք մեր Հոգիներուն մէջ: Սովրեցուր մեզի, Հա՛յր, մանկական վստահութեամբ քեզի յանձնուիլ, եւ անվհատ մեր պարտքերը կատարել ու քու կամքիդ Հնազանդիլ, մինչեւ անգամ աչն պա՛հերուն ալ երբ մեզի անհասկնալի եւ անբացատրելի կ'երեւին քու գործերդ:

Մի՛ թողուր, Տէր, մի՛ թողուր որ շեղինք ու Հեռանանք ճշմարտութեան եւ սրբութեան ճամբաներէն, եւ օգնէ մեզի օրէ օր սիրոյ կեանքը ապրինք, եւ սուրբ ըլլանք, ու ալ աւելի սուրբ. յանուն Յիսուսի կը խնդրենք. — Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ 22

Ա. ԿՈՐՆԹ. 13, 1—11

- 1 Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ՝ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պըղինձի պէս եղայ, կամ Հնչեցող ծնծղաներու պէս:
- 2 Եւ թէ որ մարդարէութիւն ունենամ, ու Հասկընամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, եւ թէ որ ունենամ ամէն Հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ:
- 3 Եւ թէ որ իմ բոլոր ստացուածքս աղփառներուն կերցընեմ, ու իմ մարմինս աչրուելու տամ, եւ սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար:
- 4 Սէրը երկայնամիտ է, քաղցր է. սէրը չնախանձիր, սէրը չգոռոզանար, չհպարտանար,
- 5 Անվայել վարձունք չունենար, իրենը չփրնտըներ, բարկութեան չգրգռուիր, չարութիւն չը խորհիր,
- 6 Անիրաւութեան վրայ չինդար, Հապա ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ,
- 7 Ամէն բանի կը զիջանի, ամէն բանի կը Հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը Համբերէ:
- 8 Սէրը բնաւ չիջնար. բաց թէ որ մարդարէութիւնները քլամ՝ պիտի խափանեն, թէ որ լեզուներ՝ պիտի դադարին, թէ որ գիտութիւն պիտի խափանի:
- 9 Ինչու որ շատէն քիչը գիտենք՝ ու շատէն քիչը կը մարդարէանանք.
- 10 Բաց երբոր կատարեալը գայ, ան ատենը շատէն քիչը պիտի խափանի:

11 Երբոր տղայ էի՝ տղայի պէս կը խօսէի, տղայի պէս կը խորհէի, տղայի պէս Համարում ունէի. բաց երբոր այր եղայ, տղայութեան բաները մէկդի ձգեցի:

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենասուրբ Հոգիդ Աստուած, Դուն, որ կեանքիս բոլոր դէպքերուն միջոցով սրտիս դուռը կը զարնես, օգնէ ինձի որ ձայնդ լսեմ եւ ներսէն պատասխան տամ Գեղի:

Ես չեմ ուզեր որ կուրօրէն քշուիմ ու շարժիմ, ինչպէս աստղերը կը շարժին իրենց ընթացքին մէջ, ես չեմ ուզեր Քու կամքիդ Հնազանդիլ՝ առանց իմ կամքս Քեզի Հպատակեցնելու. չեմ ուզեր Քու օրէնքներդ կատարել՝ առանց իմ միտքս Համոզելու. չեմ ուզեր Քու պատուէրներդ ի գործ դնել՝ բռնի եւ ստիպմամբ: Ես կը սիրեմ ընդունիլ իմ կեանքիս բոլոր դէպքերը իբրեւ Քեզմէ եկած պարգեւներ: Ո՛վ Տէր, մինչեւ անգամ կեանքի ցաւերն ու տագնապներն ալ կ'ուզեմ ընդունիլ Քեզմէ՝ իբրեւ ծպտեալ նուէրներ, որոց մէջ բարիքներ կան պահուած:

Ո՛վ Աստուած իմ, կ'ուզեմ բանալ սիրտս Քու առջեւ ամեն ժամանակ — առտու, կէսօր եւ իրիկուն. կ'ուզեմ որ Դուն ներս գաս ու սիրտս գրաւես: Եկուր, Տէր, թէ ցաւ տաս ինձի եւ թէ ուրախութիւն, ես կ'ընդունիմ Քեզ իմ Հոգւոյս մէջ խնդութեամբ: Դուն, ո՛վ Տէր, Դուն ինձի Համար ամեն բան ես, արցունքն ու վիշտն ալ ինձի օրհնութեան կը փոխուին երբ Դուն իմ մէջս բնակիս:

Ո՛վ Աստուած, կը բանամ սիրտս, մտի՛ր, ու իմ մէջս բնակէ: Ամէն:

ՃՈՐՃ ՄԷԹԻՍԸՆ

ԸՆԹԵՐՑՈՒՄ 23

Փիլ. 2, 1—6 ԵՒ 4, 1—9

- 1 Ուստի թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ, թէ սիրոյ սփոփանք մը, թէ Հոգիի Հաղորդութիւն մը, թէ գթութիւն ու ողորմութիւն մը,
- 2 իմ ուրախութիւնս դուք լեցուցէք, նոյն խորհուրդը ունեցէք, մի եւ նոյն սէրը մէջերնիդ ունենալով, մէկ շունչ, մէկ մտածմունք.
- 3 Բան մը գրգռութիւնով կամ սնապարծութիւնով մի՛ ընէք. Հասպա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք.
- 4 Մինակ անձերնուդ ցաւը մի նայիք. Հասպա ամէն մէկը իր ընկերինն ալ:
- 5 Ձեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջն էր.
- 6 Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, չափըչտակութիւն մը չսեպեց Աստուծոյ Հաւասար ըլլալը.

- 1 Ուստի իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս՝ իմ ուրախութիւնս ու սրահս, ասանկ Հաստատուն կեցէք Տէրոջմով՝ սիրելիներս:
- 2 Եւողիպիսն կ'աղաչեմ ու Միւտիքին կ'աղաչեմ որ մի եւ նոյն խորհուրդը ունենան Տէրոջմով:
- 3 Իրաւ քեզի ալ կ'աղաչեմ իմ Հարազատ լծակիցս, դուն ալ օգնական եղիր անոնց, որոնք իմ Հետս աշխատեցան աւետարանին մէջ Կղեմեսին եւ իմ ուրիշ գործակիցներուս Հետ, որոնց անունները կենաց դրքին մէջն են:
- 4 Ուրախ եղիք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ, ուրախ եղիք:

- 5 Ձեր քաղցրութիւնը ամէն մարդոց թող չայտնի ըլլայ. Տէրը մօտ է:
- 6 Բանի մը Համար Հոգ մի ընէք. Հասպա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, դո՛ւրստութիւնով մէկտեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ չայտնի ըլլայ:
- 7 Եւ Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ:
- 8 Վերջապէս, եղբայրներ՝ ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի Համբաւով, ինչ որ առաքինութիւն եւ ինչ դովութիւն որ կայ, ան բաները խորհեցէք:
- 9 Ինչ որ սորվեցաք ու առիք եւ լսեցիք ու տեսաք իմ վրաս, ան ըրէք. եւ խաղաղութեան Աստուածը ձեր Հետը պիտի ըլլայ:

Ա Ղ Օ Թ Ք

Քրոն ամենազօր եւ չաղթող Տէրութեանդ կրկնի ամենայն ծունր չերկրպագութիւն, եւ փառաւորի չամենեցունց թագաւորութիւն քո: Նայեա՛ չերկրպագութիւնս մեր, եւ ուսո՛ մեզ առնել դարդարութիւն ճշմարտութեան: Վասն զի դու ես Աստուած խաղաղութեան, որ բարձեր զթշնամութիւն ՚ի միջոց, եւ արարեր զխաղաղութիւն չերկինս եւ չերկրի. Հեռաւորաց եւ մերձաւորաց աւետարանեցեր գնոր պարգեւս քոյին բարեացդ: Որում եւ գմեզ մեծի չնորՀացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկըրպագուս քո. Աստուած մեր եւ Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ չաւիտեանս չաւիտենից. Ամէն:

